

ԼՅՈՒՍԻ ԹԱՐԳՅՈՒԼ

ԾԱՂԱԿԱՆ



Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖЕ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

891.99

Р-33 Рирфунц "Лунсир"

Биографии .

12465

5.



91.99


8-33

ԼՅՈՒՍԻ ԹԱՐԳՅՈՒԼ

ՍՅՈՒԳՎԱՅ Է 1961 թ.

ԾԱՂԱԿԱՆ

A 27918 + 2466
8162



Л. ТАРГЮЛЬ
ЦАХКАВАН

(Повесть на армянском языке)

Армгиз, Ереван, 1948 г.

Գ Լ Ո Ի Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Հարս Սահակ Թաբրուզյանին, որի
չիթեմն անհայտ մնաց ...

1

Վարդը մնաց Մաքրուհի տուտուլի ձեռքին, ու երազն
ընդհատվեց... Սրբատաշ քարերից գողտրիկ մի տուն էր
տան առաջ՝ ծաղկավետ պարտեզ, իսկ պարտեզում թիթեռ-
ների հետևից վազվզում էին երկու երեխա: Աղջկա անունը
Միածան էր, տղայինը՝ Վահան: Ի՞նչ գողտրիկ անուն. մեկը
զենք, մյուսը՝ կամար... Հապա վա՛րդը: Այդ ի՞նչ վարդ էր,
որ դարնան մեջ տվին նրան, ու զարմանալի ճոխ էր գա-
րուներ: Ամեն ինչ շաղոտ էր, արևոտ, ապրիլն էր խայտում,
Բյուրեղյա օդից թոքերը բացվում էին սպուռնգի նման և
կյանքը թվում էր այնպե՛ս հաճելի: Մաղկած ծիրանիները
բացվել էին սպիտակ վրանների պես, ձգվում էին պարտե-
զից պարտեզ, բակից բակ ու զմրուխտ հեռաստանում ձուլ-
վում էին Մասիսի պայծառության հետ:

Թեպետ Մաքրուհի տուտուն չէր տեսել Մասիսը, սա-
կայն այդ նվիրական լեռան մասին գիտեր դեռ մանկութի:
Սանասար պապը պատմում էր, որ ջրհեղեղի ժամանակ Նոյա
տապանը եկավ ի Սիփան ասաց.

«Սիփան, ա՛ն զիս, ա՛ն զիս»:

Սիփանն ասաց.

«Գնա ի Մասիս, գնա ի Մասիս,

Որ մեծ է, քան զիս,

Որ բարձր է, քան զիս»:

տուչի դեմքը, քաշվեց վաղորդյան մշուշի նման և նա խազադ ասաց.

— Շաբաթ օրվա երազը բարին կկատարվե, թոփուզ, մեծ վարդ ձեռս տվին, վարդը ի՞նչ կնշանակե:

— Իշտե Թորոսիկդ է, որ երթանք հայրենի տուն, մանչդ կաճի, վարդի թուփի պես կաճի:

— Տաճար բերնիդ համար աստված ումբող երկար անի, Փիլիպոս աղբար,— օրհնեց Մաքրուհի տուտուն և երջանիկ հուշից լցվեցին աչքերը:

Ո՛հ, այդ արցունքներն ինչպես նման չէին մյուս արցունքներին, որ օր ու գիշեր Մաքրուհի տուտուն թափում էր հուշերից... Հուշե՛ր, որ շարունակ ճմլում էին նրա սիրտը և այդ ճմլումից աշնան եղյամը վաղաժամ իջել էր նրա սևաթուշյր մազերին... Հայրն էր, ամուսինը, եղբայրները, թաղի տղաները, քաղաքի տղաները կային, բայց մի օրում ալլևա չեղան... Նրանց գլխատեց տաճկական սուրը՝ Վիլհելմ կայսրի հորդորով սրված... Պետք չէ՛, պետք չէ՛ հիշել այդ մղձավանջը, ամբողջ Տաճկահայաստանն էր արյուն փղձկում: Ապա, նա հիշեց, ինչպես օսմանյան կառավարությունը բռնի կերպով տեղահանեց ողջ մնացած հայերին՝ դեպի աքսոր, դեպի արյունոտ անապատներ... շատ քչերը կարողացան ազատվել սոսկումի ճանկերից ու ընկան օտարության մեջ...

Աշխուժությունը ոչ միայն Մաքրուհի տուտուչին էր տիրել, այլև քաղաքի բոլոր հայերին: Նրանք բոլորը ներկարարներ էին, ջուլհակներ, մի արհեստ, որ անընդհատ կրկնումներով անցել էր պապից-պապ հասել իրենց և որպես ոսկե ապարանջան՝ շուք տվել նրանց դաստակին: Սակայն վաստակն իրենցը չէր, կյանքն ու արևը իրենցը չէր...

Մի օր նրանք նստեցին խորհրդի: Որոշեցին դիմել Հայաստանին, որ նա օգնության պարզե իր մայրական ձեռքը:

Մի անգամ, երբ Մաքրուհի տուտուն անկողնի մեջ էր, դուռն աղմուկով բացվեց և վազելուց շնչատ՝ ներս ընկավ Փիլիպոս աղբարը:

Մաքրուհի տուտուն նրա քրտնխաշ դեմքին նայելով՝ ալլալլված հարցրեց.

— Գե՞շ խաբար...

— Բերանդ խերով բաց, կնիկ:

— Կերթա՞նք, — բերկրեց Մաքրուհի տուտուն ժիր՝ աղջկա պես տեղից ցատկեկով:

— Երկու օրեն:

— Ավետարեք բերանդ պագնեմ, Փիլիպոս աղբար...

Սակայն Փիլիպոս աղբարն ալլևա չկար: Այդ գիրուկ, կարճիկ մարդը աճապարանքից գնդակի նման էր գլորվում տնից-տուն:

— Երկու՞ օրեն... Երկու՞ օրեն... հաց-մաց թխեք, անկողինը կապկպեք, — ծանուցում էր նա և առանց սպասելու մինչև լսողներն ուրախությունից ուշքի գային, արագ շրանում էր:

Եվ ելավ ծուխը երգիկներից ու տարածվեց նորաթուխ հացի անուշ հոտը:

Մաքրուհի տուտուն խմորը շաղախեց, թողեց, որ հասներ ու անցավ գործի:

Թորոսիկը փոքր էր: Նրա մանկական հոգին գարնան երկնքի պես դեռ չէր տեսել բուր-բորան, ուստի փախած հեծած նա իր խաղընկերներ՝ Բաղդիկի ու Մայրենու հետ վազվզում էր պարտիզում: Մինչդեռ մայրը ճանապարհի համար անհրաժեշտ իրերը մեկտեղելիս՝ տարվում էր քաղցր ու դառն հուշերով: Տնային իրերը, որոնք մինչ այդ կարծես առանձին նշանակություն չունեին, լեզու առած պատմում էին զանազան դեպքեր, և ահա քիչ-քիչ Մաքրուհի տուտուի տեսողության առաջ կենդանանում էին պապն ու տատը, երկու բարի՝ ծերունի, երկու խոնջա՛ծ ծերունի... Տատը պլտ-

տում էր անբաժան ճախարակը, իսկ Սանասար պապը կտավ էր գործում: Այդ ժամանակ դեռ փոքրի՛կ-փոքրի՛կ աղջիկ էր, սակայն հիշում էր նրանց համբուլըները ջե՛րմ, հեքիաթները ջե՛րմ... Պատիկ զատկին տատը կապույտ դալմաչի գրպանում շամիչ-նոխուդ էր պահում Մաքրուհու համձր, իսկ մեծ զատկին սոխի կձեպով ներկած երկու հատ հավկիթ: Կիրակի, և անպայման ամեն կիրակի Սանասար պապը հագնում էր տոնական զգեստը, ձեռքն առնում սաթի թղբեհը և Մաքրուհուն առջևը գցած՝ զնում էր ծանոթներին տեսության: Ըստ սովորության պապին պատվում էին օղիով և որպես մագա՝ առաջարկում էին ռեհաթ-լոխում: Պապն օղին խմում էր, իսկ լոխումը տալիս Մաքրուհուն...

— Ակռաներս շատ անուշ գործածելի են թափվել,— ասում էր նա:— Սա դու կեր, պսպղուն թուշեդ պագ տուր ինձ մագա...

Սիրելի՛ պապ... սիրելի՛ պապ:

Ու մի օր՝ կանաչ կիրակի, երբ Մաքրուհին պասմայից նոր շրջագգեստ հագած ուրախ-ուրախ վազեց քեռանց, տեսավ... տեսավ պապին անզլուխ. նրա կողքին սոսկումից մարել էր տատը...

Մաքրուհին սարսափած վազեց տուն, լուր հասցրեց հորն ու մորը, հավաքվեցին դուռ ու դրկից, և մեկը շուրջը նայելով՝ զգուշ շնչաց.

— Փոխաները կուզեին տունը խուզարկել, Սանասար պապը դեմ կեցավ, որովհետև շիրախանայի մեջ զենք ուներ պահած...

— Պաշտելի՛ շիրիմներ, տատ ու պապ,— հառաչեց Մաքրուհի տուտուն հիշելով բլրակին ձգված գերեզմանոցը,— ես կապրեմ և դուք իմ մեջ պիտի ապրեք այն ազատ երկնքի տակ:

Նվ ապա նա հիշեց հորը, երկայնահասակ մեծաշեն մի մարդ, որի աջ ձեռքի երեք մատները շատ ծխելուց զաֆրանի գույն էին ստացել, մինչդեռ շրթունքները, ընդհակառակն, դարձել էին կապտավուն: Նա քաղաքում հայտնի էր

ոչ միայն «մեծ ուստա» անուենով, այլ և իր ուրախ բնավորութեան համար կրում էր «սիրտբացիկ» մականունը: Ու՛րվիշտ ձեներ, նրա մոտ էր գալիս կիսելու և թեթև սրտով վերադառնում էր .ոուն: Սակայն սիրտբացիկ Պողոս աղան, որ միշտ ասում էր՝ ես մահվան երեսին ալ պիտի խնդամ, մի օրում վիշրվեց... Այդ այն օրն էր, 15 թվի օգոստոսին, երբ քաղաքի երիտասարդներին հավաքեցին Մահուդ աղայի դշւան, ապա պայթեցրին զորանոցը... Նրանց մեջն էին Պողոս աղայի երեք զավակները... Թե ի՞նչպես Մաքրուհի տուտուն կարողացավ սթափվել ահավոր վշտից և ապա թաղել խելագար հորը... Բայց մի՞թե դա սթափում էր, երբ ամեն օր էր սիրտը գալարվում... Իսկ հետո... հետո, մի սև գիշեր... ներս մտան ասկյարները, անկողնուց հանեցին Մաքրուհի տուտուլի ամուսնուն և—գայմագամը կկանչե—ասելով՝ ուզեցին տանել:

Մաքրուհի տուտուն հղի էր Թորոսիկով. նա կսկծից շոքեց սեմին, ասես ամուսնու երթը խանգարելու, իսկ ամուսինը ցույց տվեց, թե հետևում է ասկյարներին, սակայն պատուհանի մոտ անակնկալ շուռ գալով՝ հարձակվեց նրանցից մեկի վրա և բռնեց կոկորդից:

— Էլ հերի՛ք մեզ հավի պես մորթեք,—ասաց:

Բայց այդ պահին երկրորդ ասկյարը նշան բռնեց Հեթումին, և նա իրոք որ հավի պես իր արյան մեջ թպրտաց...

Օ՛, բա՛վ է, բա՛վ է, բա՛վ է, հուշեր...

Անցել են տարիներ, և Հեթումի արյունը դեռ մնացել է հուշերի մեջ: Արյուն, որ շատրվանի պես ցայտեց, ապա թանձր կաթիլներով իջավ դազգահի վրա, դուան վրա ու սեմին:

Հեթումից հետո կտավագործի դազգահի վրա բանում էր Մաքրուհի տուտուն: Մաքրոքը գցելիս նա հաճախ հիշում էր ամուսնուն: Հավիտենական դրոշմի նման՝ տախտակին կնքված արյան կաթիլներն ասում էին.

— Սիրեկան կնիկ, մանչս քեզ ամանաթ, մեծացրու.

նրան, և երբ մեծանա, թող շմոռնա հոր արյունը, հոր արյունը...

— Չի՛ մոռնա, — հանգստացնում էր Մաքրուհի տուտուն և աշխատանքը թողած, գլուխը դնում դազգահին, որին տարինե՛ր շարունակ կպել էր Հեթումի ձեռքը: Չեռք, որ այնպես վարժ բանել գիտեր ու այնպե՛ս ջերմ շոյել գիտեր...

Եվ Մաքրուհի տուտուն ծանր հուշերը ցրելու համար պարտեզ ելավ: Գարունը ծաղկել էր իր ո՛ղջ շոքրով, բայց ո՛վ գարմանք, շուներ այն հմայքը, ինչ որ գարունը՝ երազում: Օդն այնտեղ թեթև էր, արևը հաճելի, մինչդեռ այստեղ շարունակ զգացվում է օտարության դառնությունը: Ծաղիկներն իրենց մեջ կողմնակի հոտ են պարունակում, արշա՛ն հոտն է դա: Դարձյա՛լ հուշեր... Այս ի՛նչ է... այս ի՛նչ է, որ կողմը նայես՝ խամրած է գեղեցկությունը: Քաղաքը ասես ավերակ է, տներից շատերը թափուր: Հրաշքով ողջ մնացածներն աշխատում են ապրել խլուրդի նման աննկատելի: Մեկ էլ տեսար՝ նշմարեց շար աչքը ու ինչ որ պատրվակի տակ աւաց.

— Կյանքդ ինձ բաշխե:

Թորոսիկը մոր տխրամած դեմքը տեսնելով՝ թողեց խաղը:

— Ինչո՞ւ կուլաս, մայրիկ...

Մաքրուհի տուտուն պատասխանի փոխարեն բռնեց տղայի ձեռքը ու հրաժեշտի վերջին քայլերով անցավ պարտեզ, մրմուռով նայեց ածուները, կարծես տեսավ տատին ու պապին, հորը տեսավ ծառերը մշակելիս, տպա մտավ մառանը, ահա մոր խմորի տաշտը, ալյուրի մաղը, մոր ձեռները տեսավ՝ խմորը գնդելիս...

Օհ, ինչբա՛ն, ինչբա՛ն սիրելի դեմքեր կային, և այլևս չկան... Ու մեծ գերդաստանից մնացած միակը՝ Մաքրուհին, այսօր խնդումով թողնում է օտարությունը՝ հետը տանելով սիրելիներին, որպես հուշ, որ այնտե՛ղ նրանք մանկանան Թորոսիկի մեջ... Թորոսիկի մեջ...

— Ուրախությունն կխենթանամ, ուրախությունն կխենթանամ,—ասում էին ներդադրի պատրաստվողները:

Եվ արդարն հնարավոր չէր զսպել երջանկությունը, որ բխում էր դարավոր տառապանքներից հետո ձեռք բերված երանությամբ: Հողմը աշխարհիս ո՞ր անկյունը չէր նետել տարագիր հայերին, մինչդեռ այսօր նրանք խմբվում էին՝ հայրենիք վերադառնալու...

Հայրենիք, օ՛հ, սուրբ անուն, օտար երկրի տակ ինչքան մահացան, մրմնջալով այդ անունը... և այժմ սև հողն է նրանց խորթ մոր նման դժկամությամբ տեղ տվել կիրճերի, ձորերի ու խանձված անապատների եղերքին:

Բայց ոչինչ, կգա, շուտով կգա երջանիկ օրը, երբ բռնի խլված հողը նորից կդառնա մայր Հայաստան... Փիլիպոս աղբարը հրավիրեց դրկիցներին, նրանց հետ իջավ մաղազան և, չնայած գարնան խաղաղ երեկոյին, փակեց լուսամտաները, որ ձայնը դուրս շեներ ու սկսվեց հրաժեշտի խնջույքը:

— Այսօրվանից մենք մեզ կզգանք մեր մայրենի հողի վրա,—ասաց նա,—խինդով սկսենք օրը, որ մեր կյանքը խինդով շարունակվի: Մենք կերթանք այնտեղ ուր պատրաստ է սեղանը, սակայն մենք մեր լուսման պիտի մտցնենք, որ իրավունք ստանանք բարիք՝ վայելելու:

— Էֆերիմ, Փիլիպոս աղբար,—ձայնեցին սեղանակիցները:

— Վաթսուն տարեկան եմ,—հուզված շարունակեց Փիլիպոս աղբարը,—այսօր ահա իմ վաթսուն տարվա վրա խաչ կդնեմ, որ նոր ծնունդ առնեմ: Գինու կուժը ինձ տվեք, մկրտեցեք ինձ ու այսօրվանից ինձ կոչեցեք Մանուկ-Փիլիպոս:

— Թե խոսքը մկրտվելուն հասնի՝ մենք ամենքս էլ այսօր նորածին ենք,— ձայնեցին ընկերները:— Փոխանակ գինին այստեղ բերելու, ավելի աղեկ չէ՞, մենք շիրախանան մտնենք:

Եվ արդարև, սեղանակիցները ոտքի ելան ու Մանուկ-Փիլիպոսի հետ իջան ներքնահարկ, բացին ծեփած կարասը, եղեգնյա խողովակով բաշեցին գինին ու իրենք էլ շնկատեցին՝ ինչպես ձկուլթը ձկուլթի տված՝ սկսեցին պարը:

Մանուկ-Փիլիպոսը լայն շալվարի գրպանից հանեց կարմիր թաշկինակը:

— Գլոնդ բաշի, տեղդ բաշխիր,— ասաց նա, պատանու աշխուժությամբ գետին զարնելով ծնկները:

Եվ թնդաց պարը նոր թափով ու հնչեց երգը նոր երանգով: Մոռացան ահը, վառվեցին մոմերը տասնյակներով: Լուսավորվեցին մութ անկյունները: Հարսանիք էր կատարյալ, ուր բոլորն էին հարս, բոլորը փեսա:

— Վաթան կերթանք...

Մանուկ-Փիլիպոսը պարի կեսին հանկարծ սթափվեց: Թախիծը թա՛նձր մուժի պես իջավ նրա աչքերին:

— Լցրեք կթխաները պոնկե-պոռուկ,— ասաց նա և հուզումից դողաց ձայնը:— Խմենք մեր բոլոր նվիրական շիրիմներու հիշատակին:

Խորհրդավոր լուսնյան մեջ մոմերի շարժում լույսի տակ գգվեցին գավաթները միմյանց հետ ու դատարկվեցին մինչև վերջին կաթիլը:

— Մեր հարազատների շիրիմներու հիշատակին:

Կանաչք անկյուններում փղձկացին:

— Գեթ այսօր ձեր արցունքները պահեցեք,— զգացված նկատեցին տղամարդիկ:

— Ո՛չ, թող լան, թող լան,— ընդհատեց Մաքրուհի տուտուն:— Արյունոտ արցունքները թող այստեղ թողնեն, որ թեթև մտնեն հայրենի տուն:

Աքլորականչին, երբ այգեմիջյան ճանապարհներով հեռացան հյուրերը, Մանուկ-Փիլիպոսը տանից հանեց մի փոք-

րիկ կապոց, ապա հանդիսավոր դանդաղութեամբ անցավ ներսի սենյակը, որտեղ գրված էր հայրենիքից հետը բերած մանկան . օրորոց... Օրորոցի կոթից դեռ կախված էր խխունջի պատյաններից շարված շխշխկիկը... Փոշին այդ օրորոցի վրա նստել էր մատի հաստութեամբ, որն ապացուց էր, թե այդ տանը վաղուց մանուկ չէր օրորվել: Այո, չէր օրորվել, որովհետև թշնամին մորթել էր նրան ու խելագարված մայրը բլրակից նետվել էր ձորը...

Այն ժամանակ Փիլիպոսը, դեռևս տեսքով երիտասարդ, հեծում էր բանտում, իր նման հարչուերավորների հետ, որպես «զենքի հետ խաղացող գյավուր...» Ութը թվին հուրիաթ եղավ. նա ազատվեց կալանքից և երբ ուրախ վազեց տուն, տանը ոչ ոքի չգտավ:

Փիլիպոսը հուշերով տարված, գրկեց թափուր օրորոցը և լացեց հայրական արցունքներով:

Երբ հայրական կարոտը պոռթկում էր նրա մեջ, ու պոռթկում էր հաճախ, նա հուզումից գողացող ոտներով մտնում էր փոքր սենյակը, նայում օրորոցին, բայց չէր մոտենում... Մոտենալը նշանակում էր հիասթափվել, ուստի նայում էր հեռվից, որպես երազի... Օրորոցի կողքին հանդուր էր Թեֆարիկի բարձը, կարծես մալր դե որդի գրկել էին իրար ու քնել խաղաղ...

Փիլիպոսը նրանց նինջը շխանդարելու համար հուշիկ հեռանում էր և այդ օրը կտավ գործելիս հարբածի պես էր օրորվում դադգահի առաջ, մինչև որ գլուխը կախվում էր կրծքին ու գլորվում էին արցունքները:

Տղամարդու արցունք, կապարից էլ ծա՛նր...

Բարեկամները տեսնելով Փիլիպոսի տանջանքները՝ հորդորում էին նրան ամուսնանալ, որպեսզի նոր ընտանիքը մոռացութեան տա հնի կսկիծը: Սակայն երիտասարդ սրբին բոլորին էլ մերժումով էր ճամփու դնում: Թեֆարիկը նրա համար շա՛տ էր նվիրական, որ կարողանար չվայելած կնոջ

հուշերով լի տունը հանձնել երկրորդին: Ու օտարութեան մեջ մնաց միայնակ... Օրն ի բուն աշխատում էր, փողի մեծ մասը բաժանում աղքատներին, որ բարի հիշեին իր Թեֆարիկին...

— Թեֆար ջան, յավրուր, ամսոս որ հայրենիք կերթամ տոանց քեզ ու մանչուկիս,—մրմնջաց նա ու հիշեց տաճկահայերի շարդն ու ավերը, ապա պատկերացրեց այն բոպեն, երբ նա գործունյա մարդու քայլերով մտավ ցախատուն: Չորացած տերևները, որ աշնանն ավլում էին ու գործածում որպես թոնրի կաշան, կուտակեց դրան մոտ և քաշեց լուցկիին:

— Տուն շինեցի, որ մանչս մեծնար, վայելեր, դեհ, որ իմը շեղավ, դուշմանին էլ թող շմնա,—վրեժխնդիր ժպտաց նա ու հայրենական տունը իր ամբողջ գույքով հանձնեց կրակին:

— Ահավասիկ:

Օձագալար բոցերը քամուց հրահրված ձեռների նման պարզեցին երկինք՝ ու Փիլիպոս ախպարը իր նման հազարավորների հետ դիմեց օտարութեան...

Բլրակի ստորոտին նրան սպասում էր հայրենիք ներգաղթողների մեծ քարավանը:

Երբ վերջացավ ցամաքը, նրանք նստեցին նավ ու մտան քաց ծով: Փոթորիկ էր, փոթորիկ էր... բայց այդ նրանց շէր սարսեցնում, քանի որ փոթորկի միջով գնում էին դեպի տուն, միայն թե շո՛ւտ... միայն թե շո՛ւտ-ո՛ւտ կտրեին մղոնները, շէ՛ որ յուրաքանչյուր անցած մղոնը նրանց հեռացնում էր տարագրութեան դառնութեանից ու մոտեցնում երջանկության:

Անցան օրեր—մեկ, երկու, երեք, Տաճկաստանի հետ կապված ծանր ապրումները մնացին հեռավորութեան վրա: Փոխարենը նշմարվեցին զմրուխտ ափեր, ցարասենու զանգրազիսակ անտառներ, անտառներում՝ պայծառ տներ ու որքա՛ն արև. արև թովիչ. ջերմ, շոյո՞ղ... Ահա և հույսի հանգրըվանը՝ Բաթումը... բայց այն ի՞նչ հոծ բազմութուն է նավահանգստում. ինչո՞ւ են մարդիկ այդպես խոնավել ու ալիքների պես հորձանք տալիս դեպի խարսխվող նավը:

— Մեզ դիմավորելու են եկել, Մաքրուհի, — երանությունից կցկտուր թոթովեց Մանուկ-Փիլիպոսը:

— Ի՞նչ կրսես... ի՞նչ կրսես...

Եվ արդարև գալարափողոնների սրտոտ հնչյունների տակ նավ նետվեցին ծաղիկներ, ծաղկեփնջեր: Ապա մարդիկ անհամբերությունից իրար հրելով՝ բարձրացան, գրկախառնվեցին, արտասովեցին:

Դիմավորողները խոսում էին բազմալեզու. աջարներ, ռուսներ, վրացի, հայեր. հայեր... և ուրախ էին ամենքը՝ աջար, արխազ, ռուս, վրացի, որ սրից-հրից փրկվել էին հայերը և գալիս էին ահա իրենց եղբայրական գերկը:

— Բարի՛ գալուստ, բարի՛ գալուստ:

Ի՞նչ փուլթ, թե ներգաղթողները չէին հասկանում ալլոց լեզուն, սակայն զգում էին այդ լեզվի հմայքն ու ջերմությունը. նրանց այդ էր պետք, որ սպիանային վերքերը...

Դիմավորողները պատկառանքով մի կողմ քաշվեցին և ահա մի խումբ պատգամավորների հետ նավ ելավ բարձրահասակ, գեղանձնյա մի տղամարդ:

— Հայաստանի մե՛ծը... Հայաստանի մե՛ծը... անցավ շշուկը բերանից-բերան ու հայրենադարձների դեմքը ողողվեց խինդով...

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահը սեղմեց Մանուկ-Փիլիպոսի, Մաքրուհի տուտուլի և ալլոց ձեռները ու թավշյա ձայնով, որը դողում էր հուզումից, ասաց.

— Բարի գալուստ մեր քույրերին և եղբայրներին... Հայերը միշտ աշնան տերևի պես հողմից բռնված շաղ են եկել աշխարհովը. մեկ, մինչդեռ այսօր՝ պատմության մեջ առաջին անգամը լինելով, աստանդակները վերադառնում են հայրենի տուն՝ Սովետական Հայաստան...

— Կեցցե՛՛ Ստալինը... բացազանչեց Մանուկ-Փիլիպոսը, և նրան անմիջապես ձայնակցեցին հարյուրավոր կողորդներ:

— Հայաստանի աշխատավորությունը գրկաբաց սպասում է ձեզ, սովետական նոր քաղաքացիներ...

Բոպեն շատ էր հուզվել...

Գ Լ Ո Ւ Թ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

1

Անցել էին տարիներ: Թորոսիկն արդեն պատանի էր, ու նրա դեմքին գարնան առաջին ծիլի նման աճում էր աղվամազը: Երբ նա խոսում էր, Մայրենին ծիծաղում էր.

— Այա ի՞նչ խորոզ կկանչե...

Թեպետ Թորոսիկն ընկերուհու կատակից վիրավորվում էր, սակայն ներքուստ ուրախ էր, որ իր վրա այլևս չէին նայում որպես փոքրիկի: Նա ուզում էր շուտ մեծանալ, դառնալ մորը հովանի: Նա գիտեր, որ մայրը հին հայրենիքում տարել էր անլուր տառապանք: Այդ այստեղ էր կյանք ստացել Մաղկավանի անվանի ջուլհակուհին:

Մաղկավան... ծաղկած ավան... Թորոսիկը մի պահ փակեց աչքերը, հիշելու համար այն վայրը, որ հիմա կոչվում է Մաղկավան: Թեպետ այն ժամանակ նա դեռ փոքր էր, բայց լավ էր մտաբերում քարերը, տատասկները և ամալի դարուփոսը: Տեղը անհրապույր էր, սակայն բարձրից նայում էր մայրաքաղաքին. օդասոււն էր և, որ գլխավորն է, իսկական պատկերի պես դեմը կանգնել էր Մասիսը, Արագածը, Արալի լյառը, ու ինքը, վայրը ամբողջովին ասում էր, որ ինքը Հայաստանն է:

Երբ նրանք երկա՛ր ու հոգնեցնող ճանապարհորդությունից հետո իջան նավից, նրանց դիմավորեցին Հայաստանից եկած աշխատավորները՝ ծաղիկներով:

Մաքրուհի տուտուն տեսնելով կարմիր վարդը՝ իսկույն հիշեց երազը: Բայց մի՞թե սա ևս երազի շարունակությունը չէ, որ նա նայում է հայրենիքի զավակներին, զգում հայրենի ծաղկի բույրը... Սակայն ավելի ազդեցիկը հետո էր, երբ գնացքը մտավ Արարատյան դաշտավայրը, ու այդաբացի ծիրանու միջից հանկարծ գծագրվեց Մասիսն իր ո՞ղջ վեհությամբ... Մանուկ-Փիլիպոսն ու Մաքրուհի տուտուն աշխատեցին զսպել բերկրանքի արցունքները, սակայն ըսպեն շատ էր հուզիչ... շատ էր հուզիչ... Ու լալիս էին ոչ միայն նրանք, այլ և պատանիները... Ամենքի ոտքի տակ հողն էր հաստատ հայրենի, իսկ գլխավերևում՝ ազատ երկինք, ազատ արև...

Վարդը մնաց Մաքրուհի տուտույի ձեռքին, բայց այլև չընդհատվեց երազը՝ երազը փոխված էր իրականության:

— Ասում էի, չէ՞, որ Հայաստանը մայր է, իսկ մայրը գրկաբաց կընդունի իր պանդուխտ զավակներուն, — խայտում էր մանկացած Մանուկ-Փիլիպոսը, — առաջին բահը ես պիտի զարնեմ, առաջին քարը ես պիտի դնեմ մեր ավանի:

Հիմնադրման հանդեսին եկած կառավարության անդամները հանեցին գլխարկները և Մանուկ-Փիլիպոսը սուր բահով պատռեց հողի կուրծքը: Հովը շարաճճի թոռնիկի նման խաղում էր նրա սպիտակ մազերի հետ, շաղ տալով դեմքին, իսկ դեմքից քրտինքը բարակ շիթերով կաթում էր, թրջելով հայրենի հողը:

Փչեցին շեփորները գալարափողերի հետ մեկտեղ, և կարմիր տուֆի անկյունում դրված արծաթյա տախտակը Մաղկավանի հիմնադրման մասին՝ հանդիսավոր իջավ հողի մեջ:

Եվ ապա, կարծես երազի մեջ, իրար հետևից բարձրացան սրբատաշ քարերից գողտրիկ տներ: Զգվեցին լա՛յն փողոցներ: Խոխոջաց ջուրը նախկին տափաստանում: Տներին կից դալարեցին պարտեզները, և շեփորների պես բարձրացան քարդինները՝ գովերգելու ավանը: °

Ապա դարձյալ, կարծես երազում, աճեցին մանկիկներն ու աղջիկները:

Թորոսիկն ու Մայրենին նստել էին փշատենու տակ ու կարդում էին, սակայն, ո՞վ զարմանք, ընթերցումից բան չէին հասկանում: Նրանց ուշադրությունը ցրում էր գարունը: Մաղկափթիթ խնձորենին, գլխին պսած սպիտակ մեծ քող՝ օրորվում էր, շորորում, ասես շարժում էր նազիկ թևերը՝ կաքավելու հարսի ամոթխած պարը... Իսկ քիչ հեռու քնքո՛ւյշ-քնքո՛ւյշ շփումով յասամանն էր դողդողում. նա իր բուրավետ գիրկն էր բացել զեփյուռին....

Մայրենին կենտրոնանալու համար պառկեց երեսը դեպի գետին, նորից վերցրեց օրաթերթը, սակայն այդ ո՞վ էր այդպես խանդավառ տզզում նրա ականջին: Բզեզն էր, մայիսյան բզեզը. նա իր շեկ ընկերուհու հետ դուրս էր եկել զբոսանքի, ու նրա թևերը ծիածանի պես էին փողփողում:

Յասամանի բուրումից, արևից, զեփյուռից կոկոն Մայրենին բացվեց ծաղկի նման, ու աղջկա մեջ հանկարծ զարթնեց կինը... Անծանոթ հույզերից շփոթված՝ նա ուզեց Թորոսիկին ինչ որ ասել, դողաց ձայնը... Կամեցավ նայել իր մանկության ընկերոջը՝ ինչպես միշտ համարձակ, բայց դեմը կարծես այլ Թորոսիկ տեսնելով՝ փախցրեց հայացքը և թերթը թողնելով՝ փախավ, իջավ ձորակը:

Թորոսիկն ուզեց վազել նրա հետևից, սակայն ինչ որ ուժ նրան պահեց. այդպես լա՛վ է, Մայրենին թող հեռանա, որ նա ազատ անձնատուր լինի իր նոր խոհերին:

Նո՛ր խոհեր... Այդ ե՛րբ եկան, տիրեցին պատանուն: Յասամա՛նը բերեց, թռչունի ե՛րզը, թե՛ զարունը, որ այդպե՛ս առատորեն սեր էր շուպլել թևավորներին ու մարդկանց:

Ու մի անծանոթ, անուշ թախիծ պարուրեց Թորոսիկին: Մաքրուհի տուտուն գլուխը պատուհանից հանելով՝ ձայն տվեց.

— Կերակուրը պատրաստ է, մանչա:

Թորոսիկը քալերը մեքենաբար ուղղեց դեպի տուն:



Տունը, որ երազում տեսած սրբատաշ քարերից շինել էր Մաքրուհի տուտուն, հաճելի տեսք ուներ, լայն պատուհաններից ներս խաղացող արևը, լուսամուտներին խնդացող թաղարավոր ծաղիկները, զարմանալի մաքրությունը, սեղանի ձյունաթույր սիւռոցը, փայլուն հատակը բնակարանին տալիս էին զվարթ տրամադրություն: Սենյակի ճակատը, ըստ սովորության, կտրված էր սեղրով, բարձերին քաշված էին սպիտակ ծածկոցներ, ասեղնադործ ժանյակներով երիզված, որ ազատ ժամերին գործել էր Մաքրուհի տուտուն՝ շխնայելով աչքերը:

Ներքին սանդուխքը սեղանատնից տանում էր վերին հարկ, որտեղ ննջարանն էր ու երրորդ սենյակը: Այդ սենյակը Մաքրուհի տուտուն նկատի ուներ որպես Թորոսիկի ամուսնական առազաստ: Ինչ նոր, թանկարժեք իր որ անում էր, տանում էր այդ սենյակը՝ մրմնջալով:

— Մանչիս համար... հարսնիկիս համար:

Թե ո՞վ էր լինելու հարսը՝ մայրը չգիտեր, բայց ցանկանում էր, որ աղջիկը լիներ ոչ միայն տեսքով, այլ և պարկեշտ և հարգեր մեծերին...

Պատշգամբից երևում էր սքանչելի մի պատկեր. Արարայան դաշտավայրի ճոխ բնությունն էր դա: Երբ Մաքրուհի տուտուն նայում էր շուրջը, հպարտանում էր իր ծաղկած երկրի համար. այդ նախկին կիսավեր, քաղցած, որբերի երկիրն էր փարթամացել իր բնության պես: Ինչքա՞ն նոր շեներ, ավաններ, գյուղեր... Դեմը հավերժական Մասիսն էր, նրա կապույտ ստորոտին փայլուն ժապավենի պես դծագրվում էր Արաքսը, իսկ երբ Մաքրուհի տուտուն նայում էր հակառակ կողմը՝ տեքնում էր Արայի լեռը. Արան, որ կռվել էր իր ազգի ու ընտանեկան պատվի համար... Սարի դագաթը ցածրանում էր, կարծես ստանում սրտի ձև: Վիրավոր էր այդ սիրտը, բայց հպարտ իր վերքով, քանի որ ատաբորբոք Շամիրամը շկարողացավ այնտեղից վանել հայոց տիկնոջը՝ Նվարդ թագուհուն:

Մաքրուհի տուտուհի հայացքը Արայի լեռից անցավ դե-

պի Արագածը, ապա կանգ առաւ իրենց ավանի վրա, որը աճել էր, հասել բլրակի ստորտը և այս է, միանալու էր մայրաքաղաքին, իսկ մայրաքաղաքը, տե՛ս, որտեղ է հասել. մի ծայրը բարձունքի այգիների մեջ, մյուսը գնում, կտրում է երկաթգիծը ու անցնում հեռո՛ւն հեռուն...

Երբ քանհինգ թվին նրանք ներգաղթեցին, այդ քաղաքն այնպե՛ս խղճուկ էր, այնպե՛ս կավաշեն... Տները վիչում էին ծերությունից, հետո՛ հետզհետե կծկվեց, կարծես գետնի տակ անցավ հին քաղաքը ու տեղը կանգնեց նորը, շքնաղբ:

Կյանքը բարեկեցիկ էր, երկինքն՝ անամպ... Դրսում լսում էին այդ ամենի մասին ու ներգաղթում էին նորանոր հայեր՝ իրենց նախկին բնակավայրերի անունով կառուցում ավաններ:

Մթնեց: Աստղերը երկնքից կարծես հանկարծ լցվեցին ձորը ու ձգվեցին հարդագողի ճանապարհով... Այդ մայրաքաղաքի անթիվ լույսերը վառվեցին: Մաքրուհի տուտուն նայում էր այնպես հափշտակված, որ ասես առաջին անգամն էր նկատում այդ գեղեցկութունը:

Մասիսի գլխին արծաթե թասի նման իշավ աստղազարդ դիշերը. լիալուսինը կանգնեց Ծաղկավանի վրա, ջրերի երեսին շողեց իր ցոլքը, ծաղիկներին մաղթեց.

— Չեզ բարի գիշեր...

Իսկ սիրատուչոր պատանիներին դուրս հանեց տներից:

Նստել էր Թորոսիկը սալորենու տակ, ու դող կար նրա մարմնում: Այդ ի՞նչ զարմանալի դող էր, որ առավոտից սողոսկել էր նրա մեջ ու փոխանակ մրսեցնելու՝ այրում էր կրակի նման:

Նորեկ խոհեր, անծանոթ դող... Դեռ նրա ձեռքին էր Մայրենու թերթը, որ նա թողեց ու փախավ: Թի ինչո՞ւ էր նա բռնել թերթը՝ չդիտեր, միայն զգում էր, որ այդ սովորական թուղթը նոր իմաստ էր ստացել նրա համար:

Հանգավ դեմի տան լույսը, և աստղերի ցոլքի տակ պատուհանում գծագրվեց կանացի մի գլուխ... Սյուրբը տարու-

բերում էր Տոխ վարսերն այդ աղջկա, որոնք հյուսքերից անհնազանդորեն դուրս պրծած՝ զսպանակների պես գալալովում էին ճակատի վրա. աղջիկն անշարժ էր իր արձանային դիրքի մեջ. նա ձեռքը դարձրել էր ծնոտին հենարան, նայում լուսնկային, խորհում էր ու խորհում: Կուսնի կաթնառատ շողերի տակ վեհություն էր ու խաղաղություն. մեղմ խոխոջում էր բարակիկ առուն:

Հոգեպարար լուսթյան մեջ լավեց մի ձայն. Մայրենին էր երգում...

Թորոսիկը հուշիկ մոտեցավ պատուհանին: Նա լսում էր երգը, ու ջերմ հնչյուններից ուռչում էր սիրտը, դեմ առնում կոկորդին:

Մաքրուհի տուտուն պատրաստեց տղայի անկողինը և զո՛ւր սպասեց նրան... Թորոսիկը գլխաբաց շրջում էր հովտում, ու մայիսյան ցողը սիրտ արցունքի պես իջնում էր նրա սեպագանգուր, բաց գլխին...

2

Այգաբացին կանայք ելան, կթեցին կովերը, ավելցին քակն ու դուռը, երեխաներին ուղարկեցին դպրոց ու գնացին աշխատանքի:

Առաջինը, ինչպես միշտ, Մաքրուհի տուտուն գործի գրեց դազգահը, ապա սկսեց Թագուհին, Իսկուհին, Համասփյուռը, Հաջիվարզը, Կուսինը, Վերժինը: Պատի տակ շարքով նստած կանայք հանդիսավորությամբ պատեցին ճախարակները, և ջուհականոցը շնչեց իր ողջ կարողությամբ:

Մաքրճիբերի թոխքներից, ոտնածայրերի շխշիկոցից, ճախարակների ախորժալուր երգից կենդանացավ աշխատավայրը: Կարինեն ու Սերինեն միջաթել փաթաթողներից գրգերով վերցնում էին մասուրները, բերում դատարկները, և դազգահների վրա ասպերի ու սանրերի միջով հոսող թելը գառնում էր ծաղկավոր կտոր:

Յեխի վարպետ Մանուկ-Փիլիպոսը իր գործն իմացող

մարդու հմտութեամբ նայում էր արտագրվող կտորներին և փոքրիկ արատ նկատելուն պես հանդիմանում ջուլհակին:

— Էշի քթին վա՛րդ կբռնես... Մեր արտելի անուշը խայտառակե՛լ կուզես... Ինձ մենակ ձեռներուդ արագութեամբ պետք չէ, մաքուր գործ էլ է պետք: Դո՛ւն, հանգուցի վրա կբնե՛ս... րոպեի հարգ չգիտցողը օրվա հարգն էլ չի հմանա:

Դիտողութունները պատկանում էին նորուս ջուլհակներին, որոնք տարեցների զավակներն էին: Մտղներն աշխատում էին վարժ ու լարված: Նրանցից շատերը շուրջ քառասուն տարվա մանուսագործներ էին ու հանդիսանում էին տնայնագործ արտելի հիմնադիրները, որը կազմակերպվեց ներգաղթից հետո՝ առաջին տարին: Դա Հայաստանի ամենախոշոր արտելն էր ու թողնում էր գործարանի տպավորություն:

Մտղկավանի կտորը իր որակով ու ազնվությամբ մըրցում էր բոլոր արտելների հետ, և ամբողջ տասնհինգ տարի էր, ինչ առաջնութունը չէր զիջում ոչ-որի:

— Երկնքեն թափի, գետնեն ժողվեք,— գոհունակությամբ ասում էր Մանուկ-Փիլիպոսը իր ցեխի աշխատողներին,— որ ֆեսս գլխիս կպահեք:

— Դու էլ շատ ապրես, շատ խնդաս,— նույն եղանակով պատասխանում էին ջուլհակները:— Դու, որ խոր ծերութեան մեջ դադար չգիտես՝ մենք էլ քո պատիվը կպահենք:

Եվ արդարև այնքան հուզիչ էր նրանց սերը դեպի աշխատանքը:

Կսկիծն ու վերքը, որ միշտ տքացել էր նրանց մեջ արտորների, կոտորածների հետևանքով, խաղաղ պայմաններում սպիացել էր արդեն. բարեկեցիկ կյանքը՝ զարգարված երեխաներով՝ երանութեամբ էր լցրել նրանց, ու նրանք կամենում էին իրենց աշխատանքով շնորհակալ լինել այդ եր-

շանկութեան համար: Ուստի մայրերը, շնայած իրենց զա-
վակներին հորդորներին, թե՛ բավ է դատել, ժամանակն է,
որ հանգստանաք, մերժում էին, ասելով:

— Սա պետութեանը շի ախորժում ճրիակներն են. այն-
պես չէ՞, Հայկան:

Հայկանը ավանի առաջին կոմերիտուհին էր: Նա հաղ-
թեց նահապետական ծնողների դիմադրութեանը և ճանա-
պարհ բացեց մշուսներին: Նրա թուխ դեմքը խոհունութեամբ
լեցուն, նրա լեզուն, սուր ու համարձակ, կազմվածքը թե-
պետ քնքուշ, սահայն շարժումներն առնական, արտելում և
դրսում հեշտութեամբ համակրանք էին շահում:

Բաղդիկը մինչ ականջները սիրահարվեց Հայկանին:
Ամուսնացան: Ունեցան երեք զավակ: Հայկանը շթողեց ար-
տադրութեանը, ընդհակառակն, առաջ քաշվեց, նշանակվեց
մեքենայացված ջուլհականոցի ցեխի վարիչ, ապա մտավ
կոմհամալսարան: Երկու տարի անց նա կրկին վերադարձավ
Ծաղկավան, արդեն որպես արտելի պարտկազմակերպության
քարտուղար:

Բաղդիկը, կարծես մրցելով կնոջ ընդունակութունների
հետ, հայտաբերեց կազմակերպչական ուժեղ շիղ և որպես
մանուսագործութեան լավ իմացող, նշանակվեց արտելի նա-
խագահ:

Աշխատանքի մեջ խստապահանջ էր և Թորոսիկը, թե-
պետ նրա դեմքն այնքան մեղմ էր ու դեռ այնքան պատա-
նի: Նա Մանուկ-Փիլիպոսի պատրաստած կադրն էր. ծերու-
նին ցանկանում էր իր տարիների փորձն ու հմտութեանը
տալ իր արժանավոր աշակերտին, դարձնելով նրան առաջ-
նակարգ վարպետ:

Եվ արդարև, Թորոսիկը գիտեր և՛ ներկարարութեան, և
ջուլհակութեան, և՛ հենք պատրաստել: Նա միաժամանակ
նաև մեխանիկ էր, կարգի էր գցում դազգահները: Երբ Հայ-
կանը մեկնեց սովորելու, Թորոսիկը գրավեց նրա տեղը:

Մեքենայացված ջուլհականոցն արտելի ամենամեծ ցեխն
էր, իսկ Թորոսիկը՝ ամենակրտսեր վարիչը: Սակայն երբ նա

մտանում է ջուլհակներին, ստուգելու աշխատանքը, երբ նա
ամենափոքր խափանի առթիվ խիստ տեսք էր ընդունում,
մոտը կանչելով անբարեխիղճ արտելականին, երբ նա տես-
նում էր, որ հումուլթի և օժանդակ նյութերի բաշխումը ճիշտ
չէ կատարված, իսկույն փոխվում էր հասակավոր մասնա-
գետի, ու հանցավորն անխոս խոնարհում էր գլուխը նրա
առաջ...

Փորոսիկը ոչ միայն Մաքրուհի տուտուլի պարծանքն
էր, այլ և ողջ Ծաղկավանի: Այդ վաղաժամ լրջացած պատա-
նու խիստ հայացքը մեկից մեղմանում էր, երբ հանդիպում
էր Մայրենուն... Մայրենին շիկնում էր, և կարծես նրա այ-
տերի կարմիրն էր անցնում իր գործած կտորին:

Ծաղկավանցիք սիրում էին երեկոները հավաքվել մեկն
ու մեկի մոտ ու խոսել աշխարհի բաներից: Մանուկ-Փիլի-
պոսի լայն սիրտն ու ճաշակավոր տունը հաճախ ընդունում
էր հյուրերին:

Նա տունը շինել էր նախկինի ոճով. սենյակները երեք
կողմից զարդարված էին պատուհաններով. այնպես որ օրվա
քոլոր ժամերին ներս էր ընկնում արեգակը: Պարտեզը, որ
առավոտ կանուխ և աշխատանքից հետո մշակում էր նա,
շքեղ էր մեծաշեն կնոջ նման: Նա սիրում էր ծաղիկ, ուստի
վարդանոցում բուրում էին նաև զամբեղն ու նուռուֆարը:
Մեղոները տզզում էին ծաղիկների շուրջը. այդ միալար
տզզոցը քուն էր բերում Մանուկ-Փիլիպոսին: Քունը նրա
ծերունական երակները լցնում էր նոր ավյունով ու, չնայած
յոթնասուենհինգ տարեկան էր, տարիների բեռը չէր ճնշում
նրան:

Թախիծն ու մենակութունը, որ նրան միշտ տանջուժ
էր հին հայրենիքում, տեղի էր տվել կայտառության: Յու-
քաքանչյուր արտադրական օրը, որ նա ճամփու էր դնում
ցամքոցներով, շալերով, նրան տալիս էր գնահատված աշ-
խատանքի վաստակ: Նա տալիս էր իր փորձն ու եռանդը,
ստանում հարգանք ու պատիվ:

Երբ հյուրերն ավազանի մոտ գրավում էին իրենց տե-

ղերը, Մանուկ-Փիլիպոսը սինով բերում էր այն ամենը, ինչ տալիս էր պտղատու պարտեզը:

— Առաջին անգամ իմ տուն եկողը իմ հյուերն է,—ստում էր նա,—երկրորդ անգամ եկողը՝ տանս անդամ. անուշ արեք:

— Աստծո բերեքեթը տնիցդ անպակաս լինի, դուռդ էլ միշտ բաց լինի,—մաղթեց Մաքրուհի տուտունը:—Առածը ստում է՝ թն հաց ունես՝ թրջիր, կեր: Երկիր որ կտնտեսեիր, կասեիր մնա ապագա... Մեկ էլ տեսար ասկյարները մտան, տունուտեղդ թալանեցին ու տարան: Հիմի քոնն է. կուզես կեր, կուզես պահի:

— Մաքրուհի, գլոզում, այն անիծված օրերը մի հիշեցնի,—խնդրեց Թագ խաթունը,—ինչո՞ւ մենակ ալան-թալան, ինչո՞ւ մենակ սուր ու արյուն, հապա ղարիբությունը պակա՞մ դարդ էր... մեկ տարվա հարս էի, որ էրկա գնաց դուրբաթ... ես էլ մորս պես լալով երգեցի.

«Առավոտուն գով ատեն,
Պիլիլներուն երգած ատեն
Յարս նամփու դրի՝
Լեռներու կանաչ ատեն...»

Թորոսիկն ու Մայրենին իրենց հասակակիցների հետ մի շարք նստած՝ ուշադիր լսում էին:

— Հետո՞, Թագ խաթուն, չեկա՞վ ձեր ամուսինը,—հարցրեց Մայրենին:

— Չեկա՞վ, աղվորս, չեկա՞վ...—հուշերիցը դառնացած պատասխանեց ծեր կինը,—շա՞տ կանչեցի.

«Մենդիլդ ալտոս է,
Ղեկի լվանամ,
Դրենմ սե աչերուս
Պառկեմ ֆանամ...»

— Չեկա՞վ... դուսս գոցվեց, մանչ բերի՝ եթիմ մեծացրի:

— Վերջ տանք, Թագուհի, տխուր զրույցներուն վերջ տանք,— ընդհատեց Մանուկ-Փիլիպոսը:— Այդ սև օրերը յոթը ծաւ գետնի տակ անցան. նորերեն խոսենք: Կըսեն Սեմերճյաննեց Մինասը Քափլակյաննեց Տիգրանուհին կուզեաւ զըջիկն այնքան սիրուն է, որ կարծես խնձորի մեջն է դուրս եկել:

— Միաթագ-միասպակ լինեն,— մայրական բարությամբ օրհնեց Մաքրուհի տուտուն:

— Չուզողի աչքը մութ, բայց ըսելս այն է, որ մեր թաղի մեջն էլ հարսնիք լինի,— խոսք բացեց Մանուկ-Փիլիպոսը՝ խորհրդավոր նայելով Թորոսիկին:

Մաքրուհի տուտուն ակնարկը հասկանալով՝ պատասխանեց.

— Ատենը որ գա, քարե տանձն էլ կհասնի...

— Իմ կարծիքով այնքան էլ հեռու չէ ատենը. իմ պատրաստած վարպետի քավորը ես պիտի ըլլամ, ազջիկը ես պիտի հավնեմ,— առաջարկեց Մանուկ-Փիլիպոսը՝ հայացքը Թորոսիկից զգուշությամբ դեպի Մայրենին ուղղելով:

Սակայն Մայրենին չկար...

Նա պահվել էր վարդենու հետև և դողում էր հուզում մից... Մաքրուհի տուտուն ասաց, որ երբ ժամանակը գա՝ Թորոսիկին կպսակի, բայց ո՛ւմ հետ... ո՛ւմ հետ...

Երբ հյուրերը՝ տունդ շեն, օճախդ վառ մազթելով ցրվեցին, Մանուկ-Փիլիպոսը մրգի սինին մինդաբների հետ տարավ ներս, լվաց ձեռները, հագավ փափուշները և բարձրացավ վերի սենյակը:

Խաղաղությունը, որ քիչ առաջ կար նրա դեմքին, տեղի էր տվել խորը տրամուխյան ու որքան որ նա հասնում էր սանդուղի գլխին, սիրտն այնքան բարախում էր սաստիկ:

Դուռը կամացուկ բացվեց և Մանուկ-Փիլիպոսին տիրեց այնպիսի հույզ, որ կարծես մտնում էր խորան աղոթելու, սակայն այդ խորանում ոչ տիրամայր կար— մանկիկը գրկած և ոչ կանթեղ. միայն հին օրորոցն էր մասունքի պես դրված սեղանին...

Ու Մանուկ-Փիլիպոսն ամեն անգամ այդ սենյակը մըտ-
նելիս ոտի ծայրերի վրա մոտենում էր օրորոցին, խոնար-
հում ալեհեր գլուխը, ասես կարոտի խոսքեր մրմնջում ման-
կիկին... Ապա դողդոջ ձեռներով շոշափում էր շխշխկիկը,
որի հետ ժամանակին Մհերն էր խաղացել... հետո շոշում
էր բարձր, Թեֆարիկի բարձր...

— Գլոզում կնիկ, հասրաթի խանչալի պես սիրտս
կտրտեց...

Ու խեղդվում էր ձայնն արցունքներից:

• Նա այցելում էր հուշ-սիրելիներին ամեն երկու, քնե-
լուց առաջ. իրենից բացի դեռ ոչ-որ շէր կոխել այդ սենյակը,
չվայելած հայրության ու ամուսնության սենյակը:

— Հասրաթի շառի, հասրաթի...

Օրորոցն ու բարձր միակ իրն էր, որ Մանուկ-Փիլիպոսը
ներգաղթին հայրական տանից հետը վերցրեց և, որպեսզի
երկրացիներին այդ տարօրինակ շիվար, նա օրորոցը քան-
դեց ու դրեց բողջա... Ծաղկավանդում տուն շինելուց հետո
նա նոր միայն քանդած մասերը միացրեց իրար՝ դարձյալ
շինելով օրորոց:

Եվ այժմ նա տանջվում էր, որ չկային սիրելիները...
Կարոտից բացի նրան հուզում էր և այն, որ հաշտենի տան
խաղաղությունն ու առատությունը վայելում էր միայնակ:

— Դեթ մի պատիկ գարուն անեիր սա երկրին մեջ, նոր
երթայիր, յավրում,— մղկտում էր Մանուկ-Փիլիպոսը,—
գրկանոցդ առնեիր, սա բաղչային մեջ սիրամարզի պես շո-
րորայիր, սե՛յր անեի... ա՛խ, սեյր անեի...

Ու ինչքան որ անցնում էր ժամանակը, այնքան բոր-
բոքվում էր կրակը:

3

Եկավ անցավ երկու տարի, իսկ երկու տարին ի՞նչ է
որ... սիրահարի համար երկու կարճ գարուն, ծերունու հա-
մար՝ երկու ձիգ ձմեռ:

Քնքշորեն իրար փարված՝ նստել էին նրանք կանաչ բլրակին ու լուռ շնչում էին սիրո անկրկնելի խոսքեր:

Մաղկած ծառերը տոնական ամեն գույներով պճնված՝ կարծես իջնում էին ձորը, պարահանդեսի: Գետը արծաթյա գոտու նման սեղմել էր երկրի իրանը, իսկ երկինքը... երկինքն այնքան ժպիտ ուներ, կապույտ ուներ:

Թորոսիկն ու Մայրենին դիտում էին այդ ամենը, և կյանքը թվում էր այնպե՛ս գեղեցիկ: Մեղրով, բույրով օծված օդից նրանք հարբած՝ ուզում էին գրկել թիթեռներին, թռչուններին, արար աշխարհը գրկել ու ապրել զարնան մեջ միշտ սիրո զարուհ:

Նրանք չէին նայում իրար. սիրուցն էր այդ: Չէին խոսում: Թորոսիկը շոյում էր Մայրենու ձոխ մազերը, որոնք կտորած ամուսի փայլ ունեին, ու փակվում էին նրանց աչքերը պատրանքից:

Այն, ինչ նրանց մեջ սկսվել էր անորոշ, այժմ դարձել էր փաստ: Աչքերի տրտումն ու դեմքերի նուրբ դալուկն ասաց այն, ինչ դեռ ընդունակ չէ ասելու մարդկային և ո՛չ մի շեղու: Այրվող շուրթերից ձոնված համբույրը դրոշմի նման ի մի կնքեց նրանց շուրթերը, և այդ շուրթերի մտերմությունից հետո նրանք դարձան այնքան հարազատ: Նրանք միշտ իրար հետ էին, նույնիսկ այն ժամին, երբ մենակ էին: Նրանք միշտ խոսում էին իրար հետ, չնայած հանդիպելիս կախում էին գլուխները: Ամեն ինչի լավն ու վսեմը նրանք մտովին ձոնում էին իրար, ապա խայտում սիրո տանջող երանությունից:

Մանուկ-Փիլիպոսը ճանապարհը կարճելու համար արագ անցնում էր կեռամանով, երբ հանկարծ աչքերը կկոցելով կանգ առավ. զարմանքի հետ նրա բարի դեմքին ժպիտ խաղաց, ապա ոտները շարունակեցին ճանապարհն այնպես, որ չիմացվեք անցումը, ու պատրանքից չսթափվեք զույգը:

Տեսնելով Մաքրուհի տուտուլին՝ նա բարևի փոխարեն ասաց.

— Հասել է ատենը....

— Խոսքդ շաքարով, Ի՞նչ ատեն,—հարցրեց դիմացինը՝
բան չհասկանալով:

— Միրոս նշանդրեք կուզե:

— Որ այդպես է՝ եկ քեզ նշանենք,—կատակի ավելց
Մաքրուհի տուտուն:

— Ես դեռ մանուկ եմ,—խնդաց ծերունին,—առաջ
մանչդ, տարոսը ինձ:

Մաքրուհի տուտուն, ինչպես բոլոր մայրերը, որ ինչքան
էլ մեծանա զավակը, նրա վրա նայում են որպես փոքրիկի,
վրա բերեց.

— Ի՞նչ կըսես... Մանչս դեռ պատիկ է, Փիլիպոս աղ-
բար:

— Մատս չխածե...—խորհրդավոր նկատեց Մանուկ-
Փիլիպոսը,—նրա շոշուխ լինելը քեզ ցույց կտալի, ամա...

— Ամա Ի՞նչ,—հարցրեց մայրը՝ խոսակցի լեզվի տակ
հանգույց զգալով:

— Աստված երկու աչք է տվել, մի բերան, որ շատ
տեսնենք, քիչ զրուցենք. հասկցա՞ր... Որ կըսեմ նշանելու
ատենն է, ուրեմն ատեն է:

Մաքրուհի տուտուն գինաթափվեց ծերունու հեղինակու-
թյան առաջ:

— Ի՞նչ կկարծես, նշանվելու համաձա՞ցն է:

— Ոտքդ կպագնես,—իսկույն վրա տվեց Մանուկ-Փիլի-
պոսը,—հը՛, շոշուխ կըսես... ե՛կ, ե՛կ, պատուհանեն դուրս
նայե...

Մաքրուհի տուտուն մեքենաբար մոտեցավ լուսամու-
տին:

— Դեմի բլուրը նայե:

Թորոսիկն ու Մայրենին իջնում էին թևացուկ:

— Աղջկան առել, սարն է ելել, իսկ դու շոշուխ կըսես:

Մաքրուհի տուտուն կարծես տեսողությանը չհավատա-
լով՝ անթարթ դիտում էր նրանց, մինչև որ նրանք բոլորովին

մոտեցան, զգուշության համար թողին իրար ձեռք և անխոս
բաժանվեցին:

Ե՞րբ, Թորոսիկը ե՞րբ այդքան մեծացավ ու լցվեց սի-
րով... կարծես դեռ երեկ էր, որ նրան հետաքրքրում էր փայ-
տե ձին... իսկ այսօր նրա աչքերը լցվել էին անուշ տրտու-
մով, և այդ թախծի միջից, ինչպես ոսկի շամանդաղից, ժրպ-
տում էր լալազար մի աղջիկ:

Տարիներն անցել էին զարմանալի արագությամբ:

Փ Լ Ո Ւ Խ Ե Ր Ր Ո Ր Գ

1

Մանուկ-Փիլիպոսն ու Համասփյուռը նստել էին սեղ-
րին, մեջքը տվել բարձերին և կարծես դժվարանում էին
սկսել խոսակցութիւնը:

Մայրենին գրասեղանի առաջ տեղավորված կարդում էր,
բայց կարդո՞ւմ էր արդյոք... Ամեն բառ, որ սկսվում էր ք
տառով, նրա աչքերին թվում էր Թորոսիկ ու ցրում միտքը:

Համասփյուռն ասես կռահելով Մանուկ-Փիլիպոսի այցի
նպատակը՝ դիտմամբ դարձավ աղջկանը.

— Ձեզվեն տար, սուրճ եփիր, որ Փիլիպոս աղբարին
պատիվ անես:

Մայրենին ճկուն շարժումով դուրս ելավ. քայլվածքից
նրա կոնակին հաստ օձերի պես գալարվեցին հյուսերը:

— Դե՛հ, Փիլիպոս աղբար, բարով, հաղար բարով
եկար,— համարձակ սկսեց Համասփյուռը:

— Բարին քո դավակին,— ծանր պատասխանեց Մա-
նուկ-Փիլիպոսը՝ անբաժան թութունի քիսան հանելով:

— Ըսե նայենք, ի՞նչ խաբար:

— Թող չբարաս վառեմ, նոր,— սպանիչ դանդաղությամբ
պատասխանեց Մանուկ-Փիլիպոսը, դիտմամբ խոսեց սարից-
ձորից ու նոր միայն ավանդական սովորութեան համաձայն՝
հանդիսավոր հայտարարեց.

— Ձեր քաղաչի նոր բացված վարդը քաղելու եմ

եկե՛լ... Ձեր օջախի մոխիրը մեր օջախին խառնելու համար ձեր դուռն եմ եկել:

Համասփյուռն անմիջապես գլխի ընկալ, թե ո՞ւմ մասին էր խոսքը: Նա յոթը պորտ ճանաչում էր Մաքրուհու գերդաստանը. գիտեր, որ նրա ցեղում հարբեցող, անառակ չկա: Թորոսիկը հենց իր աչքի առաջ է մեծացել. գեղեցիկ է, առողջ, լավ աշխատավոր: Նա դժվարութեամբ զսպեց բերկրանքը և բառ սովորութեան իրեն ծանր պահելու համար ասաց.

— Աստված կատարածին հասցնե: Իրավ, աղջիկս դեռ պատիկ է... բայց որ ճակատագիր է, հակառակել չեմ կրնա:

Մանուկ-Փիլիպոսը խոսքիպալի համար բերած մատանին տալով՝ ասաց.

— Դու մեր տղուն լավ գիտես, Համաս, մեզ էլ աղջկանդ աղեկ բնավորութիւնն է պետք և հունարը: Տասը մատներից թող տասը տեսակ գործ թափե, որ երբ դուռդ դրացի հարսը գովեն, մենք ուրախութիւնից յուզ կապենք:

Թեպետ և Մանուկ-Փիլիպոսը և Համասփյուռը գիտեին, որ ավելորդ էր խոսք-կապն ու ձեռական կողմը, քանի որ Թորոսիկն ու Մայրենին արդեն սիրում էին միմյանց, բայց և այնպես ուզում էին հարգել նահապետական սովորութիւնը, քանի որ այդ սովորութեան մեջ նրանք զգում էին իրենց պապերին:

Ու Մանուկ-Փիլիպոսը հիշելով հնութ՝ մի երգ՝ ասաց.

«Յեխին մեջ քար նետես՝ կրնկղմի կերքս,

Ղարիբին աղջիկ տաս՝ կը բողո կերքս.

Բարձր լեռան գլխուն պիլպիլներ կերգեն.

Պիլպիլին բունը աշխարհիս հերիք է»:

— Իսկ մեր բունը, մեր տունը; Համաս, ամուր է շինված, այլևս ավերող չկա... Ե՛րբ գանք նշանդրեր:

— Շարաթ իրիկուն, որ գիշերը քեֆով լուսացնենք:

Մատուցարանին երկու ֆինջան դրած ներս մտալ Մայ-

բենին: Զեզվեն օջախին, ականջը դրան՝ նա ամեն ինչ լսել էր ու երջանիկ հուզումից բաժակները դատարկ ներս բերել...

Մայրն իր նշանի օրվա ցրվածութունը հիշելով՝ ներդաժմիտ ժպտաց.

— Սա՛վաղի հովը գլխուն է վարկել, Փիլիպոս աղբար...

Ծերունին բարեհամբույր շոյեց Մայրենու շուշանագեղ ճակատը ու «պապիդ օջախը շեն մնա» մաղթելով՝ դուրս ելավ:

2

Դաֆի ու քամանչայի զվարթ հնչյունները հովի թևերով տարածվում էին թաղից թաղ՝ հրավիրելու հյուրերին:

— Նշանդրեք է, նշանդրե՛ք:

Թթենու տակ, իրար միացված սեղանների շուրջը նստել էին ծանոթներն ու բարեկամները: Ծեր կանայք ու տղամարդիկ բազմել էին սեղանի գլուխը, ապա երկու կողմից, ինչպես հին կաղնիների մոտ աճած նոր ծառեր՝ ձգվել էին երիտասարդները:

Ամենքը հագել էին տոնական: Տատերի խաս զգեստների վրա փայլում էր արդն ու զարդը, իսկ պապերի բաճկոնների գրպանից կախ էր ընկել ոսկյա ժամացույցի հաստ շրջթան: Երիտասարդների հագին, մանավանդ աղջիկների, սպիտակը ձուլվում էր կապույտին, կանաչը կարմրին. նրանք հիշեցնում էին դաշտային ծաղիկներից կազմած մի ձոխ փունջ:

Էլեկտրական լամպերը, որոնք գույնզգույն լուսամփոփների մեջ կախված էին ծառերից, աստղերի հետ ժպիտ էին մաղում:

Մաքրուհի տուտուն ու Համասփյուռը, որպես երկու արքայամայր, բազմել էին կողք-կողքի:

Երբ Մաքրուհին տղա ծնեց, կեսուրը, որպես հարգանքի նշան, տակը փռեց զույգ ներքնակ, իսկ Համասփյուռն աղջիկ ունեցավ, չբաշեցին նրա նազը... սակայն հիմա երկու

ժայրերը բերկրում էին հավասար. այլ էր հասկացողութունը, և կարծես Մայրենին հատկապես ծնված էր, որ երջանիկ լինելը թորոսիկը:

— Բոյովդ նշանած ես դտել, շիրին մանչս,—խոսք բացեց Մանուկ-Փիլիպոսը,—ծլես, ծաղկիս:

Եվ երբ պատանի տղաներն ու աղջիկները իրար նայելով ժպտացին, ծերունին ավելացրեց.

— Տարոսը ձեզ:

— Ավանիս աղջիկներն ու տղաները սուենի արագությամբ են հասնում իրար հետևից,—հպարտությամբ ասաց ավանսովեաի նախագահ Աղավնյակը, մեծաշեն մի կին, որի արևահար դեմքին զարմանալիորեն փայլում էին սևորակ աչքերը,—մինչև ձմեռ երևի մի հիսուն հարսանիք ունենանք:

Ոգևորված նվագեց դաֆն ու քամանչան, և հասակավոր տղամարդկանցից մեկը սկսեց ավանդական «աղջիկ նա, նա, նա»-ն: Թեպետ այդ երգը հարսանեկան էր ու կատարվում էր հարսնացուի մազերը սանրելիս, սակայն նա, ինչպես ասում էր, շճամբերեց.

«Աղջիկն ալ կը տանեն, անամ,

Առո՛ք ու փառո՛ք.

Մագերն ալ կհյուսեն, անամ,

Մումայի քելո՛ք.

Դուխն ալ կկապեն, անամ,

Պիլպիլի քելո՛ք:

Քեզ տանել են եկել, անամ,

Մայրիկդ լացու՛ր,

Ոտքդ ուղու՛ր բռնե, անամ,

Դուն մեզ խնդացու՛ր,

Աղջիկ, նա, նա, նա:

Մի լար, աղվոր աղջիկ, մի լար,

Աչդ-ունքդ կավրի,

Քեզ պատիկ կարգողին, անամ,

Տրևակն ավերի....»

— Միհրան դայի, երգը շաքարով: հիմա աղջիկները լա-
լով չեն երթար,— ընդհատեց Հայկանը, ապա դիտմամբ
Մայրենուն դառնալով՝ ավելացրեց,— Բե կուլաս, մնա...

Մայրենին ամոթխած կախեց գլուխը, իսկ նրա ընկե-
րուհիներին մեկը՝ Վարդենին, համարձակ պատասխանեց.

— Համ կուլանք, համ կերթանք...

Բարձրացավ ընդհանուր ծիծաղ:

— Մաշալա՛... մաշալա՛:

— Հիմիկվա աղջիկների հետ գլուխ չի դրվի, ջանք՛մ,
գինու բաժակները լցրեք, էյ, ո՛վ կա տունը, գոցեցեք ու-
դիոն, որ իրար հասկանանք,— առաջարկեց Մանուկ-Փիլիպո-
սը,— առաջ-առաջ խմենք մեր մեծ Ստալինի կենացը, որ
նստեր է մայրաքաղաքների մայրաքաղաքը ու իմաստունի
պես ժողովուրդը կկառավարե:

— Բերանդ դալար, Փիլիպոս աղբար,— աշխուժացան
սեղանավորները:

— Ապա խմենք Հայաստանի կենացը, մեր խաթուն
մայրիկի,— շարունակեց Թամադան,— ավերակների վրա
նստած շատ սուգ կապեց խաթուն մայրիկը, մինչև որ մեծ
ոռա աղբարն օգնության ձեռք երկարեց, խաթուն մայրիկը
ոտքի ելավ:

— Իսկական քաղզրագետ,— բացականչեց Հայկանը:

— Ակտիվ եմ ու սրտով պարտիական, կաղմակերպիչ
Հայկան,— ձայնեց Մանուկ-Փիլիպոսը,— դեհ, խմենք Հայաս-
տանի կենացը:

— Խմեցինք, խմեցինք,— կանչեցին հյուրերը ու մարդ-
կային ձայների միջից լավեց բաժակների ուրախ զրնգոցը:

— Ակտիվ է, ինչպես սա երկրին մեջ կըսեն՝ ակտիվ
է,— խրախուսեց Մանուկ-Փիլիպոսը,— սա էլ խմենք մեր եր-
կու արքայամայրերի կենացը. եթե մեկը մանչ չծներ, մյու-
սը աղջիկ, այսօրվա քիֆն էլ չէր լինի... Խմենք մայրերի ու
նրանց արժանավոր զավակների կենացը, որ շուտով կապեն
Թագ ու պսակ:

Ջերմագին մաղթանքներով պարզվեցին բաժակները:

Սեղանը համադամ ուտելիքներով էր ծանրաբեռնված: Ընշը նույնպես ավանդական էր, իսկ վերջում մատուցողները պարելով բերին փախլավաչի սինին, որի եզերքից ծորում էր խնկազույն մեղրը:

— Նշանվածների ձեռները կապեցեք... Նշանվածների ձեռները կապեցեք... Սիրո մեղրն ու նուշը նրանց, փախլավան՝ մեղ, — ձայնեցին տատերը, որոնց դեմքը նման էր կաթնապուրի երեսին՝ ծալծված ու պայծառ...

— Ըիշտն ըսե, Թագ խաթուն, կուզենայիր փախլավաքեղ տային, թե՛ սեր, — կատակեց Բաղդասարը:

— Հալբաթ որ սեր, — պատասխանեց Թագուհի տատիկը:

— Սակայն չե՞ որ երեսուն տարի առաջ դարձար երկու քսան տարեկան:

— Պառավեցի առանց սիրո, — ամոստանքով հատաչեց Թագ խաթունը: — Ես տասնվեց տարեկան էի, էրիկս քառսուն տարվա բեղ-մորուքով:

— Հապա ինչո՞ւ առիր:

— Տվին... կամքը ծնողներիս էր. ոսկու թամազ էր, ձայնը գետնիցը դա ալդպես թամազի:

Սենեքերիմ պապը հարցրեց.

— Էրիկդ աչք—լույս ունե՞ր:

— Ունեք:

— Ըսե փառք աստծո... հապա որ ինձ խաբելով կնիկ տվին դույզ աչքով կույրը՞:

Երիտասարդները հետաքրքրությամբ խմբվեցին պապի շուրջը:

— Պատմիր, Սենեքերիմ պապիկ:

— Ի՞նչ պատմեմ. սերերին շանը ծակիկ-ծակիկ ծակ-ծրկվի: Առածը կըսե՛ մոր դովածը դիր ու փախիր, ուրիշի դովածը առ ու փախիր: Մայրը մորս ալվոր ալջիկ ցույց տվեց, երկու աչքով կույրին նստեցուց հարսանեկան քոզի տակ... Պսակեն ետքը, երբ մենակ մնացինք՝ տեսնեմ կնիկս կուլա, թե այսպես ու այսպես... մայրս ուզեց ինձ ստղցնել:

վզիդ փոթաթեց... է՛յ, շանըմ, ուրախութեան օր է, վազն
եկեք,—սլատմությունն ընդհատեց Սենեքերիմ պապիկը հու-
շերիցը դառնացած:

— Միայն երկու խոսք... թախանձեցին երիտասարդնե-
րը,—հաջորդ օրը հարսի ձեռքեն բռնեցիր, զրկեցիր հե-
րա՛նց:

— Ե՛տ ուղարկել, ո՛հ, ոչ, Սենեքերիմն այդպես շարեց.
աղջիկն ինչո՞վ էր մեղավոր... մայրն էր խաբել: Ապրեցինք
էրիկ-կնկա պես,—ասաց Սենեքերիմ պապիկը,—սակայն
խեղճը շուտ մահացավ. դարդին մահացավ...

Ունկնդիրները պատկառանքով նայեցին ծերունուն, որն
աղջկա անունը չկոտրելու համար զոհել էր իր երջանկու-
թյունը:

— Ժամանակը կույր էր, աղջկա հետ առաջուց տեսնվել
չկար. որին որ նստեցնեին հարսանեկան քողի տակ, նա էլ
կղառնար քո կինը: Պսակվելը լաթարիայի պես բան էր իշ-
տե, դու քո բաղդը,—դառնացավ նա, ապա նայելով իրար
հետ խոսող-կատակող աղջիկ-տղաներին՝ ավելացրեց.—Վա-
յելեցեք ձեր ազատությունը, սակայն ի շար գործ չդնեք:

Թորոսիկն ու Մայրենին ուշադիր լսում էին պապի
զրույցը և լինելով հինավուրց աղաթներից հեռու՝ արտա-
հայտում իրենց գոհունակությունը. երանուկութից նրանք
փայլում էին այնպես, որ կարծես արևն իջել էր նրանց դեմ-
քին ու շէր ուզում մայր մտնել... Նրանք անէացած նայում
էին իրար, սեղանի տակից քնքշութեամբ սեղմում միմյանց
ձեռք...

Լուսինն իր շրջանը կատարելով թեքվեց սարի հետևը:
Կատարներից իջավ լուսը ու մենամարտելով մթի հետ՝ սեղ-
մեց նրան անկյուններում: Այդպեացը ժպտաց կապույտ,
ապա շիկնեց, փայլեց ու հեղեղեց արեգական ճառագայթ-
ներով: Ծաղիկները բանալով շաղոտ աշիկները՝ շշնջացին
կաքավներին.

— Բարի՛ լույս ձեզ, բարի՛ լույս:

Բնության զարթոնքը խանդավառեց սեղանավորճերին. սահանդարները պարպելով բարի լույսի գավաթը՝ սկսեցին «Լեյլանի»: Երիտասարդները ձայնակցելով՝ մենեդը դարձրին խմբական: Սոխակը վարդանոցից մրցման ելավ դայլայլով:

— Սը՛ ը՛ ը՛ սասս, բիլբիլի տաղը լսեցեք...

Դուրսն ու քամանչան գորշ թռչնակին զարմացնելու համար սկսեցին նվագը նուրբ թրթիռներով: Աղջիկները ճկույթներն իրար հյուսելով՝ պարեցին «մանր թանգարա»: Նրանց դեղանի ոտները կարծես հողից չէին անշատվում, մինչդեռ հողանի թևերն արիքավորվում էին այնպես, որ ասես Սևանի վճիտ կոհակներն էին բարձրացել ավազանից՝ շարունակելու իրենց նազանքը:

Մաքրուհի տուտուլի ճակատի զուգահեռերում խինդ կար ու թախիժ. խինդ նրա համար, որ իր Թորոսիկը մեծացել էր ու նրա համար էր այդքան երգ ու նվագը, իսկ տըխրությունը բխում էր նրանից, թե ինչո՞ւ իր զավակի նշանդրեքին ներկա չպիտի լիներ հայրը, որը հավի պես մորթվեց դազդահի կողքին, կամ թե ինչո՞ւ ծերունական պատվավոր շարքում նստած չպիտի լինեին պպան ու տատը, չէ՞ ոչ նրանց համար թունդիկի նշանդրեքը մեծ խինդ էր, մուրազ:

Տխրության քողը մերթ ընդ մերթ մթազնում էր և Մանուկ-Փիլիպոսին, երբ նա հիշում էր օրորոցն ու Թեֆարիկին... Մեռած սիրելիներին մտաբերում էս ոչ միայն վշտի ժամանակ այլ է երանության, սակայն նա, որպես տղամարդ, ավելի հեշտությամբ էր կարողանում ցրել մոռը, որ ուղտի նման շոքեր իր կրծքին:

Նշանդրեքի ավանդական պարերով մեջտեղ ելան Թորոսիկն ու Մայրենին: Խոտերն ու ծաղիկները հաճույքով էին իջնում նրանց ոտների տակ: Մայրենին թևերը պարզած թռչկոտում էր մարի կաքավի պես, ու նրա շուքը իր հմայքի գիտակցությամբ պտտվում էր Թորոսիկը՝ ինչպես վարուժան:

Երբ վերջացավ նազանի պարը, արագաշարժ ձեռները սեղանին դրին սուրճ ու շաքար-լոկում:

— Այս էլ դատարկենք ու երթանք,—ասացին հյուրերը,—տանտիրոջը հանդիստ, նորընծաներին անուշ քուն:

— Ինչո՞ւ կվռաղեք,—նկատեց Համասիլյուտը,—օրը կիրակի է:

— Կիրակին՝ կիրակի, բայց կեսօր է արդեն,—ասաց Աղալնյակը,—այնքան զարկինք ու թռանք,, որ ժամանակի մասին մոռցանք. Փիլիպոս աղբար, սհաթդ նայե:

Ծերունին բաձկոնի գրպանից հանեց ոսկյա ժամացույցը ու ականջին տանելով՝ բացականչեց.

— Վա՛յ, զուռնաչի, մեկի վրա կանգնել է, մենք քեֆըրինք, նա հոգնեց: Է՛յ, ո՞վ կա տունը, ուղիոն միացրե՞ք՝ ատենն ստուգենք:

Վարդենին ճարտար ուսույունով պատուհանից մտալ սենյակ և ահա... և ահա սև բարձրախոսի խոպուտած կոկորդից ելավ.

— Հունիսի 22-ին, առավոտյան ժամը չորսին Փաշխտական Գերմանիան, խախտելով պայմանագիրը՝ հարձակվել է Սովետական Միության վրա...

Սեղանավորները զինուց, քնատուփյունից կիսաթմբիք՝ չկարողացան մեկից զգաստանալ, ուստի զարմացած նայեցին իրար և յուրաքանչյուրը կասկածելով իր լսողության վրա՝ հարցում արեց կողքին կանգնածին.

— Ի՞նչ կըսես, ջանըմ, ատ ի՞նչ կըսես...

— Պատերազմ է, կըսես:

— Ո՞վ, ո՞րին դեմ:

— Գերմանիան մեր դեմ:

— Խելնալու բան է...

Մանուկ-Փիլիպոսը սուրձի բաժակը թողնելով հարցրեց.

— Ո՞վ, որին դեմ:

— Կացե՛ք, կացե՛ք,—հանկարծ բացականչեց Հայկանը ու կարծես լավ լսելու համար վազեց տուն, բարձրախոսի մոտ:

Նրան հետեցին ամենքը: Կանայք բնազդով սեղմվեցին
իրար մոտ: Երիտասարդները բարձրացան աթոռների վրա,
ասես բարձրից լավ զգալու համար շունչը քաղաքամայր
Մոսկվայի:

— Պատերա՛զմ է, պատերա՛զմ:

Դաին ու քամանչան լուռ ընկել էին խոտերի վրա, իսկ
դռան առաջ դողդոջում էր ընկուղենին՝ բազկատարած պա-
պի պես.

— Ի վեն, որդիք, որ չհանդչի ծուխը հայրենի տան
օջախի...

Սովորականի պես կանչեց շշակը, բայց ծաղկավանցի
 երիտասարդների մեծ մասը փոխանակ արտել գնալու՝ բըռ-
 նեց Զինվորական Կոմիսարիատի ճանապարհը:

— Ի զեն, որդի՛ք, որ չհանգչի ծուխը հայրենի տան
 օջախի...

Զարմանալի արագութեամբ փոխվեց մայրաքաղաքի
 պատկերը. սկսվեց ինչ որ անսովոր շարժում: Շրջաններից
 և գյուղերից անընդհատ շարքերով գալիս էին երիտասարդ-
 ներ՝ թողած բահ ու գերանդի: Նրանք լուրջ էին, լարված:
 Արևշաղ դեմքերին ցատում կար: Ձեռներին զենք կար: Առօր-
 յայի մանր խնդիրները, որոնք հուզում էին մարդկանց, չքա-
 ցել էին: Նույնիսկ նրանք, որոնք անհատական խնդիրներով
 գժտված էին, բարեկամացած մեկնում էին բանակ՝ հայ-
 րենիքի համար, սովետական սուրբ հողի համար:

— Թիկուները ձեզ, ճակատը մեզ. լավ աշխատեցեք, որ
 մենք լավ կովներ—պատգամ էին տալիս հեռացողները:

Մաղկավանի արտելում մեկնողների դազգահներն ան-
 գործ շմնացին: Կատարվեց ուժերի նոր դասավորում: Հայ-
 կանը նշանակվեց արտելի նախագահ՝ գրավելով բանակ
 մեկնած Բաղդասարի տեղը: Մանուկ-Փիլիպոսը տնայնագոր-
 ծական ջուլհականոցի ցեխի վարչութունից առաջ քաշվեց
 որպես ավագ վարպետ՝ տեղը տալով Մարրուհի տուտուլին:

Տրիկոտածի ու կարի ցեխը հանձնվեց Հուստինեին, աչքաբաց մի աղջկա: Անհապազ ընդարձակվեց մանկամտուրը, և միջնակարգ դպրոցը նոր ավարտած Վարդենին ստանձնեց վարիչի պաշտոնը: Երիտասարդ կանայք տեղավորվեցին գլխավորապես մեքենայացված ջուլհականոցում, Թորոսիկի մոտ, իսկ տատերն ու պապերը, որոնք հասունացած զավակների հորդորանքով թողել էին աշխատանքը, նորից վերադարձան արտադրություն:

Դազգահներն իրենց նախկին տերերի վարժ ձեռների տակ շխշիկացին... ավելացան միջնաթել փաթաթող նոր ճախարակներ: Տատիկները դողդոջուն ձեռներով լցնում էին մասուրները ու իրարից գաղտնի սրբում արցունքները:

— Բոյզ ծալվի, երեսդ գետնին գա, Հիտլեր... զալամով գրած, սուրգուշով կնքած պայմանագի՞րն էլ մարդ խախտի,— վշտացավ Համասիյունը:

— Չադար բողազի իշթահը տես... անկուշտ գալլի պես այնքան որս կլլեց, հիմա էլ ակոաները մե՞զ համար է սրել,— հեղճեց Մանուկ-Փիլիպոսը:

— Կիշրենք այդ ակոաները,— հանգիստ պատասխանեց Թորոսիկը:

Մաքրուհի տուտուն ու Մայրենին ներկա գտնվողներին հետ նայեցին Թորոսիկին ու կարծես չճանաչեցին նրան: Ե՞րբ, երեկվա սիրահար պատանին ե՞րբ հանկարծ փոխվեց մարտիկի:

Երեկոյան Թորոսիկն ու Մայրենին իջան ձորը, այցելելու իրենց համար սրբություն դարձած ծառը, որի տակ նրանք իրար սեր խոստովանեցին և որպես անջնջելի հիշատակ, Թորոսիկը ծառի բնին փորագրեց իր ու ընկերուհու անվան սկզբնատառերը: Չորում նորից ծաղիկ կար, թրուշուններ կնյին, սակայն պակասում էր մի մե՞ծ բան. խաղաղությունը...

Թորոսիկը մտազբաղ նայում էր Սևանա աղմկուղ դատրիկին ու Հրազդանը նրան թվում էր հայրենիք: Ինձր լեռներն էին կապույտ անըջում. հայրենիք էին և նրանք:

Գետափին խաղում էին մանուկները. հայրենիք էին և նրանք...

Հայրենի՞ք...

Թորոսիկի թափառուն հայացքը բնությունից հետո կանգ առավ Մայրենու վրա և, ո՞վ գարմանք, Մայրենին երբեք չէր եղել այդքան գեղեցիկ: Նա պայծառ էր, ինչպես Հայաստանը. կոնակին ձոխ հյուսեր կային՝ հայրենի երկրի գետերի նման: Աչքերում նրա, ինչպես երկնքում, ամպեր կային. դա վտանգն էր, որը կարող էր սպառնալ Հրազդանին, մանուկներին, լեռներին ու իրեն՝ ծաղկած Մայրենուն:

Թորոսիկը կարծես ընկերուհուն պաշտպանելու համար գրկեց ու զրոսանքը թողած՝ տուն վերադարձան:

Մարբուհի տուտուն բստ սովորության ծալապատիկ նստել էր մինդարին, մեջտեղ հանել կարկատանի կապոցը, սակայն տխուր գեմքիցը երևում էր, որ միտքն այլ բանով էր գրադված:

Թորոսիկը երեխայի նման գլուխը դնելով մոր ծնկներին՝ հարցրեց.

— Ասում ես, մայր, որ իմ հոր արյունը դրոշմի պե՞ս էր տպվել դադգահի վրա:

— Այո, մանչ,— հատաչեց մայրը:

— Ու այդ արյունը պահանջում էր, որ ես նրան շնորհանա՞մ....

— Ու չպիտի մոռանաս,— խիստ նկատեց մայրը:

Թորոսիկը լռեց, ապա տենդից դողալով շնջաց.

— Ասում ես շա՞տ հայերի սպանեցին մեր հին հայրենիքում...

— Ա՛խ, մանչա, մենակ մեր գերդաստանեն տաս հոգի մորթեցին... ո՞ր մեկն ըսեմ, ո՞ր մեկն ըսեմ... հայությունը ձեռք գնաց:

— Բա՞՛վ է, բավ է պատմես,— այլայլվեց Թորոսիկը:— Բայց ո՞չ, պատմի՛ր, ձեր կրած տանջանքները պատմիր... տներն այրեցին, խոշտանգեցին մարդկանց. մահ էր... մահ էր: Հրաշքով ողջ մնացածներդ մի կերպ փախաք, եկաք Հայաստան ու նոր շունչ քաշեցիք ազատ երկրի մեջ:

— Այո՛, մանչս, միայն սա երկրի մեջ,— երախտագիտական զգացմունքով պատասխանեց Մաքրուհի տուտուն:

Թորոսիկը մոտեցավ պատուհանին, որին կռթնած նըստել էր Մայրենին:

— Կսեցի՞ր,— հարցրեց տղան՝ գաղտագողի շոյելով աղջկա ձեռքը:

— Կսեցի...— հառաչեց Մայրենին:

— Մարտափելի է, չէ՞: Ու այդ ամենը թուրքերի հետ կատարել է Գերմանիան: Այժմ՝ նույն Գերմանիան է գալիս մեզ վրա:

Սենյակում տիրեց երկար լուռություն, ներկա գտնվողներից յուրաքանչյուրը սուզված էր խոհերի մեջ ու ով իմանա կոծվում էր ո՞ր ալիքում:

Թորոսիկը Մայրենուն հրավիրեց մոր մոտ. նստեց երկուսի մեջտեղ ու աշխատելով հանգիստ ձևանալ՝ ասաց.

— Երբ ծնողին վտանգ է սպառնում, որդին ի՞նչ պիտի անի:

— Պարզ է, պիտի պաշտպանի,— միաժամանակ պատասխանեցին մայրն ու սիրածը:

Թորոսիկը խրախուսված շարունակեց.

— Մի ամիս է, ինչ սկսվել է պատերազմը, ինձ դեռ բանակ չեն կանչում, բայց ես ուզում եմ գնալ, հայրենիքը պաշտպանել. ի՞նչ կասեք...

Մաքրուհի տուտուն ու Մայրենին անակնկալի եկած նայեցին իրար. Թորոսիկն իսկույն ավելացրեց.

— Իմ մեջ խոսում է Սահասար պապի արյունը, որի գլուխը կացնով են թռցրել, մորեղբայրներիս արյունը, որոնք դերեզման անգամ չունեցան, հորս արյունն է ինձ վրեժի կոչում և բոլոր նրանց, որոնք սպանդանոց տարվեցին ու այլևս չվերադարձան:

Թեպետ Թորոսիկը փորձում էր անդորր փրկալ, սակայն հուզումից շուրթերը դողում էին այնպես, որ բառերը ելնում էին կցկտուր: Տեսնելով, որ մայրը դժվարանում է ուշի գալ՝ ասաց.

— Ուզո՞ւմ ես՝ չգնամ ու համարվեմ անարժան որդի...
Մաքրուհի տուտուն խայթվածի պես վեր թռավ:

— Հորդ արյունը կրողքե, թե որ չերթաս... — սպառնաց նա ու գրկելով որդուն՝ անզուսպ հեկեկաց, — ախր մենակ ումուզս դու ես, յավրում... հապա որ հանկարծ... հապա որ հանկարծ...

Նա դժվարացավ արտասանել վերջին բառերը, սակայն թորոսիկը հասկանալով հանգստացրեց.

— Բնազդս ասում է, որ թշնամու դնդակն ինձ չի կրպչելու: Ետ կգամ, մայր, — վստահացրեց նա ու ամոթխած շարունակեց, — պարտեզում վարդեր ցանիր, որ հարսանիքիս սեղանը զարդարես...

Մայրենին թեպետ չէր խոսում, բայց այնպես ջերմ էր նախում սիրածին... Դեմը կարծես սովորական թորոսիկը չէր, այլ բոլորովին մի նոր մարդ, որը հարգանքի հետ ազդում էր պատկառանք:

Երբ Մաքրուհի տուտուն գործով դուրս եկավ, նրանց շուրթերն իսկույն իրար ձուլվեցին. ինչ զգացմունք ասես, որ չկար այդ համբույրում՝ սիրո թախիծ, բաժանման կսկիծ, անհատակ կարոտ, իրար կորցնելու վախ, հանդիպման ցանկություն... Մայրենու համար դժվար էր սիրածիցն անջատվել, նույնը և թորոսիկի, սակայն վեհ էր բաժանումը, քանի որ այն պիտի պսակեր հաղթանակը, միայն թե... միայն թե նրանք դարձյալ իրար հանդիպեին ահա այսպես... ահա այսպես...

Սենյակը պտտվե՛ց... պտտվե՛ց... բացվեց առաստաղը կարծես ու ներս կաթեց աստղերի ցուլքը: Նրանք երանության մեջ անէացան, իմաստավորվեցին... Մայրենին հանկարծ ճչաց. երջանկությունիցն էր այդ... Ըչի վրա թորոսիկը մի պահ բացեց աչքերը, սակայն ընկերուհու մետաքս ուսերը կրկին անէացրին նրան...

2

Որքան էլ Մաքրուհի տուտուն որոշել էր տղային չվըշտացնելու համար կայարանում շարտասվել, այնքան հեշտ

խախտեց որոշումը. դժվար էր բաժանվել միամտոր որդուց ու տուն վերադառնալիս գրկել մենակությունը, մանավանդ, որ հայրենական տանից դուրս էին եկել շատերը և այլևս չէին վերադարձել... Թեպետ Թորոսիկն ամբողջ գիշեր խոսել էր հայրենիքին սպառնացող վտանգի ու իր պարտականության մասին, այնուամենայնիվ, երբ մոտեցել էր վճռական թոպեն, Մաքրուհի տուտունի մեջ ուժգնորեն գլուխ էր բարձրացրել մայրական զգացմունքը:

Տղան մորը հանգստացնելու համար ցույց տվեց կայարանում կուտակված նորակոշիկներին.

— Տեսնո՞ւմ ես, սրանք էլ մայր ունեն...

Մաքրուհի տուտուն անհարմար դրությունից ելնելով՝ պատասխանեց.

— Անուշ մանչս, հո չեմ ասի թե մի երթամ... սպկաչն... աչքս շատ է վախեցել:

Թորոսիկը լսում էր մորը ու նայում Մայրենուն: Մայրենին ամբողջ խոսակցության ընթացքում կանգնել էր լուռ, և այդ զսպվածությունը նոր փայլ էր տալիս նրա գեղւանի դեմքին: Երեկվանից, երբ երազկոտ աղջիկը տեղի տվեց իմաստավորված կնոջ, Թորոսիկը կարծես չէր հանաչում նրան... աչքերը, շուրթերը, մազերն անգամ նոր երանդ էին ստացել ու թովո՞ւմ էին... Ի՞նչը նրան այդպես փոփոցեց. կի՞նը... արթնացած կի՞նը... ահա նա, մայիսի պես շաղոտ կինը, և Թորոսիկը թողնում է նրան, երբ նա էրեկ նոր միայն բացվեց շուշանի պես իր ողջ շքեղությամբ:

Եվ Թորոսիկի մեջ հիացմունքի հետ հանկարծ ծագեց վախի զգացմունք. չէ՞ որ Մայրենին շա՛տ է գեղեցիկ, կարող են նրան հանգիստ շնորհել, ու նա դիմադրելով հանդերձ, վա՛յ թե զիջի անուշ հանցանքին:

Մայրենին կարծես զգալով Թորոսիկին տանջող ապրումները՝ նայեց ջերմ հանդիմանանքով.

— Կսպասեմ, կսպասեմ, թեկուզ տա՛ս տարի, միայն թե վերադարձիր:

Զանգի վրա կայարանում իրարանցում տիրեց: Մաքրուհի տուտուն փարվեց զավակին.

— Քանի որ կերթաս՝ մայրական օրհնանքս քեզ. թուրդ կարուկ լինի, իսկ կուռդ՝ զորեղ:

Թորոսիկն զգում էր, ինչպես մայրական հորդ արցունքից հավում էր իր կոկորդը. դժվարությամբ զսպելով իրեն՝ համբուրեց մորը, ձեռքը պարզեց Մայրենուն:

Մայրենու ձեռքը մորթված տատրակի պես էր թայրտում ընկերոջ ափի մեջ:

— Մայրենին քեզ ամանա՛թ, մայր,— խնդրեց Թորոսիկը:

Նա ուզում էր մորը գաղտնի բան ասել, սակայն, չգիտես ինչու միտքը փոխեց և աչքերում երևացող արցունքներից ամաչելով՝ անմիջապես գնացք բարձրացավ:

Մաքրուհի տուտուն կայարանից վերադարձավ մուրքալիերով: Բաժանման վիշտն այնքա՛ն էր ուժգին, որ նա կանգ էր առնում ամեն ծանոթի հանդիպելիս.

— Գնա՛ց մինուճարս...

— Ո՛ւր, Մաքրուհի տուտու:

— Բանակ գնաց, կամավոր:

— Ա՛յ ապրի Թորոսիկը,— բացականչեց ծանոթներից մեկը,— շնորհավորում եմ, որ այդպես հայրենասեր որդի ունես. դեհ, իհարկե, հայրենի հողն ու ջուր սիրող, հարգող պատանին այլ կերպ չէր կարող վարվել:

— Այդպես է,— սթափվեց Մաքրուհի տուտուն,— բայց մեր սիրտ է, դժվար խոսք կհասկանա:

— Ոչինչ, քիչ-քիչ կխաղաղվի,— խրախուսեց խոսակիցը:

Մաքրուհի տուտուն նրանից բաժանվելիս կարծես թե քալից հաստատ: Թորոսիկի արարքը հիացմունք է պատճառում ծանոթներին. այդ շոյում էր նրա մայրական ինքնասիրությունը:

Ավանային սովետի մոտով անցնելիս դեմը ելավ Ազավնչակը:

— Բարե ձեզ, Մաքրուհի տուտու, ո՞րտեղից:

— Կայարանից, նոր մանչուս ճամփու դրի:

— Ես էլ զույգ հղբայրներս ուղարկեցի,—ասաց Աղավնյակը, և հպարտ շեշտ կար նրա խոսքերում,—սովետական իշխանությունը մերն է. նա մեր շահերն է պաշտպանում, մենք էլ նրա. ճիշտ է:

Մաքրուհի տուտուշի տրամադրությունն Աղավնյակին հանդիպելիս ավելի բարձրացավ. եթե նրա եղբայրները, նույնպես պատանի, դնում են, հապա ինչո՞ւ չպիտի գնա Թորոսիկը. հետո ի՞նչ, որ մոր մինուճար զավակ է... Մայրը կսպասի սիրով, մայրը կսպասի գրկաբաց և երբ գա որդին, կմոռացվի անշատման դառնությունը:

Սակայն անդորրությունը, որ նա ստացել էր Թորոսիկի ծանոթին ու Աղավնյակին հանդիպելիս, տուն մտնելուն պես չքացավ... Տղայի սենյակը բաճալիս մենակության պաղ շունչը գրկեց նրան, ու նա նստեց, ավելի շուտ ընկավ Թորոսիկի մահճակալին:

— Գիշերները որ բացվես, ո՞վ մեջքդ ծածկե, մանչս... Շորդ որ աղտոտվի, ո՞վ լվանա, մանչս,—փղձկաց նա,— դրքերիդ, նկարներիդ մաաաղ, հավքի պես ձեռքես թուար, փետուրներիդ թողիր հիշատակ:

Մանր քայլվածքով ներս մտավ Մանուկ-Փիլիպոսը: Ես նստեց լուս, իրար վրայից ծխեց մի քանի անգամ² ու մխիթարական խոսք չգտնելով՝ ասաց.

— Զանք՝մ, ինչո՞ւ կուլաս... չիգյար է, կմոռա, թող մոռա... հապա ի՞նչպես, հայրենիք է, նա էլ իրենը կուզե ու հառաչելով շարունակեց.

— Իմ մանչն էլ թող ողջ մնար, ես էլ թող այսօր քեզ պես նրան ճամփու դնեի, ու թող իմ չիգյարն էլ մամուար... Բարդու նման եմ, ոչ պտուղ կուտամ, ոչ սովեր. դու, որ փառավորվել ես, կուլա՞ս, կնիկ:

Ու կարծես ներդրություն խնդրելով՝ ավելացրեց.

— Ժամի ութին արտոդրական խորհրդակցություն է նշանակված. հանգստացիր, ե՛կ. գործ է, շնեղանա՞ս...

Մաքրուհի տուտուն սիրում էր նշանակված ժամից ա-

ուսչ տեղումը լինել: Հարկավոր է, պիտի գնալ: Այլովոյ աշ-
քերը հովացնելու համար նա լվացվեց և դուրս եկավ: Թե-
պետ ոտները դժվարութեամբ էին շարժվում, սակայն նա
հասավ ակումբ, տեղավորվեց աննկատելի մի անկյունում և
սեփական խոհերը ցրելու համար սկսեց կարգալ պատերին
փակցված ուղմական պլակատները:

Հետզհետե հավաքվեցին արտելականները. կանանցից
շատերի կոպերը կարմրած էին, բայց նրանք աշխատում էին
ցույց չտալ, որ լաց են եղել: Արտասուքը նրանց լցրել էր
զայրույթով ու ատելութեամբ դեպի թշնամին, որը նենգա-
բար խախտել էր խաղաղությունը, բաժանելով իրենց ամու-
սիներեից, զավակներից: Ու այդ մեծ ցասումը նրանք իրենց
մեջ առած՝ եկել էին խոսելու մի կարևոր խնդրի մասին. ինչ-
պե՞ս անել, որ արտագրութեան վրա շանդրադառնա բացակա
ձեռների պակասը:

Խոսքը տրվեց Հայկանին:

Երբ արտելի նոր նախագահը մոտեցավ ամբիոնին, ժո-
ղովականներն իսկույն լռեցին.

— Թեպետ այս հավաքը կոչվում է արտագրական, բայց
ես ուզում եմ սկսել հեռուներից: Հիշո՞ւմ եք ներդաղթը:
Տո՞ն էր... տոն էր, երբ մահը, սարսափը, արյունը, խա-
րուկները՝ թողած՝ ոտք դրինք մայրենի հողը: Հիշո՞ւմ եք,
թե ինչպիսի սիրով մեզ ընդունեց Հայաստանը և մենք ջե-
փորների նվազի տակ Մաղկավանի հիմքը դրինք: Կարճ ժա-
մանակվա մեջ իրոք ծաղկեց մեր ավանը: Մեր մանուկներն
աճեցին խաղաղութեան մեջ, աճեցին ու ավանը լցվեց նոր
սերունդով: Այժմ պատերազմ է: Այն, ինչ որ սուրբ է, ազ-
նիվ, պիտի պաշտպանվի: Ու մեկնեցին մեր երիտասարդ-
ները՝ պաշտպանելու այդ ազնիվը: Բնկեր Մուրտուզն ասում
է, որ մեր գործն արդար է, մենք կհաղթենք: Եվ կհաղթենք:
Մենք Ստալին ունենք, չե՞նք վախենա: Մեր մեջ կասկածա-
միտներ ու թուլամորթներ չլինեն: Մայրերը լալի՞ս են, թող
լան: Հարսները տխրո՞ւմ են, թող տխրեն: Արցունքն ու
տիրութիւնը նույնպես կգոչե վրեժ. այս այսքան: Հիմա,

սիրելի արտելականներ, եկեք խորհներ, թե ինչպես անենք, որ Հայրենական Պատերազմի ժամանակ գերակատարենք մեր պլանները: Գիտեմ, որ արտելի աշխատողները հիմա գլխավորապես կանայք են, այն էլ ծեր կամ անփորձ: Ծնորհքն էլ այն է, որ այդպիսի կադրերով լարենք մեր ուժերը: Մեր մարտիկներին ցամքոց, ճերմակեղեն հասցնենք: Ո՞վ է ցանկանում արտահայտվել:

Մտազբաղ բեմ բարձրացավ Մաքրուհի տուտուն: Երաքայվածքն այնքան էր երերուն ու դեմքին այնպի՛սի թախիժ կար, որ դահլիճում տիրեց ամենակուլ լուռ-թյուն: Նա փորձեց խոսել, սակայն մայրական սիրտը դեմ առավ կոկորդին...

Հոսեցին կուտակված արցունքները և Մաքրուհի տուտուն հետզհետե գտավ իրեն:

Ահա նստել են արտելի նոր աշխատողները՝ դողդոջ պապերն ու տատերը. նրանք եկել են դադահանների մոտ փոխարինելու հայրենիքը պաշտպանող թոռներին: Ահա նստել են երիտասարդ կանայք, աղջիկներ, որոնք ընդունվել են՝ բանակ մեկնած սիրածների տեղն աշխատելու: Մայրենին ջերմ նայում է Մաքրուհի տուտույին, կարծես ասում .

— Դու մենակ չե՛ս...

Ու արդարև, ինչպե՞ս կարող է Մաքրուհի տուտուն մենակ լինել, երբ կան իր նման բազմաթիվ մայրեր: Վիշտն ընդհանուր է, պայքարն էլ պիտի լինի ընդհանուր: Աշխատանքը հիմա պայքար է. դժվարին պայմաններում պիտի անել այն, ինչ որ խաղաղ օրերին թվում էր անհնարին. ուստի հարկավոր է նվիրվածություն. այնպիսի նվիրվածություն, ինչպիսին որ մարտիկներն են ցուցաբերում ճակատում:

Երբ Մաքրուհի տուտուն բուն ծափերի տակ ցած իջավ, նրա տեղն իսկույն գրավեց Մանուկ-Փիլիպոսը: Ո՛չ ձի բռնակալ չի կարողացել ծունկի բերել ազատասեր ռուս ժողովրդին, Սովետական Միության ժողովուրդներին:

— Մեր զավակները կվերադառնան հաղթանակով, և,

որպեսզի մենք կարողանանք համարձակ դիմավորել նրանց, հարկավոր է գործել, որպես թիկունքի հերոսներ:

— Կգործենք,—խոսք վերցրեց Մայրենին,—երկու ամիս չկա, ինչ սկսվել է պատերազմը, սակայն մտուրներում և մանկապարտեզներում ընդունվել են այնքան նոր երեխա, որ ստիպված ենք լրացուցիչ շենքերի մասին մտածել: Այդ նշանակում է, որ այդքան նոր մայր դուրս է եկել աշխատանքի: Բայց միայն դուրս գալը չէ կարևոր, այլ այն, որ նրանք ցանկանում են բարգավաճ դրուժյան մեջ պահել կուխողներն ու գործարանները, որ վերելքի դժվարին պայմաններում զարգացման բարձր աստիճանի հասցրեց ժողովուրդը:

3

Անցան օրեր, շաբաթները դարձան ամիս, և Մաքրուհի տուտուլի վիշտը, ինչպես ամեն մի հուլզ, քիչ-քիչ մեղմացավ: Թեպետ նրա լայնանիստ ճակատից անբաժան էր թախիծը, սակայն այդ թախիծի մեջ կար և սփոփանք. չէ՞ որ Թորոսիկը, ինչպես ամենքն են ասում, պատանի տեղով պաշտպանում է հայրենիքը:

Հարկավ, ծնողական զգացմունքը հաճախ վերցնում էր վեր, և նա կարոտով կանգնում էր պատուհանի առաջ՝ սպասելու, սակայն երբ ռադիոն հաղորդում էր Կարմիր Բանակի հերոսության մասին, անմիջապես լցվում էր հպարտությամբ.

— Մեռնեմ Կարմիր Բանակին, իմ մանչն էլ մեզն է... շշնջում էր նա ու ամեն օր խնամքով մաքրում Թորոսիկի սենյակը, սրբում իրերի փոշին, հարդարում անկողինը: Նա Թորոսիկի ներքնակը հաճախ հանում էր արև, խարատելու, սակայն բարձի երեսն ու սավանը չէր փոխում.

— Վրայից մանչուս անուշ հոտը կուգա... թող մնա... հուզվում էր մայրը,—ախ, յարաբ, այսօր էլ նամակ կըստանամ:

Եվ արդարև, հայտնվում էր նամակաբերը: նա քաջ ծանոթ լինելով Մաքրուհի տուտուչի անհամբեր բնավորութեանը՝ հեռվից ցույց էր տալիս ծրարը: Մաքրուհի տուտուն այդ տեսնելուն պես, շնայած ծեր հասակին, ճկուն աղջկա պես էր վազում բակ:

— Տնաշեն, այնպես ձեռք-ոտք իրար կխառնես, որ կարծես տղիցդ տարիներով լուր շունես,—ասում էր նամակաբերը:

— Հասկա մորը այդպես բա՞ն կըսեն,—մտերմիկ հանդիմանում էր Մաքրուհի տուտուն,—ծնողական կարոտը որ կա, ծով է, կշտում չկա. մանչս այդ գիտենալով է, որ այդպես շուտ-շուտ կգրե:

Եվ իսկապես, Թորոսիկը գրում էր համարյա ամեն օր. նա նախ հարցնում էր մոր ու Մայրենու որպիսությունը, ապա պատմում իր մասին:

«Երբ առաջին անգամ հանդիպեցի ոմբակոծման, վախից կուշ եկա... բայց այժմ ֆուգասային ուղմբի ունոցին վարժվել եմ այնպես, ինչպես ջրաղացպանը շախշախի ձայնին»:

— Ինձ հանգստացնելու համար կխաբես, մանչս,—ընթերցանությունն ընդհատում էր մայրը,—մարդս այդպիսի գարհուրելի ձայնին վարժվի՞:

Եվ ահա Մաքրուհի տուտուն ու Մայրենին սկսեցին Թորոսիկի նամակների միջից հանել ճակատային թերթերից կտրած ու խնամքով ծալած հոդվածներ. հոդվածներ այն մասին, թե ինչպես հետախույզ Թորոսիկը կարողանում է հենց թշնամու քթի տակ ուտումնասիրել թշնամու դիրբերը, և թե ինչպես մի անգամ մարտական առաջադրանքը կատարելիս նա հանդիպում է հակառակորդի ավտոմատավորների և փոխանակ պահվելու՝ ամբողջ մի ժամ կրակի տակ, ցեխերի ու ճահիճների միջից սողալով ճիշտ ժամանակին տեղ է հասնում:

Մայրենին ժպտաց հպարտությունից, իսկ Մաքրուհի տուտուչի թևերը թուլացան... նա թեպետ համոզված էր, որ ողջ է Թորոսիկը, ու Հաճելի զգացմունքը տիրում էր

նրան որդու ջաջ արարքի համար, բայց սիրտը թալտում Լր-
իսկ եթե հանկարծ գնդակը դիպչեր իր զավակի... իսկ եթե
հանկարծ սպանվեր Թորոսիկը:

Այդ մտքից սառն քրտինքը պատեց նրան ու շնչառու-
թյունը հուզումից փոխվեց հեքի:

Գիշերվա անդորրութեան մեջ առանձին հմայքով էր
լսվում ճախարակների երգը. հուզիչ էր ոչ միայն երգը,
այլ և տատիկների աշխատանքը: Ահա նրանք շարքով նստել
են հատակին և անդուլ պտտում են, պտտում: Նրանք ցան-
կանում են իրենց ծեր տեղով օգտակար լինել հայրենիքին...
Նվիրվածութեան զգացումից օրական երեք կիրոգրամ միջա-
թեղ փաթաթելու փոխարեն տալիս են տասը և երբ ցեխի վա-
րիչ Մաքրուհի տուտուն ասում էր՝ տուն երթալու ատեն է,
նրանք պատասխանում են.

— Տունը տեղից չի փախչի. թող մի քիչ էլ բանենք մեր
բանակ մեկնած զավակների փոխարեն:

Նրանց չէր հաղթում հոգնածութունը, միայն կարոտն
էր մաշում, հեռավոր սիրելիներին մեկ էլ տեսնելու ան-
համբերութունը:

Հաջիվարդ տատիկը, որ ամբողջ տաս տարի թողել էր
շուկահանոցը, շտեմնված արագութեամբ էր շարժում ձեռ-
ները: Համասփյուռն օրական հինգ ցամքոցի փոխարեն տա-
լիս էր քսանը: Սենեքերիմ աղան, որի բերանում համարյա
ատամ չէր մնացել, տրիկոտածի ցեխի ավելցուկներից գոր-
ծում էր սանձեր. այդ սանձերը ռազմի դաշտում շատ էին
պետքական... Նրա կողքին նստել էր Թագ խաթունը, կտոր-
տանքներ էր իրար միացնում: Նա այնքան էր կծկված, որ
գետնի վրա համարյա չէր նկատվում. ուներ աշխատող
հարսներ, սակայն տանը մնալ չէր կարողանում.

— Ես էլ կուզեմ իմ չափով Հայրենական Պատերազմին
օգտակար լինել, — բացատրում էր նա ու ասածը համեմուտ
ստածով. — «Կաթիլ-կաթիլ գետ կգառնա, ետքը կերթա ծով
կղառնա»:

Տրիկոտածի ու կարի ցեխերն զբաղված էին ռազմական

պատվերով. արտեղականներից յուրաքանչյուրը գուշպա, ճերմակեղեն պատրաստելիս մտածում էր. «Գուցե իմ կարած շապիկը ճահատում հաղնի իմ էրիկը, իմ աղբարը... աղբարիս ընկերը... սիրածս գուցե: Գուցե մի ուռս, ուզրեկ, տաջիկ. ամենքն էլ աղբար են, մարտիկ են, հայրենիք կպաշտպանեն»:

Ու ջերմ հուշերից ելնելով՝ աշխատում էին կարել լավ և արագ:

Միհրան դային մեծ մկրատով ձևում էր կտորը, բարձում սարի պես: Ուստինեն շտապ ընդունում էր, բաժանում կարողներին: Կես ժամ շանցած՝ աղջիկները ձայնում էին.

— Միհրա՛ն՝ դայի... Միհրա՛ն՝ դայի:

— Ի՞նչ է, սարը հերկեցի՞ք, — հարցնում էր նա գլուխը բարձրացնելով: Արդարև, ձևած կտորների հսկայական կույտը իջել էր արդեն:

Մեքենայացված ջուլհականոցում դաղգահներն աղմկում էին այնպես, որ հնարավոր չէր միմյանց լսել, սակայն կարելի էր առանց լսելու էլ հասկանալ: Երանյակն աշխատում է երեք դաղգահի վրա, հասեք նրան ու անցեք: Արդեն հասնում են: Արդեն անցնում են: Մայրենին գործում է հինգ դաղգահի վրա:

Սեմիրճյանը հրճվում է. նա և ցեխի վարիչ է և ամեն, ամեն ինչ, միայն թե միշտ այդպես բարձր լինի արտադրանքը:

Նվ ամեն աշխատանքային օրվա վերջում բեռնակիր մեքենաները կանգնում էին մեծ շենքի առաջ, ու պահեստապետ Իսկուհին, զարմանալի արագաշարժ ու փոքրիկ մի կին, բաց էր թողնում հազարավոր կտորներով արտադրանք ու արժանապատվության մեծ զգացումով գրանցում.

— Ճակատի համար:

Տարօրինակ հատկություն ունի ծերությունը, նա նորից մանկացնում է մարդուն, դարձնում պատանի: Տեսեք Մանուկ-Փիլիպոսին: Ի՞նչ բան է նստելը. — բոշ բան... նա

ամբողջ օրը ոտքի է, վազվզում է ցեխից-ցեխ, անձամբ տեսնում, ստուգում, շոշափում. բաշխում է հումուլյին ու օժանդակ նյութներն այնպես, որ արդյունքը լինի նպատակահարմար: Գլխավոր վարպետի պես շարժուն է և Հալիանը: Նրա առանձնասենյակը ցեխերն են: Պետք եղած դեպքում ոչ թե կանչում է մարդկանց, այլ ինքն է վազում նրանց մոտ, տեղումն է լուծում խնդիրները:

— Թչլի համարը չի՞ համապատասխանում սանրին, ևս ցույց կտամ այդպես թեև ուղարկողին... Ասում են պատերազմական շրջան է, յուր՝ տարեք... Նս ցույց կտամ այդպես ասողին. Ղալբերի և ծուլերի գրույց է դա. ինչ արատ որ կա, ուզում են պատերազմի վզին փաթաթել, ջրիցը չօր դուրս գալ:

Ու նա առանց սպասելու մատակարարման լիազորին՝ անձամբ մեկնում էր այն վայրերը, որանդից ստանում էր հումուլյթը:

— Բենդին չկա՞. մեքենան չի՞ աշխատում, ոտքով կերթամ:

Ու նա կտրում էր դարուփոս տարածությունը. հոգնում էր, սակայն արտելականների մոտ ցույց չէր տալիս: Գիշերները մի քանի անգամ բեխերն էր մտնում՝ երկրորդ հերթի աշխատանքն ստուգելու: Անկողնում անգամ դադար չունեց Հալիանը... մազութ չկա, արտադրությունը կարող է կանգ առնել, մեքենաները շարքից դուրս են գալիս, հարկավոր է վերանորոգել. կաթնան նստվածք է տվել, անհրաժեշտ է կարգի գցել: Պետք է մտածել արտելականների սնունդի մասին, կազմակերպել օժանդակ տնտեսություն: Հազար կնճոտ հարց, հազար դժվար պատասխան, իսկ թշնամին այնտեղ առաջ է խցկվում, նահանջում են մերոնք... Թեպետ նա համոզված էր, որ նահանջը դեռ չի նշանակում պարտություն, քանի որ հաղթելու է արդարությունը, այնուամենայնիվ ծանր էին օրերը...

Մանկամտուր մտնելուն պես զգացվում էր, որ Վարդենին ու մաքրությունը սերտ բարեկամներ էին: Երբ խաղասենյակում վազվզում էին երեխաները՝ փայլուն հատակում տեսնում էին իրենց պատկերը, իսկ ննջարանը... կապտավուն առաստաղի տակ, ինչպես երկնքի, ձգված էին միատեսակ մահճակալների խնամքոտ շարաններ: Ծածկոցներն այնպես սպիտակ էին, որ կարծես լեռների ձյունն էր արևից դժգոհ փախել, պահվել այդ զոռ սենյակում... Մանեթը դարձաբարձ էր դրոշակներով և դուչնզզույն ժապավեններով: Խաղացող մանկիկաների ծիծաղը խառնվում էր պատուհանի մոտով թռչկոտող թռչունների դայլայլին:

Ընդարձակ բակում, ծառերի ստվերների տակ դասավորված էին ցածրիկ սեղաններ՝ շորսական աթոռներով: Միատեսակ հագնված երեխաները նախաճաշով էին զրաղված:

— Պատերազմի ժամանակ ճերմակ հաց, կաթ, ձու և պանիր,— հիացավ թղթակիցը:

— Այդպես էլ պետք է,— պայծառացավ Վարդենին,— ուզում ենք, որ հայրերը ճակատում հանգիստ լինեն իրենց զավակների համար: Արտելը կազմակերպել է օժանդակ անտեսություն. ունենք կովեր, խոզեր ու հավեր:

— Իսկ այս օրինակելի մաքրությունը հապա... հրա-

շալի է ձեզ մոտ, կարծես երեխաների հանդստի տուն լինի-
տեսե՛ք, տեսե՛ք, դրանց այտերը տեսեք...

— Ես ամեն օր եմ տեսնում, դուք տեսեք, — շոյված
ինքնասիրությամբ պատասխանեց Վարդենին:

— Քանի՞ երեխա ունեք:

— Հարյուրհիսուն, որոնցից տասը զոհվածներն են...

— Արդեն այդքան զոհվածներ՞ր կան ձեր ավանում:
Վարդենին տխուր ձայնեց.

— Այո՛...

Աշունն այնպե՛ս պերճ էր ու այնպես նախշուն:
Կարմրել էր տանձենին. բարդիները կարծես վառվում էին
մոմերի պես. ծիրանին հագել էր ծիրանի, իսկ խնձորենին
գարնան սպիտակ վրանի փոխարեն այս անգամ դարկել էր
դեղին: Քրիզանթեմները շնչում էին մայրամուտի երգը:
Չմեռնուկ մրգերով ծանրաբեռնված ծառերը խոնարհվել էին,
պտղատու ծառը խոնարհ է լինում... իսկ թփերի վրա խըն-
կով և բույրով օծվել էր մուսկաթը:

Մայրենին աշխատանքից հետո ելավ բլրակ ու ոտները
ծանոթ կածանով նրան տարան դեպի դալար բարդին, որի
վրա Թորոսիկը փորագրել էր ժրկու տառ—Մ. Թ... Տառերը
ջերմ սեղմվել էին իրար, ինչպես իրենք այդ ծառի տակ...
Մայրենին հիշեց այդ օրը, դեմքը պատեց երանելի մի
ժպիտ:

Դալար բարդին հասակ կառնի ու նրա հետ կմեծանան,
կբարձրանան տառերը... Բարդին մի օր կդառնա երկնա-
հուպ, կճոճվեն օդում տառերը... Թորոսիկի հետ նրանք
դարձյալ կնստեն կողք-կողքի, բայց արդեն ոչ պատանի ու
ներքևից վերև կնայեն իրենց տառերին ու միշտ կհիշեն այն
օրը, երբ նորատունիկ ծառի տակ իրար սեր շնչացին ու
դրոշմեցին այն անդրանիկ համբույրով:

— Իսկ հիմա հեռո՞ւ ես, սիրելի Թորոս... մրմնջաց
Մայրենին, փարվելով նազիրան ծառին, երբ հանկարծ մթնե-
ցին աչքերը ու նա նստեց. ի՞նչ է, մրսե՞լ է, կերա՞ծը չի
մարսում, հապա ինչո՞ւ սիրտը խառնեց:

Հաջորդ օրը կիրակի էր: Մայրենին Մաքրուհի տուտույթ

խնդրանքով առավոտից դնաց նրա մոտ: Թորոսիկի ձեռքով տնկած խարջին և մուսկաթը առատ բերք էին տվել: Հարկավոր էր քաղել խաղողը, պատրաստել գինի, հարսանիքի գինի... Հարկավոր էր շիրալից պատտեղ եփել, շուջուխ ու ղեղձի ալանու հեռ ուղարկել Թորոսիկին, որպես նոր տարվա նվեր: Գործը շատ, աշնան օրը կարճ: Մաքրուհի տուտուն ու Մայրենին եռանդով կրում էին խաղողի զամբուղները, մեկը մայրական անհուն սիրով, քանի որ շարաղը պատրաստվելու էր որդու համար, իսկ մյուսը սրտի թրթիռով, քանի որ ուտելու էր սիրածը:

— Աղվորս, կարպետը փոխը ընկուզենու տակ, հանգրստացիր, ես երթամ հաց թրջեմ, որ կակղի,—ասաց Մաքրուհի տուտուն:

Մայրենին հաճույքով կատարեց առաջարկը: Նա թեպետ հիվանդ չէր, բայց զգում էր անսովոր թուլություն: Այդպես լավ է, գլուխը բարձին, հայացքը երկնքին, իսկ մտքերը հեռու, հեռու... ռազմադաշտ. արդյոք Թորոսիկն զգու՞մ է, որ Մայրենին հիմա մտածում է իր մասին...

Թորոսիկը գրում էր.

«Ամեն անգամ, երբ պառկում եմ, մտովին համբուրում եմ քեզ: Ամեն առավոտ, երբ դարթնում եմ, մտովին շարունակում եմ զրույցը քեզ հետ... Ամեն անգամ նոր գրոհի գնալիս ասում եմ. հայրենիքիս սիրուն և քո, որովհետև դու էլ հայրենիք ես, երջանկություն ես ու ես այդ երջանկությունը պիտի վայելեմ՝ ոչնչացնելով թշնամուն»:

Մայրենին սթափվեց, երբ սինին բռնած մոտեցավ Մաքրուհի տուտուն:

— Գիտեմ, որ փոխինդ շատ կսիրես, շաղախեցի: Կե՛ր, կե՛ր, աղվորս,—ասաց նա ու հառաչեց,—մանչս էլ շատ կսիրե, կուզեմ մի քանի գունդ փաթաթել լավաշի մեջ ու զրկել. ի՞նչ կասես, կհասնի՞:

— Ինչո՞ւ չպիտի հասնի,—պատասխանեց Մայրենին,— երևակայում եմ նրա խինդը, երբ ծանրոցը բացելիս զգամոր սերը...

— Մոր սե՛րը... Բարով մանչս դա, պսակվես, մայր

գառնաս, այն ատեն կիմանաս, թե ինչ բան է մոր սերը, — ձայնեց Մաքրուհի տուտուն ու թրջած լավաշի մեջ փոխինդ դնելով՝ պարզեց Մայրենուն, — մեկ բրդուէր քո փոխարեն կնր, մեկն էլ իմ մանչու... քեզ որ կնայեմ՝ մանչուս կողքիդ կտեսնեմ... կարտը քեզնից կանեմ:

Մայրենին զգացված համբուրեց Մաքրուհի տուտույի ձեռքը:

Նա ուզում էր ասել՝ ես էլ Թորոսիկի կարտը քեզանից եմ առնում, սակայն անհարմար զգալով՝ փոխինդը բերանը տարավ:

Եվ ահա բոված, յուզով շաղախած ալյուրի հոտից հանկարծ խառնեց Մայրենու սիրտը... նա բնազդով շուռ տվեց դեմքը, սակայն Մաքրուհի տուտույի փորձառու աչքը նկատեց այն ու նա խորհրդավոր կծեց մատը...

Եվ մտքերով ու մրգերով հասուն աշխան մեջ երկու կին՝ մեկը դեռատի, մյուսն ալևոր, նայեցին իրար. հասկացան իրար... Մեկին պատեց թանձր կարմիր, մյուսին զարմանք... Ե՞րբ, այդ ե՞րբ... չէ՞ որ նշանածներ էին լով...

Իսկ ի՞նչ կասի դուռ-դրկիցը... կհավատա՞ն արդյոք, որ Թորոսիկիցն է... Ի՞նչ, ո՞չ Թորոսիկից. ո՛չ, ո՛չ, Մայրենին պարկեշտ է. ահա նա խոնարհել է գլուխն ու արտասփում է...

— Մարդ են, ջահել են... մայրական ներողամտությամբ խորհեց Մաքրուհի տուտուն և հիշեց Թորոսիկին, երբ նա կայարանում իրեն մի կողմ տանելով՝ ուզում էր դադարնի բան ասել, սակայն կարծես ամոթից լռեց ու միայն ասաց. «Մայրենին քեզ ամանաթ, մայր»:

Ու Մաքրուհի տուտուն անհիշաչարությամբ համբուրեց Մայրենուն ու սրբելով նրա արցունքները՝ շննջաց.

— Հա՛րսս...

2

Թեպետ Մաքրուհի տուտուն ընդունում էր ցեխի օրական արտադրանքը, սակայն միտքը բոլորովին այլ բանով էր զբաղված:

Համասփյուռն ասում է, որ աղջիկը հիվանդ է, գան-
գատվում է գլխացավից, լաց է լինում, սակայն որքան էլ
Մայրենին զանազան հիվանդությունների տակ քուլարկի
էությունը և խուսափի ծանոթներին հանդիպելուց, այնու-
ամենայնիվ չի կարողանա դադարեցնել մանկան աճը. մի օր
էլ աճա նկատվեց... Որոշ մարդիկ հարգում են ավանդական
սովորույթը, խեթ կնայեն Մայրենուն, և նա, ո՞վ իմանա, գու-
ցե ձնշվի ու կատարի հիմարություն:

Մաքրուհի՝ տուտուն սարսափած թողեց աշխատանքը,
ոչնչանա՞ Քորոսիկի պտուղը... ո՞հ, ո՞չ, գուցե նախախնա-
մությունն է կամեցել, որ այդպես լինի. թող աճի այդ շա-
ռավիղը՝ հին հայրենիքից ձգված դեպի նոր հայրենիք:

Իրիկնապահին Մաքրուհի տուտուն զնայց Մանուկ-Փի-
լիպոսի մոտ ու խնդրին հեռվից-հեռու մոտենալով՝ բացա-
կանչեց.

— Հապա՞, Փիլիպոս աղբար...

Ծերունին, որպես զարմանքի նշան՝ տարուբերեց գլու-
խը.

— Էֆերի՞մ Քորոսիկ... իսկ դու կըսեիր, որ մանչդ
հալա չոջուխ է, հհիշե՞ա: Բայց այդ ե՞րբ...

— Ձահեկներին չես հսկի,— խորհրդավոր նկատեց Մա-
քուհի տուտուն,— սիրտս քեզ բացելու նպատակն այն է,
Փիլիպոս աղբար, որ մեկտեղ երթանք Համասփյուռնի մոտ և
դու զրույցը սարեն-ձորեն սկսելով՝ բերես հասցնես այդ
խնդրին:

Մանուկ-Փիլիպոսը ծիծաղեց.

— Հապա աղջիկ ընտրել-նշանելը կատա՞կ կարծեցիր:

Ու երեկոյան Մաքրուհի տուտուն զամբոյուղը լցրեց ըն-
տիր մրդերով, երեսը զարդարեց ծաղիկներով և Մանուկ-
Փիլիպոսի հետ բռնեց Համասփյուռենց տան ճանապարհը:

Ձանդի վրա դուռը բացեց Մայրենին: Այն օրվանից, ինչ
նա Քորոսիկենց պարտեզում մատնվեց, որպես կին, խու-
սափում էր Մաքրուհի տուտույից ու հանկարծ Մաքրուհի
տուտուն ինքն իր ոտքով է գալիս և այն էլ Մանուկ-Փիլի-

պոսի պես պատկանելի անձնավորութեան հետ... Այդ ի՞նչ է նշանակում:

Մաքրուհի տուտուն նրա հուզումը նկատելով՝ ասաց.

— Ի՞նչպես ես, աղփորս...

Այդ հարցի մեջ այնքան ջերմութիւն կար ու այնքան մաշրութիւն, որ Մայրենին պայծառացալ ու վախի արցունքները, որոնք արդեն կախվել էին կոպերից, ցողի նման գոլորշիացան,

Համասփյուռը հարգանքով դիմավորեց հյուրերին.

— Ոտներդ հինա էք դրել, մեր կողմերը չեք երևա, աստված խերն ընե...

— Հյուր երթալու տանն չի բավեր,— անկեղծ պատասխանեց Մաքրուհի տուտուն,— մենակ կին՝ մինչև աշխատանքէն զամ, եփեմ թխեմ, մութը կընկնի,— ասաց նա զամբջուղը մեջտեղ դնելով,— մեր բաղաչի ընտիր պտուղներն են. դեղձն ու խաղողը թորոսիկի տնկածն է. ա՛խ, մանչ, դալար ձեռներիդ մատաղ, ե՛րբ ետ կուգաս, որ կարոտս առնեմ ու թե՛ մահանում՝ աչքերս բաց չմնան:

Համասփյուռն զգացված կախեց գլուխը, իսկ Մանուկ-Փիլիպոսը հասկացնելով Մայրենուն, որ հեռանա, խիստ ձայնեց.

— Դատարկ բաներ կգրուցես, Մաքրուհի, դեռ տատ պիտի դառնաս, թոռ պիտի մեծացնես, ի՞նչ մեռնելու մասին կխորհես:

Մաքրուհի տուտուն իմաստալից նայեց ծերունուն.

— Թո՛ռ կըսես...

— Այո, թոռ կըսեմ... թոռ կըսեմ,— կրկնեց նա, ուրիշ խոսք չգտնելով,— լսեցի՞ր, Համաս:

— Լսելը լսեցի, բայց տերը գիտե, թե երբ կփվը կվերջանա, որ թորոսիկը գա:

— Թորոսիկի գալուն հետ ի՞նչ գործ ունես, ջանքւմ,— ընդհատեց Մանուկ-Փիլիպոսը,— տղան որ ուզենա՝ առանց հորը սպասելու կծնվի...

Եվ Մանուկ-Փիլիպոսը խորհրդավոր նայեց Մաքրուհի

տուտուլին: Մաքրուհի տուտուն շարժումներով նրան ինչ որ
բան հասկացրեց:

Մերունին դժվար պարտականությանը վերջ տալու հա-
մար ասաց.

— Համաս, թե ճիշտը կուզես իմանալ՝ եկել ենք, որ մեր
հարսը տանենք:

— Ինչպես կտեսնեմ կատակել շատ կսիրես,—բարի
նկատեց Համասփյուռը,—ի՞նչպես թե տանեք:

— Զարմանալու բան չկա: Տեսել ենք, որ հարսը կես-
ջանց մոտ ապրի:

— Եթե արդեն հարս է,—վրա բերեց Համասփյուռը:

Մանուկ-Փիլիպոսը դարձյալ նեղն ընկնելով նայեց Մաք-
րուհի տուտուլին: Մաքրուհի տուտուն խնդրին մոտենալու
ալլ միջոց չգտնելով՝ վրա տվեց.

— Ես արդեն պսակել եմ նրանց, Համաս...

Համասփյուռը համբերությունից դուրս եկավ.

— Այսօր շատ խրթին բաներից կըրուցեք, ուղեղս չի
մտներ: Թե լեզուներիդ տակ հանգուցց կա՝ շիտակ ըսեք, որ
հասկնամ:

Մանուկ-Փիլիպոսը կարծես համարձակություն ձեռք բե-
րելու համար վառեց ծխախոտը և ամեն կերպ աշխատելով
անդորր ձևանալ՝ ասաց.

— Որ այդպես է, եկ ծուռ նստենք, ուղիղ խոսենք. ա-
դաթը ադաթ, ջահելությունը ջահելություն. աղջիկդ ծոցվոր
է... Գուցնդ մի թոցնի, Թորոսիկիցն է ծոցվոր, հիմա հաս-
կացա՞ր:

Համասփյուռն անակնկալից ետ-ետ գնաց:

— Մեղա՛... մեղա՛,—բացականչեց նա ու կարծես նոր
միայն եղելությունն ըմբռնելով՝ այլայլվեց,—աղջկանը
սկզբից շեծողը՝ վերջը իր ծնկները կծեծե... ինչո՞ւ թողի,
որ...

— Ոչ մատդ խածե, ոչ աղջկանդ սաստիր,—խոսեց
Մաքրուհի տուտուն,—գեպք է, պատահել է: Սիրածեն հա-
վասը շառած՝ անմուրազ երթալը զոռ բան է. ջահել եղել
ես, գիտես... Հիմա խնդիրն այն է, խնամի, որ հարսնիկիս

քեֆին չդիպչես ու մեկ էլ ըսելս այն է, որ կուզենք մեր հարսին մեր տուն տանել. թող մարդու տանն ապրի, որ այսց լեզուն վրան շերկարի:

Թեպետ Համասփյուռը լսում էր, սակայն հուզումը չէր թողնում որ կենտրոնանար: Մանուկ-Փիլիպոսն այդ նկատելով՝ ժիր վրա տվեց.

— Բարով, երբ Թորոսիկը վերադառնա՝ կնունքն ու հարսնիքը մեկտեղ կընենք. ուրախությունը կրկնակի, ծախսը մեկ. հը, ի՞նչ ըսիր, շժմած Համաս:

Ու տեսնելով, որ կատակն էլ նշանակություն չունեցավ, խիստ բողբոջեց.

— Երկու-երկու ելնենք դանք, լեզվե-բերնե ընկնենք, կոկորդներս շորանա, իսկ դու, տնաշեն, տեղեդ շես ալ շարժվեր, որ սուրճ եփես՝ հրամցնես: Մենք քեզ ավետիս բերինք, դու ունքերդ հավաքեցիր:

Ու առանց սպասելու, մինչև որ Համասփյուռը որոշեր անելիքը, նա կանչեց Մայրենուն:

Մայրենին ներս մտավ դլխիկոր ու անհամարձակ կանգնեց դրան մոտ: Ամենասոսկալին մոր աչքերին նայելու էր... Որովհետև Մաքրուհի տուտուն ու Մանուկ-Փիլիպոսը տեղյակ էին եղելությանը, մինչդեռ մայրը նոր էր իմանում:

— Առաջ եկ, աղվորս, ու համբուրե մորդ ձեռքը, — առաջարկեց Մաքրուհի տուտուն, — իսկ դու, խնամի, — դարձավ նա Համասփյուռին, — մայրական շուրթերովդ օրհնե, որ աղջիկդ ծանր ծնունդ չնստի:

Մայրենին առանց դուրսը բարձրացնելու մոտեցավ մորը: Մայրը դժկամությամբ պարզեց ձեռքը, սակայն խոսելու փոխարեն հեկեկաց...

Այդ արցունքներում և պապենական արհամարհված տրամբի ցավ կար և անակնկալ ուրախություն:

3

Երեկոն ուշ էր, գիշերամուտ: Մաքրուհի տուտուն ու Մայրենուն հաղթում էր քունը, բայց նրանք վանելով այդ սպասում էին վերջին լուրերին:

— Տեսնեմ մերոնք այսօր ինչ նոր քաղաքներ են հոր
վերցրել, — մտածում էր Մաքրուհի տուտուն, երբ ուղիղն
հաղորդեց մի շարք կարևոր կետերի մասին ու մեկ էլ հան-
կարծ թվա՛ց, թե՛ իրոք լսեց Թորոսիկի անունը՝ պարզե-
վատրված շքանշանով:

— Անուշիկ մանչս... Թորոսի՛կ... — անակնկալից բացա-
կանչեցին մայրն ու կինը՝ իրար դրկած համարյա բարձրա-
խոսի բերանը մտնելով:

Մեկ էլ ահա դուռն աղմուկով բացվեց ու իրար հետևից
եկան ծաղկավանդիք:

— Շնորհավորո՛ւմ ենք, Մաքրուհի տուտու. Մայրենի,
աչքդ լո՛ւյս:

Եկան արտելից.

— Գի՛նի, կենդանություն:

Վազելով հասավ Մանուկ-Փիլիպոսը:

— Շնորհավո՛ր, ասենք շնորհավո՛ր. այսօր մեր փառքի
օրն է, Մաքրուհի. անկյուններում ինչ հոգեպահուստ որ ու-
նես, հանիր, քեֆ անենք: Պատվաբեր Թորոսիկի կենացը, իմ
սիրելի աշակերտի: Մայրենի, դու քիչ վազվզի... խորհրդա-
վոր շնչաց նա, հայրաբար համբուրելով Մայրենու երանու-
թյամբ ողողված դեմքը:

Դուռը կրկին աղմուկով բացվեց, և այս անգամ հեկհե
ներս մտավ մեծամարմին Աղավնյակը: Նա ասելու խոսք
չգտնելով՝ իր բազրվիների մեջ առավ Մաքրուհի տուտույին
և երբ նույն թափով մոտեցավ Մայրենուն՝ Մանուկ-Փիլի-
պոսն իսկույն պատվարի պես կարեց նրա ճանապարհը:

— Յավա՛շ... յավա՛շ. ինձ գրկիր, Մայրենուն խնայի-
կես լուրջ կես կատակ ակնարկից նա ու թևերը բացելով՝
սկսեց պարել, — ավանի առաջին շքանշանակիր մարտիկի
մայրը պազնեմ, կնիկը պազնեմ, հարևաններին պազնեմ,
ավան սովետի նախագահին պազնեմ:

— Համբուրիր, Մանուկ-Փիլիպոս, — բերկրեց Աղավ-
նյակը, — ես այսօր հպարտ եմ, քանի որ Թորոսիկը մերն է,
իմ ավանինն է, ողջ Սովետական Միությանն է: Սա սկիզբն
է մեր հպարտության: Ծաղկավանը դեռ շատ առաջավոր

մարտիկներ կտա, որովհետև Մաղկալանը կրկնակի երախտիք ունի: Սովետական իշխանության շնորհիվ նա ազատվեց հին հայրենիքի սարսափներից ու սովետական իշխանության շնորհիվ նա խաղաղ ապրեց նոր հայրենիքում:

Մաքրուհի տուտուն արձանացել էր ուղիովի կողքին ու երջանկությունից խոսք չէր գտնում ասելու: Միայն արցունքները, որոնք արտահայտություն էին վշտի ու խինդի, վարար հոսում էին աչքերից:

Մայրենին սեղան բացեց: Հարեանները բերին շարազ ու գինի: Ավանային սովետի նախագահը բռնեց իր պատվաձոր տեղը: Մանուկ-Փիլիպոսը նստեց Մաքրուհի տուտույի և Համասփյուռուի մեջտեղը ու լցնելով բաժակները՝ դարձավ Աղավնյակին.

— Ասում ես այսօր քո հպարտության օրն է, քանի որ Թորոսիկը քո ավանի տղան է:

— Ճիշտ այդպես,—ժիր պատասխանեց Աղավնյակը:

— Էլ ուրիշ ասելիք չունե՞ս...—խորհրդավոր ակնարկեց ձերունին:

— Ունե՞մ... ունե՞մ,—բացականչեց ավանային սովետի նախագահը,—հպարտանալու երկու պատճառ ունեմ:

— Որ այդպես է, զույգ թվերիդ տակ զույգ ձմերուկ կզարնեմ,—շահագրգռված ձայնեց Մանուկ-Փիլիպոսը,—ասստեսնենք հպարտությանդ պատճառը:

Ներկաների ուշադրությունը կենտրոնացավ Աղավնյակի վրա:

— Իրբ լսեցիք, որ Թորոսիկը պարզևատրված է, ուրախությունից բերաններդ բաց մնաց, չէ՞,—հանդիսավոր սկսեց Աղավնյակը՝ սեղանակիցներին դառնալով:

— Հարկավ:

— Դեհ, հիմա ես ձեզ այնպիսի ավետիս հայտնեմ, որ ձեր բերանն ավելի լայն բացվի... բացեք, բայց շո՛ւտ ծածկեցեք. դարմացեք, բայց մի՛ դարմանաք... ասեղի ծակից չնայեք շնդկաստանը...

— Մենք գիտենք մեր անելիքը, միայն շուտ ասա,—անհամբեր ընդհատեցին ունկնդիրները:

— Հիմա, հիմա. վազողը մանչ չի՛ բերի,—հանգիստ
շարունակեց Աղավնյակը,—հիմա ես առաջարկում եմ բո-
լորիդ մոտենալ Մաքրուհի տուտուլին ու Համասփյուռ մայ-
րիկին և շնորհավորել... Թորոսիկի շքանշանը չէ, այդ ար-
դեն շնորհավորել ենք. Մայրենի, մի՛ կարմրիր, առանց այն
էլ կարմիր ես, սիրուն ես:

Ներկաները իրոք որ զարմանքից բերանբաց մնացին:

— Դեհ շո՛ւտ, փակեցեք բերաններդ,—խսկուչն վրա
տվեց Աղավնյակը,—խառն խնդիրները պատերազմից հետո
կպարզենք, երբ Թորոսիկը գա... Վազող շուրջ կեղտ չի
բռնում, հիմա Թորոսիկին է. վազե՛լ է, լա՛վ է արել... գործը
հաստատ բռնեց, նոր գնաց պատերազմ, Ավանի երեխան իմ
երեխան է. հարկավոր է բազմանալ, բռնել գոհվածների
տեղը:

Աղավնյակի աշխուժությունը վարակեց շատերին.
Նրանք մոտեցան շնորհավորելու Մաքրուհի տուտուլին ու
Համասփյուռին և երբ նայեցին Մայրենու կողմը՝ նրան
չգտա՞ն...

Մանկիկը շարժվել էր նրա կրծքի տակ և նա մայրական
երանությամբ փակվել էր Թորոսիկի սենյակում:

— Բաղնիք մտնողը կքրտնի. հարսս ամաչեց՝ փա-
խավ,—բարեհամբույր նկատեց Մաքրուհի տուտուն,—
կխնդրեմ այդ հարցի շուրջը նրա հետ զրույցի չբռնվել. կեր-
թան սերն ու մեղրը՝ կմնան չոր շրթունքները, իսկ շրթուն-
քից փախած անխոհեմ խոսքը խանչալի պես որ յարա բա-
ցեց, էլ չի լավանա: Առածն ասում է՝ «Առաջ ասեղը ձեզ խո-
թեք, ետքը մախաթն՝ ուրիշին...»

— Վրա դնելու հեշ կարիք չկա,—խոսեց Մանուկ-Փի-
լիպոսը,—կնկա բամբասանքը մկան է նման, կճատա ու
կանցնի:

— Մուկը պատիկ է, սակայն ընկած տեղը կկեղտոտե,—
պատասխանեց Համասփյուռը:

Զգիտեա օրվա հանդիսավորությո՞ւնն էր պատճառը, թե՞
պատերազմական դրությունը, իսկ վտանգը միշտ աչքաթող
է անում մանր հաշիվները: Մայրենու հղիությունը զարմանք

պատճառեց, որպէս լուր, սակայն շառաջացրեց տհաճ զգացմունք: Եղել է, հետո՞ ինչ... բա որ հանկարծ աշխարհ է, կոխիվ է, փորձանք պատահի... լավ չէ՞, որ շմարի օջախը: Թե ե՞րբ գիշերը փոխվեց ցերեկվա, չհասկացավ Մաքրուհի տուտուն (դժբախտությունից և երջանկությունից դժվար է քնել): Դուռը կրկին բացվեց ու այս անգամ ուրախ ժպիտով ներս վազեց Հայկանը՝ ձեռքին «Սովետական Հայաստան»-ը:

— Ահա Թորոսիկի անունը պարզեատրվածների ցուցակում:

Մաքրուհի տուտուն բերկրանքից շաղվող աչքերով կարդաց իր որդու մասին, ապա խնամքով կտրեց թերթը ու մայրական անկաշառ սիրով պահեց այն իր կրծքի վրա:

Ու այնուհետև, երբ կարտուում էր որդուն, հանում էր այդ թղթի կտորը ու, չնայած բովանդակութունը անգիր գիտեր, և համբուլըններից նղծվել էին տառերը, այնուամենայնիվ նորից կարդում էր Թորոսիկի անունը:

— Բանակային կանաչ արևիդ մատաղ, մանչս, հայրենիքի սերն այդ ի՞նչ տեսակ սեր է, որ երեխային անգամ հերոս է դարձնում... Երեխա՞... նամակի հետ մայրն ստացավ որդու նկարը և շճանաչեց... Ահա կանգնել է նա բանակայինի շորերով. և՛ առնական է, և՛ խոհուն: Ե՞րբ, երեկվա մանուկը ե՞րբ այդպես հասունացավ. միայն աչքերն են Թորոսիկի, այն էլ կարծես ճիգ է գործադրում շարաճճի խինդով հանկարծ չփոթկալու համար:

Ու նա անսահման սիրո հետ դեպի տղան տածեց մի նոր զգացմունք. պատկառանքն էր դա. և ո՞վ զարմանք, գիշերները պառկելիս նա այլևս անհարմար էր զգում անաջվանման ասել.—չարխափան, եղի՛ր մանչուս պահապան... ոչլ մաղթում էր.—բազուկդ զորավոր լինի, թուրդ միշտ կտրուկ լինի, դռնիդ նշանը քեզ ապավեն:

Առավոտյան Մաքրուհի տուտուն Թորոսիկի նկարը փաթաթեց մետաքսյա թաշկինակի մեջ ու տարավ լուսանկարչի մոտ՝ մեծացնելու: Երբ որդու մեծադիր նկարը պատրաստ էր, ոսկեզօծ շրջանակի մեջ առնել տվեց այն ու կախեց Թո-

րոսիկի սենյակի ճակատին: Սենյակը մի րոպեում կարծես կենդանացավ ու պատուհանից ներս լցվեց արևը:

Եվ ահա հայրենիքի գաղափարը հետզհետե ձուլվեց Թորոսիկի հետ ու դարձավ մի դեմք Մաքրուհի տուտույի համար: Երբ ասում էին—բանակ՝ նա իսկույն պատկերացնում էր Թորոսիկին, որի հետ կապվում էր ինքը՝ Մաքրուհի տուտուն, տունն էր կապվում հայրենական, աղբյուրների խոխոջը, դադգահների շխշխոցը, ապա բողբոջ աղջիկ Մայրենին, որի անաղարտ սերը սրտում ճակատ մեկնեց Թորոսիկը: Ու միլիոնները գնացին, նրանց սրտում նույնպես սեր, թողած ծնող, լալն տափաստաններ ու անտառ:

Եվ այն ամենը, որ կապված էր Թորոս որդու հետ, տեղի տվեց Թորոս մարտիկին, ու Մաքրուհի տուտուն, որ առաջ քիչ էր հետաքրքրվում արտաքին աշխարհով՝ պատերազմի ընթացքի մասին լավ գաղափար կազմելու համար սկսեց շփվել դոսի հետ, թերթը կարդալ հետաքրքրությամբ. նա չէր պառկում, մինչև չսեր վերջին ժամը:

Քնելուց առաջ նա մտնում էր որդու սենյակը.

— Ինչքան գյուլա որ կա՝ կպչի սարին ու քարին. ինչքան շար որ կա, ոտներիդ տակը խափանվի, Թորոս... Ինչքան հայրենիքի պաշտպան զավակ որ կա՝ ողջ-առողջ մնա: ու նոր իմ մինուճար մանչը: Ինչքան մուրաղ որ կա՝ կատարվի ու նոր քո սերը կապի թագ-պսակ, իմ սրտի սիրեկա՛ն որդի...

Այդ բոլորից հետո նա խաղաղված դուրս էր ելնում սոգայի սենյակից. հեռանալիս փակում էր պատուհանը, որ փոշի չնստեր Թորոսիկի նվիրական իրերի վրա...

Սակայն Թորոսիկը ոչ միայն տանն էր, Մաքրուհի տուտույի հետ, այլ և ամենուր: Մայրը քայլում էր փողոցով, ու նրան թվում էր, որ խնդալով դեմն է ելնում Թորոսիկը... Ամեն բանակայինի հանդիպելիս նա աշխատում էր նմանեցնել իր Թորոսիկին և անձանոթի մեջ գտնելով այդ նմանությունը՝ սիրում էր անձանոթին:

Եվ այդպես աննկատելիորեն մայրական սերը հետզհետե դուրս ելավ իր նեղ սահմաններից ու պայծառ մի օր նա իրեն զգաց մայր բոլոր բանակայինների ու որպես այդպիսին՝ երեկոներն սկսեց ճերմակեղեն կարել նրանց համար, գործել ձեռնոց և գուլպա:

— Ով էլ որ հագնի, մանչս է, — ասում էր նա:

Գ Լ Ո Ի Խ Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

1

Ի՞նչ: Մրա՞ր... Ընկերը ծրար է տալիս: Թորոսիկը վերցնում է այն և ահա, պատռելով դուրս հանում երկու ծանոթ ձեռագիր, որոնք կարծես իրենց հետ բերել էին հեռավոր Ծաղկավանի անուշ բույրը... Առաջ ո՞րը կարդար, շգիտերմեկը մորիցն էր, մյուսը՝ Մայրենուց. երկուսն էլ անշա՛փ, անշա՛փ հարազատ:

«Իրաական մանչս.

Առա՛ջ-առա՛ջ շնորհավորեմ շքանշանդ. շարխափանի պես խփիր դոշիդ, արա քեզ ապավին:

Առա՛ջ-առա՛ջ շնորհավորեմ քաջիդ անդւնը. արարող ոսկե սյուն տվեց սրտիս. արարքիցդ Սանասար պապի գերեզմանի վրա դալարեց կանաչ բարդի, և ապա շնորհավորեմ, դուռ իմ անգին, ճետդ, որ շուտով պիտի ծնվի... Պատարագդ գաղանի ես արել, գաղտնի պատարագիդ ես մատա՛ղ...»

Թորոսիկը վերջին տողերից պարզապես բան չհասկացավ. ի՞նչ ճետ. ի՞նչ ծնունդ...

«Կանաչ ծլես, կարմիր պտղես, Թորոսիկս», — շարունակում էր մայրը, սակայն Թորոսիկը դարձյալ ոչինչ չհասկացավ, մանավանդ, որ այդ բառերի վրա կաթել էր մայրական արտասուք... եղծած տառերի միջից նա զգաց մոր բարի դեմքը և «պտղես» ցանկությունը ապագային վերագրելով՝ վերցրեց Մայրենու նամակը:

Նորությունը, որ անմիջապես նկատեց թորոսիկը, սիրելու ձեռագիրն էր. կարծես ինչ որ շիկնանք կար տառերի վրա: Մայրենին, որ ընդհանրապես գրում էր խոշոր, այս անգամ տառերը կարծես աղավախների պես շարվել էին իրար մոտ ու ամոթխած կախել գլուխները. ինչո՞ւ:

«Թորոսիկս, թանկագինս, սիրելիս, ի՞մ երջանկություն...»

Սխրագործությանդ համար պարզկատրվելդ հպարտությամբ լցրեց իմ հոգին, որն առանց այն էլ ապրում էր երանության խռովք:

Արդեն մի ամիս է, ինչ ես ապրում եմ ձեր տանը, որպես... որպես քո կինը... Հասկանո՞ւմ ես... իհարկե գովար է հասկանալ, ու ես էլ գովարանում եմ գրել, բայց Մաքրուհի տուտուն ուզում է, որ ես, որպես քո կին հայտնեմ քեզ, որ շուտով մայր եմ դառնալու...

Հիշո՞ւմ ես մեր վերջին երեկոն քո սենյակում, երբ մենք բաժանման վշտից իրար մոտեցանք, շատ մոտեցանք... ու հետո զգացինք ամոթ...»

— Ես հա՞յր... Թորոսիկը հա՞յր... կարծես համոզվելու համար կրկնեց նա մի քանի անգամ. համբուրեց նամակները, որոնց կպել էին մոր ու կնոջ՝ ձեռները...

Ու նա անսպասելի նորությունից զարմանալիորեն լըրջացած՝ խորհում էր, թե ի՞նչ է լինելու զավակը. աղջիկ, թե՞ տղա:

— Տղա՞... Բայց ինչ լավ կլինի, եթե միաժամանակ և՛ աղջիկ. ուրեմն սրանից հետո ես պիտի պայքարեմ հայրենիքիս համար՝ որպես զավակ, ամուսին ու հայր...»

Վերջին միտքն առանձնապես շոյեց նրա տղամարդու ինքնասիրությունը, և նա երանության առատությունից գրկելով նամակ հանձնող ընկերոջը՝ բացականչեց.

— Գիտե՞ս, Իվան, ես հա՞յր եմ...

Իվանը նայելով ընկերոջ մանկական դեմքին՝ թերահավատ ասաց.

— Չէ մի...

Օդում պարում էին ձյան փաթիլները՝ սպիտակ թիթեաների՝ պես քնքուշ-քնքուշ քավելով իրար... մերկ ծառերը գեղեցկացել էին, ասես ծաղկել ձմեռվա մեջ, երբեմնի զմրուխտ հեռաստանին փոխարինել էր սպիտակը:

Մտենում էր նոր տարին: Վարդենին արտակարգ իրաբանցման մեջ էր. նա մի կողմից խազալիքներ էր գնում մանկամսուրի համար, մյուս կողմից տոնածառի պատրաստությամբ ու նվերներով էր զբաղված:

Թիկունքայինները կամենում էին նոր տարվա առթիվ ոչ միայն երեխաներին ուրախացնել ընծաներով, այլ և նրանց հայրերին՝ բանակում: Թող նրանք խրամատներում իրենց կտրված շղզան ընտանիքներից: Գիշերվա տասներկուսին, ավանդական օրդ ժամին, թիկունքայինները կբարձրացնեն գինու բաժակները ճակատայինների կենացը՝ մաղթելով նորանոր հաջողություններ: Ճակատայինները կհիշեն իրենց մերձավորներին ու կհուզվեն կարոտից, բայց և կհպարտանան նրանց արարքով:

Տնայնագործական համեստ մի արտել, ինչպիսին է Մաղկավանի արտելը, անուն էր հանել ոչ միայն արտագրանքի բարձր ցուցանիշներով, այլ և որակով, ռազմական պատվերների գերակատարմամբ:

Մանուկ-Փիլիպոսը ինչպես որ իր տոնական հագուստը Թորոսիկի նշանդրեքի օրը հանել, կախել էր պահարան, այնպես էլ թողել էր անգործածելի: Այդ օրը թաշկինակ որոնելիս ձեռքը պատահմամբ տարավ բաճկոնի գրպանը և շոշափեց ոսկյա ժամացույցը: Փեսայական նվեր էր դա, որ նա ամուսնության առթիվ ստացել էր հորիցը ու ինքն էլ իր հերթին հատկացրել էր իր առաջնածին զավակին, սակայն զավակը Թեֆարիկի հետ դժբախտ վերջացավ...

Տոնական ժամացույցը զուտ ոսկի էր, որի վրա բանել էր վանեցի ոսկերչի ճարտար ձեռքը:

— Հետաքրքիր է, թե շղթայով մեկտեղ որքան արժե-
նա,—մտածեց Մանուկ-Փիլիպոսը:

Աշխատանքի ժամին նա դարձյալ հիշեց ժամացույցը-
խորհրդակցութեան միջոցին մտաբերեց վերստին և ապա որ-
քան կամեցա՞վ մոռացութեան տալ այդ առարկան, նա այն-
քան համառորեն իշխում էր նրան:

— Դե՛հ գնա, դու էլ...

— Քեզ ու քեզ, կիսոսես, Փիլիպոս աղբար,—ծիծաղեց
Մաքրուհի տուտուն:

— Հապա...—իսկույն պատասխանեց Մանուկ-Փիլիպո-
սը,—ժամացույցը ցցվել է ուղեղիս մեջ, դադար չի տալիս:

— Ուզածն ի՞նչ է, բավարարիր, թող երթա,—կատակեց
Հայկանը:

Մանուկ-Փիլիպոսը ճակատը տրորելով՝ ասաց.

— Ուզում է ճանապարհորդութեան կատարել...

— Է՛հ, թե ոտք ունի, թեղ երթա,—խոսակցութեան մեջ
մտա՞վ Հուստինեն:

— Պայմանով. ասում է, որ ձեր զարդերն էլ տաք տա-
նի...

— Եզոպոսի լեզվով ես խոսում, Փիլիպոս աղբար,—ընդ-
հատեց Հայկանը,—պարզ ասա:

— Պարզի մայրը սիրեմ,—աշխուժացա՞վ ծերունին,—
պատերազմը շատ ծախս է պահանջում, կառավարութեանն
օգնել է պետք: Ամենքս էլ, փառք աստծո, ձեռք-ոտք ունինք,
կարող ենք աշխատել,—եկեք մե՛ր զարդեղենը, ով ինչ ունի
և՛ որքան կամենա, ընծայենք պետութեանը: Որ թշնամին
ներս խուժի, զարդ չէ, մեր կյանքն էլ մերը չի լինի,—ասաց
նա, սեղանին դնելով ժամացույցն ու շղթան,—Թերթերը
զրում են, որ ֆլանն ու ֆատանը կառավարութեանն այսքան
զու՞մար է նվիրել, այսքան զարգ ու զարդարանք. մենք ի՞նչ
է, սովետական քաղաքացի չե՞նք:

— Հապա ի՞նչ ենք,—պատասխանեց Մաքրուհի տու-
տուն՝ աջ ձեռքի մատնեմատից ամուսնական մատանին հա-
նելով:

Թեպէս մատանին շա՛տ նվիրական էր, որպէս Հեթումի հիշատակ, սակայն կորած չէ նա, հայրենիքի փրկութեան մեջ կպահպանվի Հեթումը՝ հուշը իրենց կարճատև ամուսնութեան...

Ու այդ օրը ծաղկավանցիք հատուկ սեղանին հանձնեցին ոսկեղեն, ակնեղեն, կանխիկ փող, փոխառութեան պարտատոմսեր...

Թերթը գրեց Ծաղկավանի հայրենասիրութեան մասին. հաճելի էր և այն, որ արտելը, որպէս նոր տարվա նվեր, տարեվերջի հաշիվը փակեց գերակատարումով:

— Ովքե՛ր են ձեր հիմնական կազմերը, — հարցրեց թղթակիցը արտելի նախագահին:

— Իննսուն տոկոս կանայք, — բացատրեց Հայկանը, — որից քառասունը տատիկներ, քառասունը նորուս աղջիկներ, իսկ մնացած քսանը...

— Հիանալի է, պարզապէս հիանալի, — բացականչեց թղթակիցը գրելով, — Հայրենակահ, Պատերազմը այնպէս լարել է թիկունքայինների եռանդը, որ... որ....

— Հասկանալի է, հասկանալի, — խոսակցութեան մեջ մտավ Աղավնյակը:

— Ներեցեք, ո՛ւմ հետ գործ ունեմ, — հարցրեց թղթակիցը գլուխը բարձրացնելով:

— Գուք գործ ունեիք ավանային սովետի նախագահի հետ, — բացատրեց Հայկանը, — երևի ուզում եք իմանալ, թե ո՛ւր չբացավ գեր կինը, որ նոր այնտեղ էր, ա՛յո:

— Այո...

— Նա այդպէս է. հայտնվում է հանկարծ, չբանում հանկարծ. նրա մականունն է «ման գաս, չգտնես», սակայն նա ամեն տեղ է... Չեզ խորհուրդ կտամ անպայման գրել նրա մասին:

— Ո՞ր արարքի համար, — հետաքրքրվեց թղթակիցը:

— Ամենից առաջ ստեմ, որ Աղավնյակը, այդպէս է նուրսն այդ ծանրամարմին կնոջը, նախկին անգրագետ բանվորուհի է, կարծեմ ծխախոտագործարանի, սակայն, ուսման

սերք նրան հասցրել է մինչև համալսարան: Ասում եք—ի՞նչ է արել. գնացեք անձամբ ստուգեցեք նրա աշխատանքը. ես միայն կասեմ, որ ընդունել է էվակուացիայի ենթարկված հինգ մանկատուն. ծաղկի պես է պահում նրանց: Ընդունել է էվակուացիայի ենթարկված հարյուրավոր ընտանիք ու ապահովել նրանց բնակարանով ու աշխատանքով: Բացի ավանային սովետի մանկապարտեզներից՝ նա բացել է մանկապարտեզ նաև եկվորների երեխաների համար: Բացի այդ՝ պատերազմական շրջանի հետ կապված հազար հարց է, հազար պահանջ... և դուք կտեսնեք, ինչպես այդ հսկայական մարմինը հենված երկու փոքրիկ ոտների վրա՝ վազվզում է հիմնարկից-հիմնարկ՝ գործը գլուխ բերելու: Նայեցե՛ք, խնդրում եմ նայեցե՛ք,—բացականչեց Հայկանը պահեստից դուրս եկող Աղավնյակին ցույց տալով, խորամանկ է, անձամբ է գալիս, որովհետև գիտեմ, որ իրեն դժվար է մերժել. և ստացածը ինքը շալակած է տանում... հարմար առիթ է, բռնեցեք նրան...

Քղթակիցը ոգևորված վազեց Աղավնյակի հետևից, օգնելու համար վերցրեց կապոցների կեսը և միասին բռնեցին ավանային սովետի գրասենյակի ճանապարհը:

— Խեղճ տղա, կնկա քամակից հեխե կերթա ու չի հասնում,— ծիծաղեց Մանուկ-Փիլիպոսը, որը ներկա էր խոսակցությանը,— վա՛յ, կնիկնե՛ր, կնիկնե՛ր... Հայրենական Պատերազմում ինչ հունար ցույց տվիք ու կարճեցիք մեր լեզուն:

3

Մանուկ-Փիլիպոսը խոր քնի մեջ էր, երբ հանկարծ թվաց, որ վերի սենյակից լավեց մանկան ձայն... Նա զարմացած նստեց անկողնում, տխուր ժպտաց, ալեհեր գլուխը նորից դրեց բարձին ու ո՛վ դարմանք, դարձյալ լավեց նրա ձայնը, ոչ միայն լսեց, այլ և տեսավ թաթիկներ, որոնք շխշիկացնում էին օրորոցից կախված խաղալիքն ու կանչում:

Մանուկ-Փիլիպոսը վեր կացավ, վառեց լույսը և հուզումից դողդող ոտներով բարձրացավ սանդուղը: Ահա դուռը, ահա օրորոցը, սակայն օրորոցում մարդ չկար: Ո՞վ էր խոռովում նրա հայրական զգացումները...

Նա, կտրած սրտով ետ եկավ: Սենյակը ցոլրտ, անկողինը պա՛ղ: Դրսում դեռ խորը դիշեր էր, ձմեռվա երկա՛ր դիշեր, իսկ ծերունական աչքերից փախել էր քունը: Ո՞հ, նա ինչպե՛ս կուզենար, որ Թեֆարիկը հիմա վառեր վառարանը, քթլար ինքնայնոր սեղանի վրա, դե նրա շուրջը բոլորեին թոռները... Այլապես ինչի՞ է նման, միշտ մենա՛կ... միշտ մենակ. տուն ունի, կարողություն ունի, հարազատ չունի: Ու նա կարծես դրա համար էր իր ամբողջ սերը, չսպառնա՞ծ ջերմությունը նվիրել շխատանքին ու նրա մեջ էր գտնում մխիթարանքը: Բանվորները պատկառում էին նրանից ու նրա անսպառ կորովը դարձնում օրինակ:

Կռիվը գնալով խորանում էր: Թիկունքում արդեն երեւում էին Հայրենական Պատերազմի հաշմանդամներ: Սալահատակին թխթխկում էին նրանց հենակները... Թիկունքում արդեն բազմանում էր զոհված հայրենասերների թիվը ու նրանց երեխաները մնում էին անհայր: Պետությունն անում էր ամեն հնարավորը՝ օգնելու բանակայինների ընտանիքներին, շրջապատելու նրանց գուրգուրանքով: Թեպետ այդ ամենը կար, այնուամենայնիվ պակասում էր բացակայող հոր շոյանքը...

Սրբազան հայրենիքն արյան գնով պաշտպանողներին փոխարինում էին թիկունքից մեկնած նոր մարտիկները: Նրանք իրենց հետ տանում էին որդեկորույս մայրերի արցունքը, այրիացած կանանց ցասումը, որբացած մանուկների դառնությունը, և այդ ամենը դարձրած վրեժ՝ դուրս էին շպրտում հայրենիքի խորքերը խցկված ոսոխին:

Մանուկ-Փիլիպոսը արտելի գործով մեկնել էր շրջան. անհրաժեշտ խնդիրները կարգավորելուց հետո ուզում էր վերադառնալ, երբ կայարանի ճանապարհին հանդիպեց մի տուս պառավ կնոջ: Բջախառն քամին բարձրացնում էր նրա

բղանցքները, շնչահեղձ անուժ նրան, սակայն նա կռացած
մարմնով դիմադրում էր արհավիրքը և դանդաղորեն առաջ
ընթանում: Նրա գրկին կար մի բարուր. մանկիկը ճշում էր
անհանգստությունից:

Մանուկ-Փիլիպոսը կտրտված ուռներնով, որն ավելի
բուռ ձեռների շարժում էր, քան բառ, հարցրեց.

— Քույրիկ, այս սառնամանիքին ո՞ւր կտանես պատի-
կին:

— Մանկամուտը, — սառած շոթերով պատասխանեց
պառավը:

— Քո ի՞նչն է:

— Թոռ է:

Մանուկ-Փիլիպոսը դարձյալ հարցրեց.

— Հապա այդպես կանուխ ո՞ւր կտանես:

— Մանկամուտը:

Մանուկ-Փիլիպոսը խոսակցի դեմքին բռնկվող վիշտ
տեսնելով՝ ասաց.

— Պատերազմի դաշտում մարդ ունե՞ս:

— Տղաս էր... երկու ամիս առաջ սև թուղթ եկավ...
Հարսս մեռավ երեխայի վրա, թոռս անտեր մնաց. ուզում եմ
հանձնել մանկամուտը, որ ձեռս բացվի, մտնեմ աշխատան-
քի. Ստալինգրադից եմ... Տունս քանդվեց, բունս քանդվեց...
ա՛խ, Հիտլեր...

Մանուկ-Փիլիպոսը լուռ քայլում էր պտույտի կողքով ու
մտածում... Որդին զոհվել է Հայրենական Պատերազմում,
թողել մայր ու երեխա... մորը գալարում է վիշտը, մինչդեռ
նա թոռնիկի գոյությունը պահպանելու համար ստիպված է
աշխատել... սակայն ինչպես այդ պառավ կինը կարողանա
ապահովել երկու կյանք: Որդին հայրենիքի համար է զոհ-
վել, — կարծես ավելի տպավորվելու համար կրկնում էր Մա-
նուկ-Փիլիպոսը, — թողել է մայր ու երեխա: Քարուքանդ է
եղել տուն-տեղը...

— Տուր, բարուրը տուր քիչ տեղ տանեմ, — ձայնեց նա
սթափվելով:

Պատավը հոժարութեամբ հանձնեց թոռնիկին:

Մանուկ-Փիլիպոսը վերցրեց մանկիկին, ու նրան տիրեց անսահման մի հաճույք: Քանի՜ տարի նա չէր գրկել երեխա ու բաղձում էր ինչպես... Երեխան կարծես այդ զգալով՝ սեղմեց սառած դեմքը նրա կրծքին ու կտրեց ձայնը:

Երբ նրանք մոտեցան քարաշեն մի տան՝ պառավն ասաց.

— Ծնորհակալ եմ, եղբայր, արդեն հասանք:

— Հասանք,—կարծես ափսոսանքով բացականչեց Մանուկ-Փիլիպոսը:

Նա շատ մտազբաղ էր երևում:

— Հասանք, տուր բարուրը:

Մանուկ-Փիլիպոսն զգուշութեամբ բարձրացնելով երեսալի դեմքի ծածկոցը՝ նկատեց.

— Քնած է, մե՛ղք է, կզարթնի....

Եվ երբ տատը—բան չկա ասելով պարզեց ձեռները թոռնիկին վերցնելու, Մանուկ-Փիլիպոսը տալու փոխարեն հարցրեց.

— Անուշդ ի՞նչ է:

— Մարիա Իվանովնա:

— Մարիա քույրիկ, կուզե՞ս թոռնիկիդ որդեգրեմ...

Հուզումից դողաց նրա ձայնը:

Պատավը զարմացած նայեց անձանոթին:

— Մեկը լինի քեզ խնամի, եղբայր, ծեր տեղով դժվար թե երեսալի դարդ քաշես: Կնիկ ունե՞ս:

— Չունեմ:

— Հապա ի՞նչպես պիտի պահես,—առավել զարմացավ պատավը:

Մանուկ-Փիլիպոսը ջերմ գրկելով բարուրը ու հայրական զգացմունքները դժվարութեամբ զսպելով՝ պատասխանեց.

— Կուզե՞ս քեզ էլ տանեմ ինձ մոտ. ապրենք քույր-եղբոր պես, մեծացնենք մանկիկին:

Մարիա Իվանովնան ծերունու առաջարկը կատակ հա-

մարելով ու անսովոր խոսակցութեանը վերջ տալու համար
ասաց.

— Թե հանաք չես անում, եղբայր, ասա, ինչի՞ համար
ես ուզում էրքան նեղութիւն հանձն առնել:

Մանուկ-Փիլիպոսը զուսպ պատասխանեց.

— Նրա համար, Մարիա քույրիկ, որ տղադ հայրենիքի
համար է թափել արյունը...

Տիրեց լուռութիւն, այդ լուռութեան մեջ նրանք հասկացան
իրար. մտերմացան իրար: Զարթնեց մանկիկը. պայծառ աշ-
քերով նայեց ծերունուն. կարծես իրադարձութիւնը հասկա-
ցավ և նա...

— Ի՞նչ է թոռնիկիդ անունը:

— Դեռ անուն չունի:

— Դեմ չե՞ս, որ իմ մեռած մանչու անունով նրան կո-
չեմ Մհեր:

— Թող լինի Մհեր, — իսկույն համաձայնեց տատը:

Ու Մանուկ-Փիլիպոսի հետ Մաղկալան մտավ մի պա-
ռավ կին. թեպետ պառավը քայլում էր արթուն աչքերով,
սակայն թվում էր, որ երազ էր այդ... գալ ինչ որ անծանոթի
հետևից... բայց ոչ, նայում էր պատկառելի ծերունուն ու
լցվում հավատով... Նա ասաց, որ քո տղան հայրենիքի հա-
մար թափեց արյունը, ինձ համար թափեց արյունը, նրա
մայրն ու երեխան անտեր չպիտի մնան... Բարի՛ մարդ...
բարի՛ մարդ:

Տուն հասնելուն պես Մանուկ-Փիլիպոսը վառեց վառա-
րանը. սառած Մարիա Իվանովնային նստացրեց կողքին ու
բարձրացավ վեր... դռան մեջ ուրախ զրնգաց բանալին...
Օրորոցը կարծես ոտք առավ, եկավ Մանուկ-Փիլիպոսի մոտ,
տարիներ շարունակ թափուր մնացած օրորոցը... Մանուկ-
Փիլիպոսի աչքերում խնդութեան արցունք երևաց ու կծկված
այտերիցը հորդելով ընկավ Թեֆարիկի բարձին... Թեֆարիկի
բարձը թրջվեց այդ արցունքներից, սենյակը լցվեց խինդով:

Պատիկ Մհերը պառկեց օրորոցում, ճղճղա՛ց... Մանուկ-
Փիլիպոսը համբուրեց թաթիկները, թուշիկները, աշիկները

Մհերի... Նա դարմանալիորեն աշխուժացել էր, լցվել կրկին հայրությամբ. պակասում էր միայն Թեֆարիկը, այն էլ կարծես կերպարանափոխվել էր Մարիա քույրիկի մեջ և իրոք, եթե մնար Թեֆարիկը; հիմա միայն քույր կլիներ նրա համար, քնքույշ մի պառավ, բարի մի քույր...

— Մարիա քույրիկ, այսօրվանից տան շերեփը կվերցնես ձեռք ու կկառավարես մեր ընտանիքը, — առաջարկեց Մանուկ-Փիլիպոսը, — ես երթամ Մհերիս համար այժի կաթ ձարեմ, որքան գիտեմ այժի կաթը կնկա կաթի զորություն ունի:

Ընդմիջումից հետո, երբ Թագ խանումը մտավ շուշահանոց, ճախարակ պտտացնող կանանց ասաց.

— Մի բան հայտնեմ՝ չգարմանաք Փիլիպոս աղբարի տնից երեխայի լացի ձայն առի:

— Անհավատալի է, — ասացին կանայք:

— Պատուհանի մեջն էլ կնկա կերպարանք տեսա. սրա՛ն ինչ կասեք...

— Աչքի սխալանք կասենք:

— Ինչո՞ւ անհավատալի կամ աչքի սխալանք, երբ ես իմ ականջներով լսեցի, աչքերովս տեսա, — վիրավորվեց Թագ խաթունը, — ահա ինքը Փիլիպոս աղբարը, հարցում արեք:

Թագ խաթունի վճռական շեշտը ու Մանուկ-Փիլիպոսի արտակարգ ուրախ տրամադրությունը կարծես համոզեց ունկնդիրներին, սակայն ի՞նչպես շոշափել փափկամկատ խնդիրը... ձեռ մարդ ու հանկարծ կին ու երեխա...

Մանուկ-Փիլիպոսը մոտենալով հարցրեց.

— Կնիկներ, ձեզանից ո՞վ այժ ունի:

— Ես ունեմ, սակայն այժն ինչի՞դ է պետք, — գարմացավ Համասփյուռը:

— Ասում են, որ այժի կաթը կնոջ կաթի զորություն ունի, ճի՞շտ է:

— Ճիշտ է, Փիլիպոս աղբար, սակայն կնկա կաթ ինչի՞դ է պետք, — ձայնեցին կանայք:

Մանուկ-Փիլիպոսը հանդիսավոր հայտարարեց.

— Ես հիմա շոշուխ ունեմ. անունը Մհեր... Մհերս մեկ սամսիւ է:

— Տեսա՞ք. հիմա՞ էլ կասեք աչքի սխալանք, — հաղթական բացականչեց Թագ խաթունը, — քո տան մեջ կնիկ էլ կա, ճի՞շտ է, Փիլիպոս աղբար:

— Այդ կնիկը մանչուս տասն է:

— Թե հոգիդ կսիրես՝ սկզբեն պատմիր, որ բան հասկանանք, — թախանձեցին կանայք, Մանուկ-Փիլիպոսին մեջտեղ առնելով:

...Ու երեկոյան Մանուկ-Փիլիպոսի ընդարձակ տունը լցվեց շնորհավորողներով: Այցելուների դեմքին և՛ զարմանք կար, և՛ հիացմունք: Եկողները բերել էին մանկական շորեր... հաշտում մկկում էր այժը՝ նորածին ուլիկի հետ: Սեղանի վրա հանդիսավոր քլթքլթում էր ինքնայեռը, արձակելով գոլորշի: Մարիա քույրիկը հյուսիսսիրում էր իր նոր բարեկամներին, իսկ օրորոցում մուշ-մուշ քնել էր պստիկ Մհերը:

— Շամփա բացեք, ճամփա բացեք, Աղավնյակն է գալիս, — ծիծաղեց Մայրենին և արդարև հեհեհ ներս ընկավ ավանային սովետի նախագահը:

Նա թափով մոտեցավ Մանուկ-Փիլիպոսին, ջերմ-ջերմ թոթվեց նրա ձեռքը և... ոչինչ շասաց:

Ճանապարհին նա պատրաստել էր ծեր հայրենասերին ուղղված ամբողջ մի ուղերձ, սակայն հուզումից խճճվեցին բառերը:

Գ Լ Ո Ի Խ Յ Ո Թ Ե Ր Ո Ր Դ

1

«Սիրելի մայր իմ և կին իմ (ուրեմն թույլ տուր, Մայրե-
նի, քեզ արդեն կինս անվանել....)

Ձեր նամակը հայրութեանս մասին ինձ լցրեց հասունու-
թեան զգացումով: Այո, այսօրվանից ես ավելի պարտավո-
րութեան ունեմ կյանքի առաջ. կյանքին շատ ավելին պիտի
տամ՝ վայելելու իրավունք ստանալու համար:

Հայր եմ... կա՞ առավել հաճելի զգացմունք, քան սի-
րուց բխած հայրութեան զգացմունքը: Որքա՞ն լավ ես ա-
րել, մայր, որ Մայրենուն վերցրել ես քեզ մոտ, որպես ար-
դեն քո հարսի... տատ էլ կդռնաս, մնում է, որ հաղթանա-
կից հետո տուն վերադառնամ ու խինդը դառնա կատարյալ:

Քիչ հետո ես մենակ մեկնելու եմ շափազանց կարևոր
հետախուզման և այդ մարտական առաջադրանքի կատա-
րումը նվիրում եմ իմ դալիք մանկիկին: Զարմանալի բան-
մանկիկս դեռ լույս աշխարհ չի եկել, բայց ես արդեն կարո-
տում եմ նրան: Այժմ եմ հասկանում, մայր, քո անսահման
սերը, որով պարուրում էիր ինձ և քո անսահման վիշտը,
որը դալարում էր քեզ ամեն անգամ, երբ հիշում էիր կսկծից
խելագարված հորդ և գլխատված Սանասար պապին...

Սուրբ է ծնողական զգացմունքը. ես խոնարհվում եմ
նրա առաջ: Եվ այսօրվանից, երբ իմ մեջ խոսում է հայրու-
թյունը՝ դեպի թշնամին դարձել եմ ավելի անողորմ, որովհետև

ես կուզում եմ և իմ մանկիկի ապագա բարօրության համար, մեր հայրենիքի բոլոր մայրերի ու մանկիկների համար:

Այսօր մեր գունդը ստացավ նոր սրբիչներ, ճերմակեղեն և դուլպա և գիտե՞ք, թե ո՞ւմ արտադրանքն է դա... մեր Մաղկավանի: Զարմանալի է, չէ՞, հաղարավոր կիրոմետրերով հեռու գտնվող արտելը մարտիկներին նվեր է ուղարկում և այդ նվերը հասնում է այնտեղ, որտեղ որ ես եմ... Են բերկրանքով հագա ճերմակեղենը, որին կպել էր սիրելի ծաղկավանջիների ձեռքը ու լցվեցի հպարտությամբ, որ դուք Հայրենական Պատերազմին մասնակցում եք պլանների ղեկավարումամբ:

Իմ կողմից ու իմ մարտական ընկերների կողմից հայտնեցեք արտելականներին մեր շնորհակալությունը: Թիկունքին ցանկանում ենք ավելի լարվածություն, քանի որ ճակատը թիկունքով է կանգուն:

Համբույրներով՝ ձեր Թորոս:

(Ինձ էլ շատեք Թորոսիկ... շուտով հայր եմ դառնալու, անհարմար է):

2. Գ. Չգիտեմ ինչո՞ւ, այսօր ինձ պատել է անբաժանելի մի թախիժ ու ես կարոտով հիշում եմ մեր պարտեզը, որտեղ վերջին անգամ տնկեցի դեղձենի ու նշենի. ինչո՞ւ չեք գրում այդ ծառերի մասին: Հետո խնդրում եմ գրեցեք այն պայծառ արագիլի մասին, որ ամեն դարնան վերադառնում էր մեզ մոտ և օրորվում էր նրա բունը բարդու բարձր կատարին...

Անհասկանալի բան է պատերազմը... Ռմբակոծություն է, պայթյուն, մահանում են մարդիկ, իսկ ես մտածում եմ պարտեզի ու թռչունի մասին: Մահը, որ այնքան մոտ է, ահա այստեղ, քթիդ տակ, թվում է, թե քեզ համար չէ, ուստի համարձակ ես զնում կրակների, զնդակների միջով:

Նորից ձեր՝

Թորոս:

Երբ Մայրենին նամակը կարդաց, Մաքրուհի տուտուն երջանկութեան արցունքները սրբելով վերցրեց ծրարը ու գնաց Հայկանի մոտ:

— Ուզում եմ, որ դու Թորոսիկի... Թորոսի գրած այն մասը, որը վերաբերում է ճակատ ուղարկած մեր նվերներին՝ կարգաս արտելականներին: Հրաշք բան, Հայկան, մեր գործած գուլպաներն ու սրբիչները գնացել-եկել Թորոսիկի... Թորոսի ձեռքն են ընկել:

— Իսկ ինչո՞ւ ես ասում Թորոսիկ—Թորոս,—հարցրեց Մանուկ-Փիլիպոսը,—շատ կարոտի՞ցն է, ինչ է:

— Մանչս է խնդրել, որ իրեն այլևս Թորոսիկ շանվանենք: Շուտով հայր կդառնամ, անհարմար է,—ասում է:

— Վայ, կատուն ուտեր հայր դարձողին,—սրտանց ծիծաղեց ծերունին, ապա միանգամայն լուրջ նկատեց,—հայրությունն այդպես է, մարդուս կհարբեցնե, կխենթացնե... Մհերս արդեն սկսել է խնդալ, որ կխնդա, ասես արար-աշխարհ ինձ կտան, Մաքրուհի:

Աշխատանքից հետո արտելականները հավաքվեցին ահուժք ու Մաքրուհի տուտուն նրանց կարդաց Թորոսիկի նամակը: Թեպետ նամակն անհատական էր, սակայն մայրն ուզում էր, որ ամենքը մասնակից դառնային իր որդու ապրումներին: Եվ արդարև, ունկնդիրները լսում էին հաճույքով, չէ՞ որ Թորոսիկն իրենցն էլ էր, Ծաղկավանինը, ուստի նրա հույզերը կապված հայրութեան ու կարոտի մասին՝ իրենցն էլ էր՝ Ծաղկավանինը:

Պատերազմը նոր հասկություն էր առաջացրել մարդկանց մեջ. նրանք իրար նկատմամբ դարձել էին առավել սրտակից: Ընդհանուրի էր փոխվել խինդն ու վիշտը, ջնջվել էր պաշտոնական սահմանը. բոլորն ասես մի ընտանիք էին, շնչում էին մի սրտով:

Իսկ այն տողերը, որ գրված էին արտելի մասին ու Թորոսիկը նվերների համար հայտնում էր իր ու մարտական ընկերների շնորհակալութունը, արտելականների մեջ առաջացրին արժանապատվության բարձր զգացմունք:

— Կտա՛նք, ավելին կտանք, մեր կորովը շեք խնայի:

մեր ավուրներ չենք խնայի,—բացականչեցին ջուհիակները,—
նրանք այնտեղ արյուն կթափեն մեզ համար, մենք որ հոգ-
նենք, պակաս քնենք, մե՛ծ բան է:

Ու ինքնաբերաբար մտերիմ հավաքը փոխվեց ժողովի.
խոսվեց բացերի, պակասությունների մասին: Նշվեցին լա-
վագույն աշխատողները, ետ մնացողները խոստացան հաս-
նել նրանց. ու գործել «ամեն ինչ պատերազմի համար» նշա-
նաբանի տակ:

Առիթից օգտվելով եկավ ավանային սովետի նախա-
գահը:

— Մեր պետութայունն անընկճելի է,—ասաց նա,—մի
կողմից կռիվ է մղում, մյուս կողմից զբաղված է շինարա-
րական աշխատանքով: Ինչպես գիտեք, որոշում կա մեր ա-
վանը տրամվայով միացնել մայրաքաղաքին: Այդ նշանա-
կում է, որ մոտ ապագայում մեր ավանը իր օգասուն դիր-
քով ու ծաղկուն պարտեզներով դառնալու է քաղաքամերձ
հանգստավայր: Տրամվայ անցկացնելու գործում լայն մաս-
նակցություն պիտի ունենանք մենք. հետևաբար՝ հասարա-
կական աշխատանքի կարգով կվերցնենք բաժն ու քրուե-
զը և...

— Վերցրինք,—վճռական բացականչեցին ձայները:

— Գիտեմ, այսր գիտեմ, որ ակտիվ եք,—ծիծաղեց
Աղավնյակը,—և քանի որ շատ եք ակտիվ, ապա պատրաստ-
վեցեք գարնանը նույնպես հասարակական աշխատանքի
կարգով ելնել ջրանցք փորելու: Վերի սարից ջուրը պիտի
գա, ողողի Արարատյան դաշտավայրը: Այդ հսկայական աշ-
խատանքը դյուրից-դյուր, ավանից-ավան ու քաղաք՝ կա-
տարելու է ժողովուրդը:

2

Պատերազմը պատերազմ, այնուամենայնիվ ժամանա-
կին բացվեց գարունը ու տիրեց երկրին իր ողջ փարթամու-
թյամբ:

Ընկել էր դիակը ձագարածն փոսի մեջ, ու նրա կողքին

ժպտում էր կակաչը... Դիակը նայում էր հանդած աչքերով
ու ալլես չէր զգում գարունը....

Թորոսիկը տխուր մտտեցավ անծանոթ ընկերոջը, կա-
կաչը քաղեց, դրեց նրա վրա ու փորսող առաջ ընթացավ:

— Ես կշարունակեմ քո ընդհատված պայքարը և իմ
մեջ թող շարունակվի քո ընդհատված կյանքը, սովետական
դու մարտիկ,—մտածեց նա ու տեսավ մի ծառ... Ծառից
կախված էր մարդկային փորոտիք, իսկ կոտրված ճյուղին
նստել էր մայր արագիլը և կափկափում էր տխուր... Այդ
տեղում պայթել էր թշնամու արկը ու ծառը կանաչի փոխա-
րեն իր սև վերքն էր բացել աշխարհին... Թռչունը փնտրում
էր իր հյուսած բունը, սակայն չէր գտնում:

Թորոսիկը արագիլի կապակցությամբ հիշեց իրենց
պարտեզը, բարդին, որի կատարին մեծ, սալլաձև բնի եզեր-
քին հպարտ դիրքով կանգնում էին ծնող արագիլները, իսկ
ճուտերը նրանց շուրջը հավաքված՝ դեռ անհամարձակ նա-
յում էին աշխարհին...

Եվ ահա վարար գետի նման, որը եթե բաց թողնես
պարտեզի վրա մի լողկում կհեղեղի ածուները, բուն կա-
րոտը համակեց Թորոսիկի ողջ էությունը: Մի պահ, թեկուզ
մի պահ տեսնել մորը, կնոջը, շոշափել իր մոտավոր հայ-
րությունն ու վերադառնալ: Նա ընդհանրապես միշտ էր հի-
շում սիրելիներին, սակայն այդպիսի անզուսպ կարոտ դեռ
չէր զգացել ու այն էլ նման լարված լողկին, երբ դնում էր
հետախուզության:

Կարոտի խոհերով նա բավական ընթացել էր, երբ նրա
ուշադրությունը գրավեց հանգիստ մի տեսարան. ուժեղ
ծումից կիսվել էր հաստաբուն մի ծառ ու նրա կիսված բնի
վրա ասես գետնից հրաշքով բարձրացել, նստել էր մի հո-
ղակոշտ, որը, իհարկե, ուժեղածման հետևանքն էր և այդ
տեղաշարժված հողակոշտի վրա իր գոյությունը պահպա-
նում էր մի հեզիկ ծաղիկ՝ անմոռուկ...

— Քաղցր է կյանքը,—խորհում էր Թորոսիկը,—բույսն
անգամ չի ուզում մեռնել, անզոր տեղով դիմադրում է ար-
հավիրքին:

Եվ Թորոսիկի ողջ էութունը համակեց ապրելու, անպայման ապրելու տենչանքը:

Արդարև, այդ պատանու առաջ դեռ որքան շնաշահված հմայքներ կային.... Հաղթանակ, վերագործ, ընտանիք, սեր, հողնատանջ մորը հովանի լինելու պարտականություն, հայրենիքին զավակներ նվիրելու արժանապատվություն:

Մի անորոշ շշուկ ընդհատեց Թորոսիկի մտքերը, և նա զգաստացած շուրջը նայեց:

— Սեր, գարունը սեր է բերել, հետո ի՞նչ, որ կռիվ է, մահանում են մարդիկ,— գառնացած ժպտաց Թորոսիկը ու փափազեց այդ լուպին զգալ Մայրենու ձեռքերի շոյանքը. ամոթխած շուրթերի մտերմությունը նրա, մետաքս ուսերը նրա...

Այդ օրը նա ինչ որ շատ էր հիշում իր ընտանիքը, շատ էր դարձել զգայուն. ինչո՞ւ.... մի՞թե առաջին անգամն էր մեկնում հետախուզություն: Հապա ինչո՞ւ էր այդպես կառչում կյանքից:

Տեղերը թեպետ բուրոսովին անծանոթ էին, սակայն Թորոսիկը գնում էր բնագրով ուղիղ: Ահա գետը, հարկավոր էր անցնել. ահա բարձունքը, որի այն մասում տիրում է թըշնամին... Թորոսիկը մոռանալով անհատական ապրումները՝ սուզվեց ջրի մեջ, զգուշ դուրս ելավ մյուս ափը, մազլցեց բարձունքը, երբ հանկարծ, միանգամայն անսպասելի նկատեց գերմանական ամբուսություն... Արմուսությունից երևում էր գնդացրի բերանը. թշնամին ուզում էր անակնկալի բերել ձորում գտնվող մեր միավորմանը:

Թորոսիկը սարսափից քարացավ մի պահ, ապա նրա միտքը կայծակի արագությունով սկսեց գործել. ի՞նչ անել... ի՞նչ անել... նետվել ձորը, զգուշացնել մարտիկներին՝ ուշ է, մի լուպե ևս, ու արդեն կճարճատի գնդացիքը.... իսկ թռչնել, որ հնձյին մարտական ընկերները, որոնցից յուրաքանչյուրը կաթողին մոր զավակ է, հայր է, սիրեցյալ... Քանի՞ ընտանիք պիտի որբանա, եթե Թորոսիկը ելք չգտնի, բայց ի՞նչ ելք...

Նա կարծես կենտրոնանալու համար նայեց արևին ու արևի պես պայծառ մի միտք ողողեց նրա ուղեղը... Նոս դեմքը բոպեական ազդեցութեան տակ ստացավ վճռական արտահայտութեան, բայց չէ՞ որ իր այդ արարքով նա իլյացօցնի մորը, Մայրենուն... Ի՞նչ... Արդե՞ն. արդեն ունա՞յ գնդացիքը մեկ... Երկու...

— Երկու... ասես տենդի մեջ հաշվում էր նա, սուղում էր նա:

Սակայն ծաղիկն անգամ ուզում է ապրել... Իսկ եթե, ոչ, ոչ... Հարկավոր է... բայց չէ՞ որ... բայց չէ որ... Երեք, գնդացիքը ճարձատեց երեք...

Իսկ արևն այնպե՞ս փառավոր էր այդ օրը....

Անտառն այնպե՞ս կանաչ էր այդ օրը...

3

Չինարի թավ սուլբրի տակ նստել էին ծաղկավանդիք հանգստի: Բահերն ու քլունգները խմբվել էին իրար մոտ. ասես դրանք ևս հանգստանում էին: Դժվար էր ջրանցքը փորելու աշխատանքը, մանավանդ քարաշատ Հայաստանում. մեկ էլ տեսար՝ ծալվեց բահը, մեկ էլ տեսար՝ քլունգը թեքվեց ծանրության տակ, իսկ ապտոածները տեղահան անելն այնքան էլ հեշտ չէր, այն էլ կանանց համար. բայց, չնայած այդ ամենին, ահագին փորել էին նրանք և լայն ջրանցքը, թեպետ դեռ ցամաք, դռերին խոստանում էր առատ ջուր:

Մաքրուհի՞ տուտուն օջախ էր պատրաստել, դրել երկկանթանի մեծ կաթսան, աշխատավորների համար ճաշ էր պատրաստում: Ներկա էր և Մայրենին: Նա օգնում էր Մաքրուհի տուտունին:

Խոտերի վրա բացվեց լայն սփռոցը. արագաշարժ ազջիկները շարեցին հաց, պանիր, կանաչի: Խոր պնակներում լցվեց սշխարի մածոնից եփած թանապուր, որի երեսին Մաքրուհի տուտուն գեղեցկության համար ցանել էր նար-

գիզի դեղին թերթիկներ ու կապույտ ծաղիկ, որն առատու-
թյամբ աճում էր արտերում և այգիներում:

— Աշխարհ-աշխարհ, դու քո հավասով թան եփելը, —
ասաց Մանուկ-Փիլիպոսը, — թան, թան, թանանա, պապիկն
ուտի՛ զվարթանա: Մաքրուհի, ձեռք օրհնած, պնակս կրկնիր.
սակայն ինչո՞ւ դու չես ուտում. փայ անողին փայ շմնա՞ց:

— Պղինձը լեցուն է, ախորժակ չունեմ, — պատասխա-
նեց Մաքրուհի տուտուն, — այսօր ուղիղ երկու ամիս է, ինչ
Թորոսից լուր չկա...

Մայրենին հուզված թողեց գդալը, բայց կեսրոջը շվըշ-
տացնելու համար ակամա սկսեց նորից ուտել: Թորոսիկը
վերջին նամակում գրել էր. — հետախուզությունից վերա-
դառնալուց հետո մանրամասն կգրեմ... Հապա ի՞նչ եղավ...
ի՞նչ եղավ:

— Մաքրուհի տուտու, զուր ես տրամադրությունդ
պցում. ես ամբողջ ութ ամիս ամուսնուցս լուր չունեմ...
պատերազմ է, խճճված ճանապարհ, ինչո՞ւ անպայման
վատն ես մտածում, — խոսեց Հայկանը: — Կեր, կեր, որ եփած
սպասդ կոկորդներին շմնա:

Մաքրուհի տուտուն Հայկանի խոսքերից քիչ գո-
տեպնդված վերցրեց շերեփը, երբ նկատեց Մաղկավանի նա-
մակաբերին.

— Մանչս, գիր ունե՞մ...

— Այսօր չունես, հավանական է էգուց ունենաս, —
Մաքրուհի տուտուի բնավորությունն իմանալով աշխատեց
ուրախ ձևանալ նամակաբերը, — իսկ թերթը տա՞մ, թե՞ տուն
տանեմ:

— Տուր, տուր կարդանք, — ասաց Աղավնյակը և վերց-
նելով «Սովետական Հայաստան»-ը՝ արագ աչքի անցկացրեց
Սովինֆորմբյուրոյի հաղորդագրությունը, ապա նրա ու-
շադրությունը կենտրոնացավ կառավարական որոշման
վրա... Նա կարծես տեսողությանը շհավատալով կարդաց եր-
կու, երեք անգամ ու նոր միայն համոզվելով՝ զսպանակի-
պես վեր թռավ.

— Կեցցե՛, կեցցե՛ Թորոսիկը:

Մաքրուհի տուտուն ու Մայրենին Թորոսիկի անունը լսելով՝ առաջ վազեցին:

— Ի՞նչ... Թորոսիկը ի՞նչ:

— Մարդը Սովետական Միության հերոսի կոչում է ստացել, իսկ դուք նստել, գուռնա կփչեք... Ահավասիկ, խոշոր-խոշոր տառերով՝ Թորոս Հեթումի Խերիբեգյանին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին, — բացականչեց Աղավնյակը թերթը ցույց տալով:

Երջանկուծյունից տառ չէր տեսնում Մաքրուհի տուտուն. իսկ Մայրենին ժպտում էր ասես երազում ու վախենում էր արթնանալ... Ոչ, երազ չէ. ահա ծաղկավանդիք իրար են անցել, անսովոր խինդից գրկախառնվում են իրար հետ, շնորհավորում միմյանց:

— Մեր ավանի տղան... պատկերացնո՞ւմ եք՝ մեր ավանի տղան, — խանդավառ ձայնեց Աղավնյակը, սակայն ո՞ւմն էին պետք բառերը....

Մայրենին զգում էր, ինչպես երանության արցունքները սեղմում էին կոկորդը, ու նա այնպե՛ս ուզում էր լալ...

— Բայց հետաքրքիր է, թե ինչու համար է նա արժանացել այդ բարձր կոչման, — հարցրեց Մայրենին՝ խինդից սթափվելով, — Փիլիպոս աղբար, թերթը տա՞ք, գուցե գրված է պատճառը:

Մանուկ-Փիլիպոսը նրա կոկոնած աչքերին նայելով՝ ասաց.

— Դու աչքերդ լվա, մինչև ես նայեմ: Ախ, կիներ, կիներ, դարդեն կուլան, խինդեն կուլան... առաջ լիներ՝ ձեզ կասեի թույլ արարած, բայց հիմա ձեր գործը կանեք, ձեր էրիկներու գործը կանեք... ախ, կինե՛ր, կինե՛ր, — հրճվանքով կրկնեց նա, — ակնոցներս, ո՞ւր են ակնոցներս, — անհանգստացավ նա, շուրջը փնտրելով:

— Ճակտիդ է, Փիլիպոս պապի, — ծիծաղեցին աղջիկները:

Ծերունին ժպտալով ակնոցներն իջեցրեց քթին, վերցրեց թերթը և ահա դողացին նրա ձեռները...

Մաղկալանցիք զարմացած իրար նայեցին... Գունատ-
վում է Մանուկ-Փիլիպոսը, ինչո՞ւ...

Մայրենին ծերունու անսովոր դեմքից այլայլված առաջ
նեւագեց. Մանուկ-Փիլիպոսն անուղղակի փորձեց պահել
թերթը, սակայն Մայրենին խլեց այն:

— Հարսու... Կարդա տեսնենք մանչուս հո բան չի՞ պա-
տահել, — վատ նախազգացումից երերաց Մաքրուհի տու-
տուն:

Մայրենին մշուշված աչքերով նայեց թերթում տպված
ակնարկին ու քարի պես անշունչ զարնվեց գետին...

— Սիրեկան մանչս, — գոռաց մայրը ու նրա աչքերում
չերեաց ոչ մի կաթիլ արտասուք...

«Երբ Թորոս Խերիբեգյանը գնում է թշնամու դիրքերը
հետախուզելու, հանկարծ նկատում է, որ գերմանացիք զըն-
դացրի բերանը դեպի ձորն ուղղած՝ ուղում են անակնկալի
բերել մեր միավորին: Թորոսը մարտական ընկերներին փըր-
կելու համար իր պատանի մարմնով խցում է թշնամու զըն-
դացրի բերանը...»

Կարմիր բանակայինները գրավելով այդ բարձունքը՝
վերցնում են խիզախ մարտիկի ծակծկված մարմինը ու թա-
ղում հենց այդ բարձունքի վրա... Պատանի հերոսի գերեզ-
մանի վրա մարտիկները դնում են դաշտային ծաղիկներ ու
երգվում են կովել թշմանու դեմ Թորոսիկի պես):

4

Աւ մեծ վիշտն ատամների տակն առած անկողին ընկավ
Մաքրուհի տուտուն:

Եկան հարևաններն ու ծանոթները, եկան Թորոսիկի ըն-
կերները մխիթարելու:

— Հայրենական Պատերազմ է. եթե իմ հայրը, քո ա-
մուսինը, նրա որդին իրենց կրծքով չպաշտպանեն վեհն ու
գեղեցիկը, հապա ո՞վ պաշտպանի... Թորոսիկը, այդ խան-
դավառ պատանին, այնքան էր սիրում հայրենիքը, որ գի-
տակցաբար դեմ եկավ մահվան, — փորձեց սփոփել Աղավնյա-

կը.—նրա շքանշանը հավերժ է զարդարելու նրա կուրծքը. այդպիսի կուրծքը, ինչքան էլ դադարի բարախելուց, անմահ է:

Ներկաները ազդված լաց եղան, սակայն Մաքրուհի տուտուռի աչքերում արցունք չերևաց: Նա միայն շորացած շուրթերով խնդրեց, որ իր անկողինը տեղափոխեն տղայի սենյակը: Նա պառկեց երեսով դեպի լուսանկարը ու նայեց երկար... Թե ի՞նչ էր խոսում մայրը Թորոսիկի հետ, այդպես անմտուհի, դժվար էր ասել, սակայն ամեն անգամ, երբ նա պատկերացնում էր, որ անշափ ավլուհով լեցուն իր որդին այժմ վրան քաշած մթին մի թումբ՝ հող է դառնում հողի տակ, ցնցվում էր ողջ էությամբը: Բայց ահա Թորոսիկը նայում է այնպես անխոռով ու ջերմ, որ մայրն ակամա նահանջում էր ծանր մտքերից ու գալիս այն հաստատ համոզման, որ նման որդին իրոք որ չի կարող մահանալ... Նա նորից կա, այնտեղ է... նա նորից է շարժվում Բանակի հետ Արևելքից Արևմուտք:

Ու Մաքրուհի տուտուն գիտակցաբար ուզում էր զսպել իրեն, բայց մեկ էլ հանկարծ ծնողական զգացմունքը վերցնում էր վեր.

— Սիրական, մանչա... ինչո՞ւ ծեր մորդ թողիր, եղնիկ կինդ թողիր, գնացիր...

Թորոսիկը նայում էր հանդարտ, կարծես ասում էր.

— Հայրենիքի սերը բարձր է ծնողից, կնոջից, նույնիսկ սեփական կյանքից:

Մաքրուհի տուտուն անզոր էր պատասխանելու:

— Մաքրուհի, գոռում, դու քեզ զսպիր, որ հարսդ դանակի չերթա, — խնդրում էր Մանուկ-Փիլիպոսը, — ցավդ խիտ է անհատակ, գիտեմ, բայց սիրտի մխիթարվես նրանով, որ մանչդ հայրենիքի համար է տվել անուշ կյանքը...

Մայրենին անկշունում կծկծված՝ ոչ լալիս էր, ոչ խոսում: Քարացած միճակում նա այնքան էր անձանաչելի ու մայրությամբ գեղեցկացած դեմքն այնքան էր գունատ... Բնկերուհիները նրա շուրջը խմբված փորձում էին գեթ մի բաժակ կաթ լեցնել բերանը. երկու օր էր, ինչ ամենակին բան

չէր կերել, սակայն ատամները ամուր սեղմվում էին իրար
ծրևում էր, որ հոգեկանից բացի նրան գալարում էր ֆիզի-
կական սուր ցավը:

Մայրենու շուրթերը հանկարծ կապտեցին ու նրա կ-
կորդից դուրս ելավ խեղդված մի ձայն... Փորձառու կանայք
իսկույն իրար անցան... Վաղաժամ երկնում էր Մայրենին.
հոգեկան ցնցումն արագացրել էր ծնունդը, իսկ դրսում
այնպե՛ս խավար էր. անսպասելի բարձրացել էր քամին,
բարդիները զարնվում էին միմյանց. արծաթաշաղ փշատենիք
կոծվում էին:

Մենդատունը հեռու էր: Մայրենին կորցնում էր իրեն:
Մաքրուհի տուտուն երեքալով ոտքի ելավ: Տանը պատեց
խորհրդավորութուն: Սպանվել էր Բորոսիկը, ծնունդ էր առ-
նում նրա որդին... կանաչում էր նոր ընձյուղ...

Ու մեքենան սալի պես դանդաղ պատռելով գիշերվա
մոթը՝ կանգ առավ ծննդատան առաջ: Մաքրուհի տուտուն
ու Հայկանը Մայրենուն գրկած ցած բերին: Բժշկուհին ան-
միջապես ընդունեց նրան՝ պառկեցնելով ձյունաթույր սե-
ղանին: Իմանալով երիտասարդ կնոջ վիճակը՝ նա ամեն
կերպ աշխատում էր մեղմել նրա ցավերը, մինչդեռ թույլու-
թյունից ընդհատվում էին Մայրենու մղիչ ուժերը...

Բժշկուհին անհանգիստ կերպարանք ստացավ: Գործի-
քը Մայրենու որովայնին դնելով նա ուզեց ստուգել երեխայի
շնչառությունը. Ի՞նչ... Ի՞նչ... Համոզվելու համար նա լսեց
նորից և երբ կասկածը դարձավ փաստ, հուզված ինչ որ
շնչաց մանկաբարձ քույրերին:

— Սիրելիս, հավաքիր ուժերդ, — խնդրում էր բժշկու-
հին, շույելով. ծննդկանի դեմքը, որը կարծես դեղնավուն
մարմարից էր կերտված: Նրա աչքերի տակ ձգվել էին սև ու
խոր ակոսներ, իսկ շուրթերը կապտել էին:

Դրսում սպասում էր Մաքրուհի տուտուն. թեպետ նրան
աթոռ էին տվել նստելու, և կողքին պահապանի պես կանդ-
նել էր Հայկանը, սակայն նա դժվարությամբ էր կարողա-
նում նստած դիրքը պաշտպանել: Ինչքան որ նրան հորդո-
րում էին գնալ տուն, սպասել ավիտիսի, նա համառում էր

Այդտեղ ավելի մտա էր հարսին, մտա էի Թորոսիկի զավակին... մինչդեռ Թորոսիկի զավակը վտանգի մեջ էր... Մայրենին շարունակ ուշաթափ էր լինում: Բժշկուհին փորձեց սրսկումներով առաջացնել արհեստական զորություն, սակայն անօգուտ: Նա ամեն կերպ ճգնում էր փրկել մանկիկին, մորն ու մանկիկին. սպանվել էր հայրը, գոնե ծնունդ առներ երեխան:

Մայրենին շնչում էր հազիվ: Դավաճանում էին վերջին ուժերը: Բժշկուհին ելք էր որոնում: Ոչ, նա չի թողնի, որ մահանա զավակը: Բայց ի՞նչ անել. կեսարյան հատում: Բարդ է գործողությունը, իսկ ժամանակը վճռական է, ուրիշ միջոց է պետք: Արագ:

— Պատրաստեցեք արցանները, — սասց նա:

Մանկաբարձ քույրերն իսկույն անցան աշխատանքի: Բժշկուհին ծննդական սեղանի առաջ գրավեց իր տեղը: Նրան պատել էր զարմանալի հուզում: Չնայած իր երկարատև տարիների փորձին՝ արցանը դողում էր նրա ձեռքում:

Կենտրոնանալու համար նա ամուր սեղմեց ծնոտները: Զույգ կողմում կանգնեցին քույրերը: Արցանները ներսում դուռ՝ ձեռների նման բռնեցին մանկիկի գլուխը ու կամաց-կամաց դուրս քաշեցին:

Կավեց մանկան սուր ճիչ: Չայնի վրա Մայրենին դժվարությամբ բացեց մշուշված աչքերը ու նրա արնաքամ դեմքին խաղաց փոքրիկ մի ժպիտ: Նա նույնիսկ բարձրացրեց գլուխը՝ տեսնելու Թորոսիկի մանկիկին, սակայն թուլացած վիզը չբռնեց նրան:

— Տղա է, ահա, ու որքան կլորիկ, — ուրախ բացականչեց բժշկուհին՝ երեխային մորը ցույց տալով:

Մայրենին նորից ժպտաց, այս անգամ ավելի երկարատև ու անմիջապես ղեպի դուռը նայելով՝ հիշեցնել տվեց Մաքրուհի տուտույին: Բժշկուհին նորածինն նժար դնելով իսկույն միջանցք ելավ:

— Աչքերնիդ լույս... աչքերնիդ լույս:

— Մա՞նչ է, — հարցրեց Մաքրուհի տուտուն:

— Մանչ է, — նրա միաբը հասկանալով պատասխանեց

բժշկուհին, — Թորոսիկդ այսօր երկրորդ անգամ աշխարհ
եկավ... Սպասեցեք, դեռ սպասեցեք, — խորհրդավոր ավելաց-
րեց նա և շտապ ներս մտավ:

Մայրենին արդեն բավականին զգաստ էր, երբ նրան
դարձյալ գալարեց ուժեղ մի ցավ: Բժշկուհին նրա վախեցած
գեմքին նայելով ժպտաց ու կրկին գործի դրեց արքաննե-
րը... Դարձյալ լավեց մանկան ճիշ ու այս անգամ լույս աշ-
խարհ եկավ մի գատրիկ...

Մայրենին նոր ճշի վրա զարմացած նայեց: Ահա իր զա-
վակները՝ աղջիկ ու տղա... Այդ Թորոսիկն էր մանկացել...

— Ահա և քեզ սփռփանք, — ջերմ նկատեց բժշկուհին:

Ու, չնայած կողմնակի մարդկանց մուտքը խտրիվ ար-
գելված էր ծննդարան, նա ներս հրավիրեց Մաքրուհի տու-
տույին ու գիրկը տվեց երկու խանձարուր...

Մաքրուհի տուտուն լալով գրկեց բարուրները յե փս-
կույն հիշեց երազը հին հայրենիքում... Գարուն էր հա-
մասփյուռ բուրմունքով. պարտեզում թիթեռների հետեփց
վազվզում էին երկու երեխա. մեկի անունը Վահան էր, մյու-
սինը՝ Ծիածան... Ահա նրանք, Վահանն ու Ծիածանը...

— Հապա վարդը... այն ի՞նչ վարդ էր, որ երազիս մեջ
ինձ տվին, — հարցրեց Մաքրուհի տուտուն:

— Վարդն էլ Թորոսիկն էր, որ բարի անունը թողեց
հիշատակ, — պատասխանեց Հայկանը:

Գ Լ Ո Ի Խ Ո Ի Թ Ե Ր Ո Ր Դ

1

Իր ողջ կարողութեամբ ճնշում էր Արարատեան գաղտավայրի շոգը: Հողն ասես հեռւմ էր տոթից՝ կորցնելով վերջին խոնավութիւնը: Պահվել էին թռչուններն ու սողունները: Հավերը ման էին գալիս կտուցները բաց: Զրերն անընդհատ գոլորշի արձակելով՝ ցամաքել էին. երբեմնի խոխոջուն առուններից տեղափոխվել էին գորտերը: Հրադդանը խեղճացած սեղմվել էր ժայռերի մեջ. նա կարոտով էր հիշում իր զովասուն մայրական տունը՝ Գեղամա գոգին խալտացող Սեանը: Ծաղիկները խանձվում էին շոգից, մինչդեռ պարտեզներն ու այգիները ծուլորեն անշարժացած արեւի տակ՝ ագահարար կլանում էին ջերմութիւնը. բարկ արև էր պետք, որպեսզի հյութով ու մեղրով լցվեին տանձն ու խաղողը:

Օրվա վերջին ձյունապատ լեռներից փչեց զովը: Հովացան շիկացած քարերը: Զորում կաքավները քնբույշ երգեցին: Աշխուժացած թևավորները զուրս ելան սամբուրներից, օդը լցվեց նրանց դալլալով: Մարդկանց ջրանախաշ դեմքին անգորր երևաց ու նրանք ժամացույցին նայելով շտապեցին ակումբ:

Հաչկանը նիստը հայտարարեց բացված: Օրակարգում կար միայն մի խնդիր. թշնամուն շախշախելու համար հարկավոր է ավելի շատ տանկ ու ինքնաթիռ: Զանազան ձեռնարկութիւններն ու հիմնարկներ հատկացնում են խոշոր

դումար: Մաղկավանի արտելը նույնպես ցանկանում է օգտակար լինել Հայրենական Պատերազմին: Կարմիր Բանակը խիզախությամբ առաջ է շարժվում. թիկունքը պետք է առավել լարի ուժերը:

Արտելականները լսում էին Հայկանին, և արդեն պարզ էր խնդիրը. ունեն տնտեսված. միջոցներ, փոխառության պարտատոմս. ունեն ռոճիկ: Կարող են նվիրել երկու, երեք ամսվա եկամուտ:

Մայրենին ունկնդրում էր արտահայտվող ընկերներին և ամբողջապես համաձայն էր նրանց: Թորոսիկին կորցնելուց հետո նա շատ էր փոխվել: Որքան որ մայրությունը պերճացրել էր նրա արտաքինը, այնքան սիրածի բացակայությունը թախիծով էր պատել վաղաժամ լրջացած դեմքը: Նա ասում էր՝ Թորոսիկի բացակայություն, բայց ոչ մահ, որովհետև քաջարի զինվորը որքան էլ սպանված՝ այնուամենայնիվ մահացած չի լինում: Հաղթանակից հետո Թորոսիկը կարող է ամենևին չերևալ, սակայն զգալ հաղթանակը: Այո, նա կարող է երբեք, երբեք շտեմնել Մայրենուն, բայց հրճվել նրա վշտի վեհությամբ ու զսպածությամբ... և վերջապես չէ՞ որ Թորոսիկը իր մանկիկների մեջ է, Մաքրուհի տուտույի ձյունափայլ մազերի, արցունքների մեջն է... Նա, ում համար որ լալիս են՝ մեռած չէ, այլ միայն հեռացած... միայն: հեռացած: Ու ամեն օր, ամեն օր Մայրենին սպասում է նրան, երեխաներին գուրգուռելիս համբուրում է նաև Թորոսիկի փոխարեն:

Թորոսիկը սիրում էր մաքուր աշխատանք, խստապահություն. այդպիսին է այժմ Մայրենին: Թորոսիկի տեղը պատասխանատու էր ու պատվավոր, այժմ այդ տեղը գրավել է Մայրենին:

Մեքենայացված ջուլհականոցի բանվորները համարյա ամենքն էլ բանակայինների կանայք են ու աղջիկներ, և Մայրենին իր պատերազմի շրջանի կադրերով պարզապես հրաշք է գործում: Չնայած պատերազմի հետ կապված դժվարություններին, պատերազմի հետ կապված ապ-

րումներին... Զուլհակները գործում են այնքան կտոր, որ Մայրենին նշելով նրանց օրական աճը՝ լցվում է աշխատանքային բարձր արժանապատվությամբ: Գրանցելիս նա բռնում էր գրիչը, Թորոսիկի գրիչը.... բացում էր մատյանը, Թորոսիկի սկսած մատյանը... և երբ նա նշում էր բարձր թվեր, հրձվանքի հետ նրան պատում էր տրտում... Ինչո՞ւ Թորոսիկը ներկա չիներ, որ ղգար իր ցեխի աճը... Չէ՞ որ նրան ուրախացնում էր արտելի ամենափոքրիկ նվաճումն անդամ:

Յեխը լի էր Թորոսիկի հուշերով, և Մայրենին գաղտաղնդի շուրթերին էր հպում գրիչը, որին դիպել էր Թորոսիկի ձեռքը... ձեռք, որ այնպես արագ գործել գիտեր ու այնպես ջերմ շոյել գիտեր... Ահա նրա հաշվիչը, նրա վճռական, խոշոր ձեռագիրը: Մայրենին նայում էր այդ ամենին, ու մեկ էլ նրա դուստ պարտաքինի տակ փղձկում էր սիրտը:

Նման ընկերներին նա այնպե՞ս ուզում էր լալ, լալ բարձրաձայն, չճնշվելով արցունքներից, մինչդեռ տանը նա աշխատում էր զսպել իրեն՝ Մաքրուհի տուտուռին չբռնանցնելու: Համար, իսկ աշխատավայրում քաշվում էր արտելականներից, որոնք նույնպես երիտասարդ էին, սիրածարավ, ճակատում ունեին ամուսին... Կային այնպիպիք, որոնք յուրալիններից երկար ժամանակ լուր չունեին. կային այնպիսիներ, որոնց ամուսինները նույնպես զոհվել էին հայրենիքին, ու նրանք վիշտը ատամների տակ առած գալիս էին աշխատանքի: Ինչո՞ւ բորբոքել նրանց վիշտը: Եվ վերջապես չէ՞ որ Մայրենու կարծիքով Թորոսիկը չի մեռել... Ուրեմն նա կա, հարկավոր է սպասել, միշտ սպասել...

Ու նա ծանր խոհերը թողած՝ մտնում էր ցեխը: Դազգահների անդուլ շխխիոցը, ջուլհակների արագաշարժ ձեռները, բարձր ժայռից գահավիժող ջրվեժի նման անընդհատ ձգվող սպիտակ կտորը մոռացության էին տալիս հոգեկանը: Նրա գեղեցիկ սև աչքերից մուժի պես ցրվում էր տրտումը, տեղը տալով այդարացի պայծառություն:

Մայրենուն կանչո՞ւմ են: Ո՞վ է: Խնդրեմ թող ներս գա: Եկել է «Սովետական Հայաստան»-ի թղթակիցը՝ առաջավոր

զուհակներէ մասի՞ն գրելու: ժպտում է Մայրենին: Բոլորն են առաջավոր: Ամբողջ ցեխն է առաջավոր: Ահա հինգերորդ ամիսն է, ինչ անհատական պլանները երեք հարյուր տոկոս սից չեն իջնում: Նկարեցեք ամբողջ ցեխը: Նկարեցեք ծերունազարդ Մանուկ-Փիլիպոսին, այդ ամենը նրա կադրերն են՝ վաթսուն տարվա մանուսագործ Մանուկ-Փիլիպոսի... Նկարեցեք տնայնագործ ջուհականոցի տատիկներին ու պապիկներին, որոնք փոխարինել են հայրենիքը պաշտպանող իրենց թոռներին: Գրեցեք Մաքրուհի տուտուլի մասին, այն սևապսակ մոր մասին. նա հայրենիքին է զոհել իր մինուճար որդուն և ծանր վիշտը մայրական կրծքում սեղմած՝ գալիս է աշխատանքի... Նա ալեղարդ տեղով ուզում է զգտակար լինել Հայրենական Պատերազմին. որդու հիշատակը հարգում է աշխատանքով: Նա գիշերները լաց է լինում, որովհետև Թորոսիկը միակ շառավիղն էր հայրական մեծ օջախի, սակայն այդ սուգի մեջ կա և սփոփանք, քանի որ Թորոսիկը վրեժխնդիր եղավ Սանասար պապի համար, հոր համար, նոր ու գեղեցիկ հայրենիքի համար և այն երկու կաթնաբուլբուլ մանկիկներին, որոնք հոր մահով աշխարհ եկան, վայելիլու հոր արյամբ ձեռք բերած բարօրությունը:



Պատ. խմբ. ԱՐՇ. ՔԱՐԱՅԱՆ,
Նկարիչ Ռ. ՔԵՂԻՍՏՅԱՆ,
Տեխ. խմբ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎՅ 03366, Պատվեր 561, Տիրած 4000,
Տպ. 6 1/2 մամ., հեղ. 4 մամ.,
Տրված է արտադրության
16/XII 1947 թ., ստորա-
դրված է տպագրու-
թյան 5/ V 1948 թ.

ՀՊՍԹ. Մինիստրների Սովետին կից
Պրիգրաֆ. և Հրատ. Վարչու-
թյան № 3 տպարան,
Երևան, Ալավեր-
դյան № 65

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տ ո ղ	Տ պ վ ա ծ է	Պ ետ ք է լի մի
13	17 ղ.	օտարու թ յ ա ն	հ ա յ ը ն ն ի ք
34	4 ն.	ք ի Ֆ ն	ք ի Ֆ ն
37	11 ն.	ա յ լ է	ա յ լ է

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220027918

A $\frac{\text{II}}{27918}$

ԳԻՆԸ 5 Ռ.